



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



957

958

959

960

613

---

Z-26



82-2

# ԵՈՒՆԿԻ

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԳԻՇԵՐՆԵՐԸ

---

**ԲԱՐԳՄԱՆԵԱՅ  
ՅԱՆԳՂԻԱԿԱՆ ԲՆԱԳՐԻ  
ԱՄՍԵՆԱԿ Գ. ՉԻՋՍԷԻԱՆ**

*Բ. Կ. Կ. (Ա. Ն. 1859 թ. 31/42)*



**ՀԵՏՈՐ Ե.**

---

**ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ  
ԳՈՒԻՅԵՆԻՑ. ԳԻՐԳՋԵԱՆ**

*ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ, ՉԻՆՃԱՆՃՆԻՍ*

— 1861 —

16203

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

**Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍԻ**

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ  
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆ ՈՒՊՈՂՍՈՑ

**Տ. Տ. ՍԱՐԳՍԻ**

ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ՍՐԲԱԶԱՆ  
ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍԻ

10045-57



ՀԱՆԳԻՍ

ՊԵՏՐՈՍԻ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ  
ԱՌԱՔԻՆԱՍԵՐ ԵՒ ԱՆՋՈՒԳԱԿԱՆ  
ԱԶԳԱՍԻՐԻ



Ի ՍԳԱԼԻ ՅԻՇԱՏԱԿ

ՍԻՐԵԼԱԳՈՒՆԻ ԵՒ ԱՌԱՔԻՆԻՈՅ ՀՕՐ

ՊԵՏՐՈՍԻ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ

ԿՍՆԻՆԵՆ ԶԱՅՍ ՄԱՀԱՐՁԱՆ

ԵՐԿՈՔԻՆ ՀՕՐԱՄՈՅՆ ՈՐԴԻՔՆ

Քաջատոհմիկ պայագատք

ԲՈՎՄԵՍ ԵՒ ՄԷՔԱՅԷԼ

Որ արդեամբք անմոռաց յասպարիղի կենացդ անձուկ  
Պսակելով գեղապանձ դչափով աւուրս քո վաղանցուկ,  
Տիրական 'ի հրաւէր' յանվերջ կենաց անյրաւական  
Կոչեցար 'ի գաւիթ' յարդանդ հողոյ նոր յորորան,  
Անդ զ'ի հող տխուր դարձին ըզդատակնիք նախազբոյց  
Լուծելով' դալ յարտաքս իբր ըզփիւնիկ մխրայարոյց.  
Եւ արդ ՎԷՄԳ մեղմաւնոյթ ընդ արաստոյ հանդէսս վիմաւ,  
Ուր յորդեն գետք աչաց իբր ըզվտակս առ Եդեմաւ:  
Աւանիկ Քո պէս Հօր հանգունատիպ որդեակք սիրուն  
Նոր Արփույս յարշալոյս կանխեն 'ի յայց ի Քոյդ աճիւն,  
Բերելով սրտակէզ 'ի Նարկիսեան ծաղկանց տըխուր  
Հատընտիր ամիոփեալ 'ի ԵՄՂԿԱՐԱՆՍ յայս սգաբոյր'  
Ճոխագանձ Գամբանիդ 'ի յարդատիւր տխրանուէր  
Անդ որփուել լիաձեռն 'ի յիշատակ Հօրդ որդեսեր:

Կ. Յռնուար. 1861.





## ՅԵՌԵՂԵԱՆ

### ԹԵՐԳՄԱՆՁԻՆ



Արքան հաճելի է նկատելը՝ որ Ազգերնիս սկսած է որոշել, և ընտրել այն ամեն օգտակար աշխատութիւնները, որոնք ՚ի լոյս ընծայուած են լուսաւորեալ Աշխարհներուն մէջ. որք են, Անգղիա, Ամերիգա և Վաղղիա: Աւ ճշմարտոր խօսելով այս երեք Աշխարհները լիապէս կը վայելեն Արհեստական, Փիլիսոփայական, և Բարոյական անթիւ գրուածներ. որոնք շարունակ կը տեղան իրենց վրայ Տպագրութեան միջնորդութեն, Ժրաջան և ուսումնապերճ հեղինակներու միջոցաւ. որոնք օրէ օր աւելնալով վրայ են յուրախութիւն, և ՚ի յառաջագիտութիւն իրենց հայրենեացը, և հայրենակցացը, և յօգուտ հեռաւոր և օտար Աշխարհներու, և Ազգերու: Յիրաւի շատ են վերոյիշեալ հեղինակները. շատ են այն, բայց քիչ նոյն ժամա-

նակը այն հաղուազիւտ անձինքը, որոնք ինչպէս Առսինը կը վայլի Ասողերուն մէջ, անանի կը վայլին իրենք ալ միւսներուն մէջ:

Քիչ տեսած է աշխարհս, Հովերոս, Պըզատոն, Արխատուէլ, Միլթըն, Պայրըն, Ռասին, Աէլըն, Նունի, և ասոնց նմանները, որոնք ժամանակ ժամանակ յառաջ գալով Արիւրիս Տեսարանին վրայ, գրեթէ սև քողով մը կը ծածկեն անցեալ լուսաւորութիւնը: Ահա ասանկ եղաւ Անգղիոյ ալ, որ թէև գրահանութեան ասպարիզին մէջ յառաջընթաց էր, բայց և այնպէս Նունի իւր ճնաշխարհիկ խորհրդածութիւններովը գրեթէ յաւիտեան մուցուց Անգղիոյ իւր հին Փիլիսոփայները:

Նունի ազատ խօսեցաւ, և իւր խորհրդածութեանց մէջ շողոքորթութեան նշոյլը անգամ չի տեսնուիր: Այն իմաստունի պէս կը ճառէ, ոչ թէ գիտնականի պէս • իւր սրտին զգացումները կը յայտնէ, ոչ թէ իւր մտաց կարողութիւնը • սրտի կը խօսի, ոչ թէ իմացականութեան • իւր խօսքերը կարճ են բայց իմաստալից • իւր հետազօտութիւնները ազատ, ոչ թէ օրէնքի տակ բռնադատուած: Չունի Նունի այն սնտոինախանձը՝ զորն որ քիչ չեն կրեր շատ ուրիշ հեղի-

նակներ • Առնկ այնպիսի ոճ մը ունի , որ խիստ  
քաղցր և հաճելի է ունկնդրութեան , և թե-  
թե է սրտի • պարզ են իւր ենթադրութիւնները •  
Առնկի խորհրդածութեանց ունեցած անթիւ-  
աննման յատկութիւնները եթէ յիշել հարկ ըլ-  
լայ , իւր հեղինակութեանցը չափ գիւրջ մը շա-  
քաղբել հարկ է • արդ ընթերցողք թող նկա-  
տեն թէ սրտերնին հոգիներնին ինչ տարօրինակ  
հաճութիւն պիտի գգան գայն կարդալով (ու-  
շաղրութեամբ) , և թէ ինչ անգին և օգտակար  
դաղափարներ պիտի ստանայ իրենց իմացականու-  
թիւնը • Առնկի խորհրդածութիւնները կար-  
դալով կ'արթննայ հոգին , և կ'արխանայ միտքը •

Աստուծոյ էութիւնը , Հոգւոյ անմահու-  
թիւնը , Յաւիտենական կեանքը , Փիլիսոփայա-  
կան վսեմ ոճով , և միանգամայն առաքինութեան  
Զատագովութիւնովը պատասպարեալ , գրեթէ  
Առնկի բերնով առաջին անգամ հնչուեցաւ •  
և եթէ Աօլթէո չի խոնարհիր անոր առջև՝  
գոնէ կը պապանձի , և անկրօնք իրենց ամեն ի-  
մաստակարանութիւններովնին խաղք ու խայ-  
տառակ , լեղապատառ կը հալածուին\* • Աղգեր-

\* Առնկ թէև Անգղիոյ Եպիսկոպոսական եկեղեցւոյ մէկ

նիս կը փափաքի իւր մտաւորական կարողութիւնը զարգացընել լաւագոյն կերպով. — բարի . . . ուրեմն իրեն ամենակարևոր է այսպիսի ընտիր գիրք մը . որն որ թէև արդէն տպեալ է Տաճկական բարբառով, բայց և այնպէս երկու գլխաւոր պատճառներ կ'ստիպեն զմեզ որ բուն Անգղեարէն բնագրէն Արուսկը մենք ալ պարզ հայերէն աշխարհիկ լեզուաւ 'ի լոյս ընծայենք : Պատճառներուս առաջինն է՝ Տաճկերէն յիշեալ թարգմանութեան անհարազատ ըլլալը, ինչպէս որ պիտի ցուցընենք հանդիպած տեղերնիս : Իսկ երկրորդ պատճառնիս էր, լեցընել այն ամեն ազգասիրաց իղձը որոնց հաճելի է միշտ հայկական պերճ, և քաղցր ոճով ճաշակել այսպիսի աշխարհօգուտ աշխատութիւն մը :

Մեր կողմանէ այսչափ խօսելով ընթերցողաց ուշադրութեանը կը թողումք փորձել ըսածներնուս ստուգութիւնը :

անդամն էր, բայց և այնպէս ինքը բնաւ դէմ չի խօսիր ուրիշ քրիստոնեայ եկեղեցիներու, (բայ 'ի պապականութենէն) . իւր պաշտպանած նիւթերն են միայն Քրիստոնէութեան այն էական մասերն, զորոնք ամեն Քրիստոնեայ եկեղեցիներ ընդունած են :

**ՊԼՏՄՈՒԹՒՒՆ**  
**Վ Ա Ր ՈՒ Ց**  
**Ե Դ ՈՒ Ա Ր Դ Ե ՈՒ Ն Կ**  
**Փ Ի Է Խ Ա Մ Փ Ա Յ Փ**

---

Այս հռչակաւոր և ընտիր հեղինակը բժիշկ Եղուարդին որդին էր, որ իւր ուսումնականութեամբն ու դերաստիճանն Աստուածապաշտութեամբը հռչակաւոր եղած էր: Ինքը Սարուսի դահերէց, Ուինչէսթրի Ուսումնարանին անդամ, և ըրհամի առաջնորդն էր Հեամըլըրի մէջ: Եղուարդ Եունկ ծնած է ըրհամի մէջ 1681\* ին և Ուինչէսթրի Ուսումնարանին մէջ կրթութիւնն առած է, մինչև որ Օքսֆորթի նոր Ուսումնարանը հաստատուելով հոն ընդունուեցաւ, 1703 Հոկտեմբեր 13ին. իսկ հոն հազիւ տարի մը մնալով խրկուեցաւ Քորբու-Քրիսթի դպրոցը, ուր իւր ջանքովը Ազնուականութեան և Հասարակաց Ժողովոյ անդամ ըլլալու արժանաւորութիւնը ունեցաւ: Բէնէսինի Աքքեպիսկոպոսը զինքը օրէնսգիտութեան ընթացքին մէջ դրաւ 1708ին Ամենայն Հոգւոց Ուսումնարանին մէջ: 1714ին վարդապետութեան պաշտօնի հասաւ, և 1719ին օրէնսգէտ ընտրուեցաւ:

Այս միջոցին իւր ՊՈՒՍԸՐԻՍԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ 'ի լոյս ընծայուեցաւ, 1721ին ՎՐԷԺԸ և 1723 ԵՂԲԱՅՐՆԵՐԸ, և ասոնցմէ վերջը իւր սքանչելի բանաստեղծական ՎԵՐՁԻՆ ՕՐԸ, որն որ շատ մտադրութեան արժանացաւ Օրէնսգիտի մը գրուածքը ըլլալով: Ասկէց 'ի զատ շատերուն հաճելի եղաւ իւր ԿՐՕՆՔԻՆ ՈՅԹ կամ ՅԱՂԹԱՀԱՐԵԱԿ ՍԷՐՈՎԸ:

Եունկ այս աշխատասիրութիւններովը շատ բարձրաստիճան անձինքներէ բարեկամներ շահեցաւ, մասնաւորապէս Հիւարթըն գրքին մտերմութիւնը իրեն դրաւեց. որուն ձեռքովը թէև ջա-

---

\* Վինչէսթրի Բարգմանաթիանը Եունկի ծնունդը 1684ին ըԼԼԵԼ և Ե  
պարտէ. քանի որ Էյրլնպասրի Անգլեարէն Բնագիրը 1684ին:

նայ որ Քրէնչըսթրի ԲԱՐԼԱՄԷՆԹին մէջ պաշտօնական նիստ մը ունենայ, ըստ անօգուտ եղաւ իւր ջանքը:

Եունկի մտաւորական կազմուածքը խիստ հակամէտ ըլլալով Աստուածպաշտութեան, շուտով ձգեց իւր օրէնսդիտութեան պաշտօնը: Եւ ձեռնադրուելով 1728ին Ապրիլի մէջ եկեղեցւոյ օրինաւոր պաշտօնեայ մը եղաւ Գէորգ Բ. Թագաւորին: Իւր այս կրօնական պաշտօնին մէջ իւրաքանչիւն աշխատութիւնները եղան, ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ Եւ ՄԱՐԳԿԱՅԹԻՆ ԿԵՆԱՅ ՅԱՐԳը. 1730ին Ուելուինի առաջնորդութիւնը իրեն յանձնուեցաւ Հէրթֆօրտշրի մէջ 300 լիրա տարեկանով, միանգամայն իրեն յանձնուելով երկրին իշխանութիւնը: 1731ին Եունկ ամուսնացաւ Պէթթի լի տիկնոջ, որ գնդապետ լինէն այրիացեալ էր. և իջֆէլտի կոմսին աղջիկն էր, Եունկ անկէ զաւակ մը ունեցաւ: Եունկ անանց նկատելու իւր բարձր աստիճանը, Վալսի դուքսին մտերիմը ըլլալը . . . ընաւ չաշխատեցաւ աւելի բարձր պաշտօնի մը հասնելու, ու իւր ութսնամեայ հասակին Վալսի եկեղեցւոյն մէջ սկսաւ եկեղեցականութիւն ընել:

Եունկի բանաստեղծական գիշերային սքանչելի խորհրդածութիւնները, իւր ամուսնուոյն և անոր մէկ արու և մէկ աղջիկ զաւկընեալուն (զորոնք Պէթթի լի իւր առջի ամուսնէն ունէր) իւր արու ետե սուղ միջոցի մը մէջ կենազրաւ ըլլալուն (1741) արգասիքն են:

Եունկ իւր խորհրդածութեանց մէջ Կելանտրոս կը կոչէ իւր ամուսնուոյն որդին, և Ներկիզէ՝ անոր աղջիկը, որ իւր մայրը կորսնցընելուն վշտէն հիւանդանալովը՝ Եունկ զայն չի կորսնցընելու եռանդով տարաւ Գաղղիոյ հարաւային տաք կողմերը Քօնթրէլը քաղաքը. ըստ Ներկիզէ հոն հասնելուն պէս մեռաւ . . . Ժերունի և տարաբաղդ Եունկ ստիպուեցաւ զայն գիշերով առանձնակի գերեզման տանել, և իւր ձեռուընթերով թաղել այն սիրական աղջիկ զաւակը որ յիրաւի իւր ծերութեանը կրնար մխիթարիչ ըլլալ, և իւր այս բրածին պատճառքան էր որ ինքը լողորական մը ըլլալով ազատ չէր հասարակաց գերեզմանատան մէջ թաղել իւր աղջիկը: Եունկ աս մասին իւր երրորդ գիշերուան մէջ սրտակէղ կը հռաւչէ:

Եունկ ութսուն տարին անցուցեր էր երբ 'ի լոյս ընծայեց իւր ԿԱՐԾԻՔը ՆԱԽԿԻՆ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐՈւ վրայ, որուն

մէջ վսեմու թիւնը կը փայլի առանց նկատուելու հեղինակին ծե-  
րու թիւնը: Իսկ իւր վերջին բանաստեղծութիւն, ՅԱՆՁՆԱ-  
ՐԱՐՈՒԹԻՒՆ Ի ԿԱՄՍ ԱՍՏՈՒԾՈՅ անուն գիրքը, փրձառու  
թիւնը իւր ամեն էջերուն մէջ պարունակելով կը յայտնէ թէ,  
խոնջեալ մտաց արգասիք մը չէ այն: Եւունկ մեռաւ իւր ժողո-  
վրդապետական տունը Ռէլուինի մէջ 1765 Ապրիլ 12ին 84 տա-  
րեկան, և թաղուեցաւ նոյն եկեղեցւոյն բակը իր ամուսնւոյն քով:  
Իւր կտակին համեմատ իւր յուղարկաւորութեան հանդէսը կա-  
տարուեցաւ առանց զանգակ զարնուելու, և սգայից բազմու-  
թեան: Եւունկ իր կենաց վերջին օրերը ջնջեց գրի թէ իւր բոլոր  
գրութիւնները, Եւունկ ձգեց իւր բոլոր հարստութիւնը (որն որ  
բաւական շատ էր) իւր միակ որդւոյն (բաց 'ի մէկ քանի ողոր-  
մութիւններէ) Ֆրետերիկ Եւունկին, որ իւր անպատեհ վարուց  
պատճառաւ իր բոլոր կենաց մէջ հայրը չի տեսնելու դատա-  
պարտուած էր:

Եւունկ ճշմարիտ Վրիստոնէի մը ամեն յատկութիւնները ու-  
նէր, և իւր գործքերը կը յայտնեն իւր սիրտը: Եւունկ անգամ  
մը Սուրբ Յակոբայ եկեղեցին քարոզ տալու ժամանակ՝ ալ ինք-  
զինքը չի կրնալով բռնել նստեցաւ և արտասուեց: Իւր խօսակ-  
ցութիւնն ալ ճիշտ նման էին իւր գրուածքներուն, և գրեթէ  
իրեն բնական յատկութիւնն էր խօսել, մահուան՝ հանդերձեալ  
կենաց՝ դատաստանի օրուան և յաւիտենականութեան վրայ:

Եւունկ խիստ կը սիրէր իւր օրերը գերեզմանատունները շրջե-  
լով անցընել, իւր պարտիկին մէջ խորը մը ունէր հանգստանա-  
լու, ուր մտեցողը հետևեալ ընտիր խօսքը կը կարգար:

Անտեսանելի բաները մեզ չեն խաբեր:

Իւր ՎԵՐՋԻՆ ՕՐ անուն բանաստեղծութեանը մէջ Մե-  
լամաղճոտ—կոյս մականունն կուտայ իւր Մուսային:

Որուն ստուերամած տեսարանները շատ անգամ կը գրօս-  
նուն դամբաններուն, եւ գիշերային իյխանութեանը մեզ:

Սրէնս պատմագիրը կը պատմէ թէ Կրաֆթըն անգամ մը  
Եւունկին դանկ մը ընծայեր է, մէջը կանթեղով մը, զոր Եւունկ  
միշտ կը գործածէր: Եւունկ թէև մեղամաղճոտ էր, բայց շատ  
անգամ գնտակախաղութեան հանդէս ընել կուտար, որուն ինքն



ալ շատ անգամ ներկայ կը գտնուէր : Հաճելի էր իրեն երբեմն երբեմն պատահած ճարտարամտութեան արշաւանքները նկատելը, այս ըսածնուս կրնայ օրինակ մը ըլլալ իւր հետեւեալ վերտառութիւնը Վօլթէռի վրայ,

Դուն խիստ ուշիմ ես նաեւ լիբբ ու քեքեւանոգի,  
միայն մահուամբդ եւ մեղքովդ կը նմանիս Միլթընի:

Թէև յիշեալ այս վերտառութեան մէջ աւելի ատելութիւն կը նշմարուի, քան թէ հաճութիւն: Եունկի երգիծաբանութիւնները շարունակ ուղղուած են անհամեստներու, և անկրօններու դէմ: Իւր երգիծաբանութիւնները ՓԱՌԱՍԻՐՈՒԹԻՒՆ կամ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՂՁԱՆՔ անուն գործոց մէջ էապէս կը տեսնուին, և շիտակը խօսելով անթերի են անոնք:

Եունկի մտաց հանճարոյ նետերը ուղղուած են այն թեթեամտութեանց դէմ՝ որոնք անձնատուր եղած են նորասիրութեան, և այնպիսիներուն դէմ, որոնք կ'աշխատին ինչոր չեննէ՝ այն երևնալ : Եունկի գործերուն մէջ այնպիսիներուն կը տեսնենք յարմար և վայելուչ տիտղոսներ, դպչող և խայթիչ առածներ, և անհակառակելի ճշմարտութիւններ :

Եունկի գիշերային խորհրդածութեանց մէջ կը փայլի խիստ զուտ, և զօրաւոր մտաց աշխոյժ, և մարդկային մտաց գերազոյն ընդարձակութիւն . . . . ստոնք են Եունկի բանաստեղծութեան ամենէն հիանալի գեղեցկութիւնները: Իւր գիշերային խորհրդածութեանց մէջ կ'ըսէ քննիչ մը, Եունկ խիստ գերազանցեց նախկին բանաստեղծութիւններէն. ըստ որում զարդարուած են իւր գրուածները խորին խորհրդածութիւններով, և դպչող ակնարկութիւններով ձևացուցած է անպատասցեալ միտք մը, ուր երևակայութեան արգասաւորութիւնը երփներանդ և բազմաբուրեան ծաղիկներ կը ժողվէ: Ներեալ է ուրեմն որ այս գեղեցիկ խորհրդածութեանց շատը ստուերացեալ է սեամաղձութեան մթութեամբը, որով ոչ թէ ստեղծման այլ լոկ ազդեցութիւն կը պատճառէ հիւանդոտ մտքերու. իւր խորհրդածութիւնները ամենասիրելի Տեսարանով կը նկարագրեն սրտի զգացումները, մարդկային իրաց ունայնութիւնները, անոր անցաւոր փառքն ու զուարճութիւնները, և կը պարունակեն ամենազօրաւոր փաստեր հոգւոյ անմահութիւնը հաստատելու :

# ԵՌՆԿԻ ԳԻՉԵՐՆԵՐԸ

ԳԻՇԵՐ ԱՌԱՋԻՆ

ԿԵՆՍ, ՄԱՀՈՒԱՆ ԵՒ ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ԱՌ

ՄԵԾԱՊԱՏԻ ԱՍՊԵՑ ԱՐԹՈՒՐ ՕՆՍԼՈՒԻ

ԱՏԵՆԱԲԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅ ԺՈՂՈՎՈՅՆ

Ո՛հ՛ ամորարար քաղցրիկ բուն. . . ն՛ն՛ հոգնած  
բնութեան հանգստութիւն կը պարգեւէ . . . բայց  
ինչ օգուտ որ կը փախչի. ան ալ ընդհանութիւն  
պէս անանկ տեղեր գտնուելու պատրաստ է,  
ուր բարեբաղդութիւնը կ'գմայի: Իսկ կը մոռնայ  
քշուածը, եւ իւր քնքուշ թեւերովը սրբնբաց կը  
նեռանայ ողբոց եւ հատաչանաց ձայներէն. եւ կը  
բառի արտասուօք ջի բըջած արտեւանանց վրայ:

Կարճ (ինչպէս որ սովորաբար) եւ անհանգիստ

նիրհումես կ'արբընամ: Ո՛րքան երանելի ես ա-  
նոնք, որ ալ չեն արբընար . . . : Բայց այդ ալ  
ունայն, եթէ երազք գերեզմանաց մեջ ալ կը բա-  
փառին:

Կ'արբընամ ես, երազներու փոքորկայից ծովէն  
մագապուր, ուր իմ խորհուրդս՝ զարհուրած, երե-  
ւակայեալ բշուառութեան մէկ ալիքէն միւսին  
նետուելով, իւր դատողութեան ղեկը կը կորսնցը-  
նէ: Թէեւ հիմայ հանգստացայ, բայց ադէ, միայն  
բշուառութիւնս փոխուեցաւ, (դառն փոփոխու-  
թիւն) դժնդակագոյն փոխանակ դժնդակի:

Տիւր կարճ են իմ բշուառութեանցս համար,  
եւ գիշերը՝ իւր բազանորութեան կեղրոնին մեջ  
տակաւին լուսափայլ է իմ ճակատագրիս սե-  
զոյնին քով:

Գիշերը, այն սեաւ աստուածունին իւր եբե-  
նոսեայ գահէն, անճառագայթ վէհանճնութեամբ՝  
ննչող Տիեզերքին վրայ իւր կապարեայ գաւազանը  
ուղղած է:

Ի՛նչ մեռեալ լուսութիւն. ճրպիսի անդնդային  
խաւար. ուր ոչ աչք եւ ոչ ականջք իրենց հա-  
մար առարկայ կը գտնեն: Արարածք կը ննջեն,  
կարծես թէ ընդհանուր կենաց երակը դաղրած է.  
եւ բնութիւնը հանգիստ կ'առնու: Ահուելի հան-  
գստութիւն. ճի՛ իւր վախճանը գուշակող տեսա-

րան. բնոյ արդ' բնոյ' իւր գուշակութիւնը շուտով կատարուի: Ո՛վերին Տեսչութիւն, ալ ձգէ վարագոյրը, ալ չեմ կրնար համբերել:

Ո՛ լուսութիւն. ո՛ մթութիւն վեհանձն քոյրեր. ո՛ երկուորեակներդ այն հին գիշերին, որ խնամեց գլխափուկ խորհուրդը՝ դատողութիւնը, եւ անոր վրայ հիմնեց մտաց որոշումը (մարդկային ճշմարիտ վեհանձնութեան սխւնը). օգնեցէք ինձ դուք, եւ ես գերեզմանին մեջ ձեզի շնորհակալ պիտի ըլլամ. այս մարմինս ձեր իշխանութեան գերեզմանին մեջ պիտի իյնայ, իբրեւ նուիրական զոհ մը ձեր սուկայի դամբանին:

Բայց ի՞նչ էք դուք . . . . . :

Աստուանձ, Դու՛ որ նախնական լուսութիւնը հալածելով առաւօտեան աստղերը ցնծութեան ձայներով եւ խայտալով նոր երկրիս վրայ գետեղեցիք, Դու՛ որ մեկ խօսքով տարրացեալ խաւարին մեջէն այն կայծը նետեցիք՝ այն Արեւը. իմ հոգւոյս ալ իմաստութիւն սրսկէ. իմ հոգւոյս՝ որ առքեզ կը սաւառնի, եւ որուն ապաւինութիւնն ու գանձը Դու ես. ինչպէս ոսկին գանձն է ագահին, (որուն վրայ կը հսկէ), քանի որ ուրիշները կը ննջեն:

Սա մքին բնութեան մեջ հոգւոյն կրկին գիշերին մեջէն, մեկ զբութեան ճառագայթ մը խրկէ՛

որ յուսանորուիմ է. մխիթարուիմ: Ո՛հ առաջնորդէ միտքս, (միտք մը՝ որ կը ցանկայ իւր վայէն հեռանալ). առաջնորդէ զայն, կենաց է. մահուան զանազան տեսարաններուն. է. ամեն մէկ տեսարաններէն ազնիւ ճշմարտութիւններ ինձ ազդէ, է. թող անպակաս ըլլայ ազդեցութիւնդ իմ վարուցըս է. միանգամայն երգիս վրայ. սորվեցուր ինձ ուղիդ դատել, կամքս իրաւանց յարէ, է. իմ մտաց որոշումս հաստատէ. իմաստութեան հետ պաակեզիս, է. տուր այն ամենը, ինչ որ ինձ պետք է. որով քու վրիժուց գաւաթը ՚ի զուր բնդ չը բափուի այս բոլորանուէր գլխուս վրայ:

Ժամացոյցը մէկ կը զարնէ (1). մենք ժամանակին անմտադիր ենք, մինչէն որ չի կորսնցընէք. ուրեմըն ժամանակին լեզու տալը մարդկային իմաստութիւնն է. էս անոր ճայնը լսած ժամանակս՝ կը կարծեմ թէ հրեշտակին անհարկու ճայնը կը լսեմ, է. երէ ըստ օրինի լսեմ, այն՝ իմ մահուանս զանգակին հնչիւնն է. ո՞ր գացին անոնք. շրհեղեղէն առաջ եղողներուն քով. ասիկայ մեծ նշան մըն է որ մտադրութիւն կը պահանջէ: Ո՛րքան շատ պարտականութիւն կայ կատարելիք: Իմ յոյսերս

---

1. Կես գիշերէն մէկ ժամ անցած ըստ Եւրոպ.: Ծանօթութիւն Թարգմանչին:

է. վախերս կ'սրափին խռովելով, է. կենաց նեղ ծայրեն վար կը նային . . . Ի՞նչ բանի վրայ. — անյատակ անդունդի մը՝ անուէլի յաւիտենականութեան մը վրայ, որ անտարակոյս ինձ կը վերաբերի. արդեօք կրնայ մի յաւիտենականութիւնը իմս ըլլալ, բանի որ մեկ ժամու պարզեաներուն լոկ բոշակաւոր մըն էմ:

Մարդս ճրքան աղբատ է է. ճրքան հարուստ. ճրջափ մեծ, է. ճրջափ նուաստ. ինչ անհամաձայն է. ինչ գարմանայի, արդ ճրջափ անստորագրելի գարմանայի է Այն, որ զմարդ ստեղծեց: Այն՝ որ գանազան յատկութիւններ մեր մեջը հաւարած է. մարդս ընտիր հաւարում մըն է ընդհանուրէ է. որոշեալ օղակ մը արարածոց անձայր շղթային մեջ՝ ոչնչութենէն մինչէ. Աստուածութեան մեջ տեղը. երկնային ճառագայթ մըն է, ապականեալ է. անկեալ. ապականեալ է. անպատիւ, տակաւին երկնային անկախ մեծութեան ստուերացեալ պատկեր, փառաց ժառանգ մը, հողին անցաւոր զաւակը, անօգնական անմահ մը, աննշմարելի ճճի մը. որդ մը, է. Աստուած մըն է: Ես ինքրզինքիս մեջ կը շուարիմ. է. ինքրզինքիս մեջ կը կորսուիմ. խորհուրդս թէ. իւր բնակարանին մեջ՝ իբր օտարական վեր ՚ի վայր կը շրջի. գարմանայից, շուարեալ, թէ. իւր ստացուածքին մեջ. ինչպէս դատողու-

քիւնը կը տատանի: Ո՛հ մարդս մարդուն համար  
ինչ հրաշք մըն է. յաղթող տառապեալ մը. նհ...  
ինչ ուրախութիւն. ինչ սոսկում. ասոնք փոփո-  
խակի կը յաջորդեն, եւ կը շուարեցընեն գմարդ:  
Ո՞վ կրնայ իմ կեանքս պահպանել, կամ ո՞վ կըր-  
նայ կործանել. հրեշտակի մը բագուկը չի կըր-  
նար զիս գերեզմանեն դուրս քաշել եւ հրեշ-  
տակաց խումբը, զիս հոն չի կրնար բանտարգել:  
Աս հին մակաբերութիւն մըն է, ամեն բան զայն  
կ'ապացուցանեն: Քանի որ անուշ քունը իմ ան-  
դամներուս վրայ իւր իշխանութիւնը կը սփռէ.  
Ինչպէս իմ հոգիս ըստ հաճոյից կը շրջի դալա-  
րախիտ դաշտերուն վրայ. կամ տրտում տխուր  
առանձին՝ կը պտըտի անկոխ անտառները, կամ  
գահավեժներէն գլխի վայր կը բաւալի. փրփրած  
լճի մը մէջ կը լողայ կամ ժայռերէ վեր մագլցե-  
լով կ'էլլէ. դատարկ օդին մէջ կը պարէ. ծիծաղա-  
կան ձեւերով: Մտաց այս անգուսպ բնութիւնը եւ  
անսպառ աշխոյժը, քէէ քափառական, մարդուն  
բնութիւնը կը յայտնեն՝ քէ ան կոխուած հողէն  
նախապատիւ եութիւն մըն է, գործունեայ, միշտ  
վեր էլլող, խոյացող, անըմբռնելի, եւ իւր անարգ  
ընկերին անկումէն ազատ: Գիշերային լուսութիւնն  
անգամ հոգւոյս անմահութիւնը կը յայտնէ. գիշե-  
րային լուսութիւնը յաւիտենական օրուան անտու-

բերն է: Երկինքը մարդուս բարեբաղդութեանը համար ամեն բան կը պատրաստէ, խորունկ քունը կրթութիւն կուտայ, եւ այս երազներուն շրջումները ունայն ջէն: Արդ անկորուստները ինչո՞ւ իրենց կորուստին վրայ կ'ողբան, ինչո՞ւ քշուած խորհուրդը, անհաստական քշուածութեամբ իրենց գերեզմանին քով կը շրջի. հոն են մի հրեշտակները, հողի մէջ ժողուած են երկնային կրակները՝ նը՛նչողներ, կ'ապրին անոնք կ'ապրին քաջութեամբ երկրիս վրայ՝ անծին եւ անյղի (անստորագրելի), ուրեմն բող գրութեան աջքէն երկնային ողորմութիւն մը իմ վրաս բափի, որ իրապէս մեռելոց հետ կը սեպուիմ: Այս է ամայութիւնը, եւ առանձնութիւնը. իսկ գերեզմանք ճրբան անբոխայից են, եւ ճրբան կարեւոր. այս է արարածոց մելամաղձոտ վիրապը, տխրութեան ձորը, եւ Կիպրոսեան տխուր բախճութիւնը, Երկիր ցնորից. ունայն շութեր. երկրիս վրայ ամեն բան շութ է. իսկ 'ի հանդերձեյումն ամեն բան հութիւն. այլայլիւր յիմարութեան արգասիքն է. փոփոխութիւն ջեղած տեղը ինչպէս ամեն բան հաստատուն են: Այս է եութեան սկիզբը՝ արշալոյսը՝ մեր կենաց աղօտլոյսը՝ վայրագաւիքը: Կենաց տեսարանը որովհետեւ դեռ գոց է. մահը, այն գորաւոր մահը միայն կրնայ անոր անջրպետը վերցունել: Երբ որ այս ա-



նարգ հողէ զանգուածը կը շարժի, ան ատեն մենք ազատ գոյութեան ոգիներ կ'ըլլանք. բայց իրական կեանքէն քիչ մը հեռու, ոչ տակաւին լուսով պայծառացեալ. ապառնի սաղմ մը, որ պիտի ննջէ իւր արգանդին մէջ. մենք ոգիներ պիտի ըլլանք, մինչեւ որ կեղեւը կոտրենք. այն կապուտ կեղեւը. կենաց սկիզբը. (ն փոփոխութիւն) անմահից կեանք՝ մարդոց ալ (!):

Բայց տակաւին մարդիկ՝ յիմար մարդիկ հոս կը բաղեն իրենց ամեն խորհուրդները եւ ջնաշխարհիկ յոյսերնին՝ առանց մտադրութեան: Աշխարհի գերինէր՝ լուսնին տակ արգիլեալ. հոս՝ միայն իրենց կամքին քեւերովը կը մնան, քանի որ Երկիրքէն քեւաւորուած են դեպ 'ի յաւիտենականութիւն սաւառնելու, եւ հասնելու հոն՝ ուր Սերովբէք անմահութիւն կը հաւաքեն կենաց զմայլելի ծառին վրայ՝ Աստուծոյ արոտին քով. ինչ Ամբրոսիական ոսկեղէն հրճուանքներ. իրենց կատարեալ ճառագայթներովը հոն հաւաքուած են, հասուն՝ ա-

1 Եունկ այս պարբերութեամբ կը յայտնէ որ մարդս մահուանէ վերջը, անմիզապէս երանութեան երկիրը չի պիտի երբայ, այլ պիտի սպասեն ժամանակ մըն ալ հոն ուր մեր եկեղեցին կայանք կանուանէ, մինչև որ կապուտ կեղեւը կոտրէ, այսինքն յարուրիւն առնէ դատաստանի համար: Ծանօթ. Թարգ.:

մեն իրաւաստիքաց համար. հոն, ուր վայրկեանական տարիք այ չի կան. ուր, ժամանակը՝ ցաւը՝ փոփոխութիւնը եւ մահը կը հայածուին. . . : Ի՞նչ, միքէ վարսուն տարիներուն անցնիլը մարդկային մըտքէն կը վանէ յաւիտեանականութիւնը, եւ անմահ հոգիները հողի հետ կը հաւասարէ: Անմահ հոգի մը՝ իւր ամեն կրակը վատնած, իւր գօրութիւնը անհնարին ծուլութեան մէջ աւարտած, վրդովման մատնուած, գէրի եղած կամ այլայլած, այս տեսարանէն սաստուած, կը նմանի Ովկիանոսին ամենէն անարկու ալեկոծութեանը. անկարող է փետուր մը շարժելու, կամ ճանճ մը ընկղմելու: Ռոն վրայ կը թափի այս նախատիւնը. իմ վերաս. ինչպէս իմ սիրտս աշխարհիս կապուած էր, նն՝ որքան իմ դժգոհ հոգիս, անճնակապանք եղած էր, ինչպէս որդի մը նման ես ամեն կողմանէ շրջապատեալ էի արծաթեղէն խորհուրդներով, որոնք կայտառ էրէւակայութիւնս հիւսած էր, մինչեւ որ խաւարացեալ դատողութիւնս ինկաւ փափուկ էրէւակայութիւններով ամպամած իւր անվախճան հանգստութիւնը հոս գտնելու, եւ տակաւին ջուղղեց իւր թեւերը Երկինք հասնելու:

Գիշերային տեսիլները կրնան օգնել մեզ. (ինչպէս յիշեցինք). բայց արքուն եղած ժամանակներունս երազները մահացու են: Ի՞նչ անհնարին բա-

ներ՝ երազեցի. (միթէ քունը ասկեց աւելի կրնայ ընել). փոփոխակի ուրախութիւններ, տեսական հաճութիւններ՝ տատանող ալեաց վրայ. յաւիտենական լուսափայլութիւն՝ կենաց փոթորիկին մեջ. իմ մտացս յափշտակութեանց միջօրէն երեսակայեալ ուրախութեանց փողփողուն օրոցներով ինչ վաճառարդ էր. գուարճութիւն գուարճութեան ետեւէ՛ անվերջ երեսոյթով, մինչեւ որ լսեցի մահուան հնչիւնը, որուն երկաթի լեզուն անղաղար միլիոնաւորներ կը կանչէ ամէն օր իւր տապարին. իսկոյն սքափելով արթնցայ, եւ ինքըզինքս մատնուած գտայ. ո՞ր էն հիմայ իմ ցնորական մտացս երեսակայած շքեղ կահ կարասիները. ոստայնացեալ տնակ մը՝ փլիքլած պատերով, կործանուած, եւ տեղ մը ինձ սեպհականեալ էր: Մամուկին ամենանորբ բելը՝ ջուան մը եւ մալուխ մըն է՛ մարդը երկրային գուարճութեանց հետ կցող փափուկ կապին քով, գոր թէթեւ զեփիւուն անգամ կը բրցունէ:

Ո՛հանդերձեալ կենաց յարակայ, յաւիտենական, անսահման օրհնեալ տեսարաններ. փոփոխակի յաջորդող գուարճութիւններ. դուք (նվ զանոնք վայելողներ) որ այսչափ յափշտակեալ էք, կը սուկնք վախճանէն, այդ անարգ խորհուրդը ձեր բոլոր ուրախութիւնը կը վերջացցնէ. եւ լուսոյ քա-

զաւորութենէն զձեզ կ'արտաքսէ: Դուք ապահով էք. բաղդին դիւրափոփոխ անուռն ցաւառիք զօրութիւնը՝ միայն այս տատանող գունտին վրայ սփռելով՝ տխուր փոփոխութիւն յառաջ կը բերէ՝ ամեն մէկ ժամը կը վրդովէ. Եւ հագիւ թէ աղէկ կամ լաւագոյն դէպք մը յառաջ կը բերէ, աւելի մահացու քան թէ ճակատագրին բնական արգասիքը: Ամեն մէկ վայրկեան իրեն նախանձորդ մանգաղը ունի. ժամանակին անարկու կտրոցը լայնատարած եղծումով, Տերութիւնները անգամ արմատախիլ կ'ընէ, Եւ ամեն մէկ վայրկեան իրեն փոքրիկ գեներովը ընտանեկան քաղցրիկ հանգրստութիւնը կ'աւրէ, Եւ երկրաւոր հաճոյից ամենագեղեցիկ կոկոնը կը խլի:

Երանութիւն. երկրաւոր երանութիւն... հըպարտ խօսքեր Եւ ունայն. անորոշ դաւաճանութիւն մը՝ Աստուածային վճռոյն դէմ. յանդուգն յարձակում մը Երկնից իրաւանց դէմ. . . :

Ես ձեռք անցուցի ցնորքը, բայց զայն օդ գըտայ. ո՞ն՝ երանի թէ փափաքներս քննած ըլլայի, քանի քանի նիզակախոցք սրտես պակաս պիտի գտնուէին:

Մահ. ամենի Տէրդ համայնից, տերութիւնները կործանելը Եւ աստղերը մարելը քեզի կը վերաբերի. Արփին անգամ քու բոյլտուութեամբդ

կը փայլի. Եւ որ մը պիտի գայ, որ գայն ալ իւր սահմանէն իջեցընես: Ո՛հ այսչափ անարկու կոտորածներուդ մեջ, ինչո՞ւ քու մասնաւոր սարսուռուդ ինծի պէս անարգ մեկու մը վրայ քափեցիր. ինչո՞ւ յատուկ թշնամութեամբ ինձմէ վրեժ առիր. ո՞ն անյագութիւնը նետածից, միթէ բաւ չէր մեկը, որ երէք նետոյ միատեղ նետեցիր, Եւ երէք անգամ իմ խաղաղութիւնս արեցիր. այս երէք անգամ, լուսինը երէք շրջան դեռ. չի լըմնցուցած:

Ո՛ր Կիւնթիա\*, Էր տխուր. միթէ քու թշուառ ընկերդ (զիս) կ'ողբաս. կը ցաւիս՝ տեսնելով քու շրջանիդ մարդկային կենաց վրայ յարուցած անդադար փոփոխութիւնը: Ո՛րքան կը պակսին՝ բաղդին զմայլումէն փոխ առած երանութիւններս. անցաւոր պջրանք. ոչ թէ առաքիւնութեան տուրք. Եւ ոչ հաստատուն երանութեան լայն արեգակնային շառաւիղը:

Ամէն տեսակ կացութեան՝ տեղւոյ Եւ ժամու մեջ՝ ամէն տեսակ երանութեան անթիւ խորհուրդները ինտո՞ր որբ Եւ այրի կը լմնան:

Խորհուրդը՝ աշխատասէր խորհուրդը՝ խիստ ժրաջան իմ խաղաղութեանս համար՝ շատոնց սահած ժամանակին մութ դունակէն քաղցրութեամբ

---

\*Կուսութեան Եւ որսորդութեան չատուածուհի:

զիս կ'առաջնորդէ գիշերային մքուքեանը մեջ. մարդասպանի մը նման (ինչպէս որ փորձը կ'ըստուգէ) կը մոյրեցընէ, (ապիրատ ասպատակաւոր) կը տանի դէպ 'ի անցեալ հաճոյից. յօժարութեամբ քշուածութեան մեջ ջարաջար կը շեղի. եւ անհոն անասպատ կը գտնէ, ուր կորսնցուցած էրանութեանցս ոգիին կը հանդըպի... ճր աստիճան խաբէութիւն: Քաղցր երջանկութեանս կորսուած փունջերուն վրայ կ'ողբամ էս. կ'ողբամ էս իմ անցեալ ճակատագրիս հարստութիւններուն վրայ. կը դողդըղամ, քանի որ կը յիշեմ՝ երբեմն սիրելի էրանութիւններս. անոնց ամեն մէկը սիրտս կը խոցեն:

Բայց ինչ դժգոհանք, կամ էր մէկու մը համար դժգոհել. մի քե Արեգը իւր լոյսը միայն ինձի համար կը ցոլացընէ. հրեշտակները զրկուած են մի. էս միլիոնաւորներուն համար կ'ողբամ. ասիկայ ամենուն բաժինն է, ըստ կարգադրութեան ճակատագրին մէկուն այսպէս, ուրիշին այնպէս: Մայրերուն տագնապները՝ իրենց գաւկըներուն վրայ է. տղաքներն անգամ վշտաց իրական ժառանգներն են:

Պատերազմ, սով, ժանտախտ, հրաբուռիս, փոքորիկ, հուր, ներքին խռովութիւններ, հարստահարութիւններ, սրտերնին էռասպատիկ պղինձով պատած մարդկային սեռը պաշարողներ. . . հոս

Աստուծոյ պատկերը (մարդիկ) լոյսէ զրկուած հանքերու մէջ նետուած՝ Արեգին գոյութիւնը անգամ մոռցած են. ուր՝ իրենց անսիրտ տերերուն նման անմահ հակներ՝ դատապարտուած են իրենց բոլոր կեանքը տաժանելի թիերու մէջ անցընելու, ճմեռուան ալիքները ճղքելու, եւ անյուսութիւն քաղելու համար: Ոմանք պատերազմի մէջ զենքի տակ անպիտանացած, իրենց կիսատ անդամներովը կտոր մը սեաւ հաց կը մուրան ան քաղաքներուն մէջ, զորոնք իրենց քաջութեամբը ազատած են. ահա ասանկ բռնաւորը, եւ իւր մտերիմ կործանիչը, այսինքն, կարօտութիւնն ու անբուժելի հիւանդութիւնը (միատեղ կ'իյնան) անպաշտպան բազմութեան վրայ անողորմ գրաւումով. որոնց կը բողոսն՝ միայն գերեզմանէն ապաւինութիւն փրկուողը:

Որքան հառաջալից հիւանդանոցներ կը մերժեն իրենց մահը, քանի՛ քանիներ հոն մտնելու տխուր ազատութիւնը կը փնտրուեն. քանի՛ քանիներ՝ որ երբեմն բաբեբաղդութեան մէջ կ'գմայլեին, հիմայ ողորմութիւն կը խնդրեն, պնդ ձեռք մը. եւ անէլի սոսկալի է, որ ՚ի գուր կը խնդրեն:

Ո՛ր էրանութեան մետաքսեայ զաւկըներ. եթէ կ'ուզէք նոր բան մը տեսնել՝ հոս է կէք. ձեր գեղխութենէն քիչ մը շունջ առէք, եւ թնղ զգուա-

նաց իշխանութիւնը ձեր վրայէն վերնայ. . . բայց ձեր լրբութիւնը անջափ է. դուք արժան եղածը ընելու կ'ամչնաք:

Երանի՛ թէ տրտմութիւնը միայն ասանկներուն վրայ իյնար. ոչ ջարը է. ոչ առաքինին կրնան ազատիլ անկէց. հիւանդութիւնը կը զարնէ որկրամոյն ալ ժուժկանն ալ. կը պատժուի անմեղը, է. վրդովմունքը թանձր շութին մեջէն կը հայածէ քաղցր խաղաղութիւնը:

Մարդուս զգուշութիւնը՝ զինքը շատ անգամ վտանգի կը մատնէ. է. իւր հսկողութիւնը զինքը մահուան կը յանձնէ, երջանկութիւնն անգամ իւր անուանը ջափ աղէկ ջէ. ինչ բանի որ կը ցանկանք, ջէնք կրնար ձեռք անցընել. է. մեր փափաքածէն խիստ տարբէր բան մը կ'անցնի ձեռուընիս. երանութիւնն անգամ ցաւ կուտայ. ամենէն մտերիմ բարեկամնիս՝ ակամայ մեր հանգիստը կ'աւրէ:

Առանց ջարեաց քանի՛ թշուառութիւններ, է. առանց ոսոխի քանի՛ թշնամութիւններ. երկրիս վրայ ամենէն երջանիկն անգամ կարօտ ջէ հակառակորդի. բայց անվերջ է մարդկային տառապանաց ցուցակը. է. հառաջանքները կրնան վրիպիլ, փոխանակ ողբալ պատճառելու:

Հողաշրական գունդին նրբան պզտիկ մասը մար-



դաբնակ է. իսկ մնացեալը՝ ժայռեր, անապատներ, սառուցեալ ծովեր, կիզիչ առազներ, վայրի ճիւղաց բոյներ, բունասոր բոյսեր, խայրոցք է. Մահասանկ է անա Աշխարհիս տխուր տեսարանը. իսկ աւելի տխուր է, որ այս երկիրս մարդուն ճշգրիտ պատկերն է. ասանկ սահմանեալ են անոր ամբարտաւան տերերուն ուրախութիւները վայոց\* ընդարձակ թագաւորութեանը մէջ. ուր տխրագին նեղութիւնները կը պատճառեն տխրահնչիւն բազմադադակ ճիւղեր, զայրացեալ կրից խայթեր, գիշատիչ թշուառութիւններ, որոնք մեր կենաց կարենոր պիտոյքները կը յափշտակեն. էս սպառնալից մահը՝ կլլէնս պատրաստ է:

Ի՞նչ էմ էս ուրեմն՝ որ միայն իմ անձս կ'ողբամ. թէ մանկութեան, էս թէ ծերութեան մխիթարութիւննիս մի միայն ուրիշներու օգնութիւնն է. էս այս՝ մեզի բարերար ըլլալ կ'ուսուցանէ. անա բնութեան առաջին էս վերջին դասը՝ մարդկային ցեղին համար. անձնասեր սիրտը արժանի է իւր թշուառութեանցը. աւելի ազնիւ է տրտմութիւնը. հրջափ որ կ'ընկղմի կը գօրանայ, խոհական առաքինութիւնը կը թէթեցընէ տառապանքը. առաքինութիւնը խոհականութենէն ա-

---

\* Վայ բառը շատ անգամ իբրեւ անուն դրուած է. հռչակուած է:

ւելի տալ ջի հրամայէր ինն բբացեալ խորհուրդին  
 երկրորդ խողովակ մը. ան որ կը բաժնէ (իւր կա-  
 բողութիւնը), վշտերը կը բէթեւնան. . . սո. ուրեմն  
 ն աշխարհ քու բաժինդ՝ ալ իմ այս արտասուրբես...  
 ինչ տխուր տեսարան մըն է մարդկային երջան-  
 կութիւնները անոնց համար, որոնց աջուրները  
 կրնան մեկ ժամուն ետեւը նշմարել. ն դու՛ որ  
 հրճուեալ է սիրտդ, կ'ուզես որ քու բարեբաղդու-  
 քեանդ հրճուակից ըլլամ. գիտեմ կ'ուզես, քու հը-  
 պարտութիւնդ զայն կը խնդրէ ինձմէ, բայց քնդ  
 քու հպարտութիւնդ ներէ բարեկամի մը փրկա-  
 ռեստ կշտամբանացը՝ (որուն կարօտ է բնու-  
 րիւնդ) ո՛ր երջանիկ թշուառ. կութութեամբ դու եր-  
 ջանիկ ես, քու հաճութիւններդ քու ենթակայ ըլ-  
 լալիք վշտերուդ խոստումներն են. դժբաղդութիւնը  
 անգութ պարտատերի նման՝ իւր ուշանայուն փո-  
 խարէնը կը պահանջէ. անցեալ բարեբաղդութիւն-  
 ներդ իրեն մտրակ մը կ'ընէ քեզ աւելի խայրելու  
 եւ կրկնակի թշուառացընելու համար. Լորէնցիօ,  
 բաղդը զքեզ կը շողոքորթէ. սիրաբորբոք սիրտդ  
 կը պարէ, քանի որ կ'երգէ Սիրենը\*. սիրելի է քու  
 բարօրութիւնդ, զիս անգութ մի կարծեր, ես ջեմ  
 ուզեր քու ուրախութիւնդ խանգարել, այլ ապահո-

\*Գեղեցկութեան ոգի:

վել. մի կարծեր որ երկիւղը փոթորիկի ժամանակ հարկ է. հսկէ աջայրջութեամբ բաղդիդ զմայլումներուն վրայ. Երկինքը զարհուրելի է երբոր կը խոժոռի, անտարակոյս. Եւ իւր շնորհքներուն մեջ նաեւս ահաւոր. հոս իւր շնորհքները փորձ են, ոչ թէ պարգեւ. պարտաւորութեան կանչուիլը հրսկողութենէ դադրիլ չէ. Եւ կրնայ զմեզ վայոց ջափ շուարեցընել, Եւ տեղեկացընել զմեզ իրենց պատճառին Եւ արգասիքին, ընելով մեր վատաբարոյութեանը վրայ խիստ հայեցուած մը, դողացընելով զմեզ՝ բուն մեր յանցանքովը ճնշուած. Երկիւղը բնութեան վրդովմունքը է. ուրախութեան սանձը գուցէ ձեռք անցուցած ժամանակնիս զանոնք կը կորսնցունենք, Եւ կամ կը խոտորեցընենք անոնց զմայլումները աւելի գեշի, քան թէ պարզ քշուածութեան: Անհաւատարիմ ուրախութիւններ, որոնք քաղաքական պատերազմներու թշնամութեան Եւ գրկախառն բարեկամութեան կժու վրէժխնդրութիւններու նման, կատաղութեամբ զայրացեալ՝ մեր խաղաղութեանը դեմ կ'ելլեն:

Հեռ.ն. Երկրիս երջանկութիւններէն, հեռ.ն. . . սյն է երջանկութիւնը, որ բնաւ չի սպառիր, այն որ իւր երջանկութիւնը հաստատուն հիմանց վրայ շինէր, յիմար մըն է, իւր ուրախութիւնները մահուան կը յանձնէ:

Իմ երջանկութիւններս քու հետոյ մեռաւ Յիւանտրոս. քու վերջին հառաջանքդ հալեցուց ըզմայլումը. եւ այս դիւթող երկիրը կորսնցուց իւր բոլոր պայծառութիւնը. ո՞ւր իւր շքեղ պարիսպները, իր ոսկեղէն լեռները ո՞ւր, ամենքն ալ խաւարեցան, եւ մերկ ամայութեան դարձան. արտաւուսաց անուէլի ճո՞ր մը. . . :

Մէծ բովիջը ալ մեռան, ո՞ր խեղճ՝ մթութեան մեջ տըխուր հողի զանգուած... Ինչ փոփոխութիւն երեկուրնէ հետեւ. երբ քու սիրելի յոյսերդ կատարման մօտ էին (երկար աշխատութեան գին), ո՞ն՝ ինչպէս փառասիրութիւնը կը պայծառացնէր քու գուարթ այտերդ. փառասիրութիւն, յիրաւի մէծ, առաքինութեան փառք. մահուան թոյնը ներսէն (նենգաւոր՝ անհաւատարիմ բովագործ) խաւարին մեջ գործելով, կը ծիծաղէր քու լաւ պատրաստած գաղափարիդ վրայ. և կ'ակնարկէր որդին որ կտրէ ասանկ կարմրած շքեղ վարդը. որ դեռ չի բոռմած ինկաւ. մեկ վայրկէնի որս:

Մարդուս նախատեսութիւնը բեութեամբ իմաստուն է, Լորենցիօ: Իմաստութիւնը յիմարութեան կը փոխուի. շատ անգամ անմիջապէս հասած հաճոյական գաղափարը աշխատող խորհուրդէն կը ծնանի. որքան ազատ է մեր ազքը, առաջին վայրկէանը մեր նախատեսութիւնը կ'աւարտէ.

ամպերը՝ նման վերջին օրուան ամպերուն յետագայն կը նսեմացընեն: Մենք կը խելամտենք, կը գուշակենք ՚ի գուր, ժամանակը կտոր կտոր կը բաշխուի, եւ ամեն մեկ կտորը՝ յառաջագոյն խտնուած կենաց առաջին փոքորիկին մեջ ճակատագրին անդառնալի երդումովը երդում ըրած է խոր լռութեամբ պահելու, թէ «նր կ'սկըսի յախտենականութիւնը»: Բնութեան օրենքով ինչ որ պիտի ըլլայ նե՛ կրնայ հիմայ ըլլայ, մարդկային կենաց ժամերուն մեջ գերակայութիւն չի կայ: Վաղուան վրայ վստահանալէն աւելի՛ ինչ յանդուգն խորհուրդ կրնայ ծնանիլ մարդկային մտաց մեջ. ո՞ր է վաղը. ո՞րիչ էրկրի մը մեջ. ասիկայ ստոյգ է շատերուն համար, ընդհակառակն մեկուն ալ վստահելի չէ. բայց տակաւին այս կարելի էին, գուցէին, անհամբաւ սուտերուն՝ իբր թէ գուհարեայ ժայռի վրայ, կը հաստատենք մեր լեռնաջափ յոյսերը՝ յախտենական գաղափարներ նիւթելով. քանի որ մենք ճակատագրական եակներ ըլլալով պիտի աննիւթանանք. եւ կենաց արագայով պերճացեալ պիտի մեռնինք:

Ֆիլանտրոս անգամ իւր պատանքը առաջուց պատրաստած էր, թէեւ մօտայնուտ պատճառ չունէր. պետք էղած զգուշութիւնը իրեն չէր զլացուած. քանի քանիներ այսպէս յանկարծակի կ'իլ-

նան. բայց ոչ այսպէս պատրաստուած. ինկնա-  
այսպէս յանկարծակի, քէէ տարիներու համար  
պատրաստուած: Մարդկային ջարհիքներէն կարե-  
լի էղածին չափ հեռացիր՝ Լորինցիօ, հեռացիր.  
յանկարծակի մնն. . . . . հրքան սոսկայի է այդ  
հանդարտ անպատրաստութիւնը. խելացի էղիր  
այսօր յիմարութիւն է յապաղելը, վաղը կորստա-  
կան է. մահացու նախագաղափարը պիտի գօրա-  
նայ. մինչէ որ ասանկով իմաստութիւնը կէան-  
քէն դուրս արտորուի:

Յապաղումը ժամանակին գողն է. տարի տա-  
րիի էտէ կը գողնայ, մինչէ ամենքն ալ կը հատ-  
նին, է. մեկ վերջին վայրկեան մը կը շնորհէ ընդար-  
ձակ յաւիտենական տեսարանին պարտականու-  
թիւնները կատարելու. էք այս շատ չի պատա-  
հի ալ, տակաւին դժնեայ է. հապա էք շատ  
անգամ տեղի ունենայ, հրքան դժնդակագոյն:

Մարդու սխրայի սխալումը սա յաղթանակը յա-  
ռաջ կը բերէ, քէ՝ «Ամէն մարդ ապրելու վրայէն»  
յաւիտեան ծծնդական գոյութեան ժայռին վրայ.  
ամենքն ալ ինքըզինքնուն կը պահէն խորհելու  
յարգանքը. անոնք մեկ օր մը պիտի իմաստնա-  
նան, է. այս սպազայ դարձին համար ունեցած  
հպարտութիւններնուն վրայ կը գովուին գէթ ինք-  
նիրեննին, իրենց ապառնի վիճակին գովեստով.

ինչ ազնիւ եւ ան կեանքը, որուն երբէք չի պիտի առաջնորդուին, իրենց ձեռքը ունեցած ժամանակնին անմտութեան սեպհականեայ եւ իսկ ճակատագրին ձեռքը եղած ժամանակը իմաստութեան կը սեպհականեն. ան որ իրենք ջեն կրնար, յետադաս կը սեպեն. անմտութեան գործ ջէ յիմար մը նախատելը, եւ մարդկային իմաստութիւնը հազիւ թէ ասկեց անելին կրնայ ընել, ամեն խոստմունք խեղճ եւ դանդաղկոտ մարդունն է, եւ ան այ ամեն տեսարանի մեջ: Երիտասարդութեան ժամանակնիս, կատարեայ հաճութեամբ, երբեմն ազնուութեամբ կը հանգստանանք, անհոգ ինքըզինքներնուս համար. միայն թէ հլու զանկըներու պէս կ'ուզենք որ մեր հայրերը անելի իմաստուն ըլլային. եռեսուն տարեկան եղած ժամանակնիս, կ'սկըսենք յիմար ըլլայնուս կասկածիլ, քառասունին կը գիտնանք, եւ կը նորոգենք զաղափարնիս, յիսունին կը ցաւինք մեր ատելի դանդաղութեանը վրայ. կը ջանանք մեր խոհական նպատակը հաստատելու. խորհրդոյ ամեն վեհանձնութեամբ կ'որոշենք եւ վերստին կ'որոշենք, բայց այս ալ կը մեռնի:

Եւ ինչու. — որովհետեւ ինքըզինքնիս անմահ կը կարծենք. ամեն մարդ կը խորհին ուրիշներուն մահկանացու ըլլայուն վրայ, բաց ՚ի ինքըզինք-

ճուն: Իսկ ինքըզինքնուն, երբոր բաղդին շուարեցը-  
նող մեկ հարուածը իրենց խոցեալ սրտերուն մեջ  
յանկարծակի արհաւիրք մը խոթէ: Բայց իրենց խո-  
ցեալ սիրտը ճեղքուած օդի պէս շուտ կը գոցուի,  
երբ որ կ'անցնի նետը՝ հետք չի մնար. ինչպէս որ  
թռիչքէն՝ մթնոլորտը սպի չի պահեր. անցած ալի-  
քը ակոս չի թողուր նաւուն. ասանկ կը մեռնի  
մարդկային սրտին մեջ մահուան խորհուրդը, մին-  
չէս անգամ այն փափուկ արտասուքին հետ՝ գոր-  
բնութիւնը կը կաթեցընէ մեր սիրելիներուն վրայ,  
զայն անոնց գերեզմանին մեջ կը կաթեցընենք. . .  
կրնամ մի Ֆիլանտրոսը մոռնալ. այն տարօրի-  
նակ էր:


Ո՛ր վշտացեալ սիրտն իմ...: Բայց էս անոր կեն-  
դանութիւն պիտի տամ. ամենէն երկար գիշերն  
անգամ կարճ պիտի գայ իմ ողբոցս, էս արտուտը  
իմ կէս գիշերուան երգերս պիտի լսէ:

Կայտառ արտուտին առաւօտեան գեղգեղուն  
ձայնը արշալոյսը կ'արթնցընէ: Վշտաց ամենէն  
սուր փուշը իմ սիրտս կը խոցէ. էս կը տրնիմ՝  
մեղեդիով ջարաշուք մթութիւնը փարատելու:

Քաղցրիկ Սոխակ, քեզի պէս՝ աստղերը ուն-  
կընդրութեան կը կանչեմ, աստղերը ինծի համար  
խույ են, բայց սիրաբորբոք են քու տաղիդ. սա-  
կայն մի հպարտանար. կան՝ որ քեզ կը գերազան-



ցեն. Եւ հեռաւոր դարերէն մեզ կ'զմայլեցընեն: Խաւարով պատեալ՝ մթուքեան բանտարգեալ մը: Շատ անգամ ես կը կրկնեմ իրենց երկնային սաստիկ աշխոյժը՝ իմ վշտերս հանդարտեցընելու համար եւ սիրտս վայե ազատելու. ես կը բաւայիմ անոնց բորբոքին մեջ, բայց կրակնին ջեմ կրնար ձեռք անցընել. խաւարի մեջ եմ, քէեւ ջեմ կոյր քեզի պէս՝ ո՛ր Մօնիդէս(1), կամ դու ո՛ր Միլթըն(2), ո՛ր, կրնամ արդեօք ձեր երգին հասնիլ կամ անոր՝(3) զոր Մօնիդէսը մերը ըրաւ, այն՝ մարդուս վրայ երգեց. իսկ ես անմահ մարդուն վրայ կ'երգեմ, իմ երգերս կենաց սահմանէն դուրս կ'ելլեն. եւ ինձ ինչ հարկ կայ ուրիշ բանի՝ բաց ՚ի անմահութենէն. երանի քէ ան՝ իւր քերթուածները յառաջացընէր հոն, ուր գիշերը՝ ցորեկի կը փոխէ. երանի քէ իւր կրակէ քեւերովը իմ երգած տեղս խոյանար. եւ երգեր անմահ մարդու վրայ. ո՛րքան պիտի երջանկացընէր մարդկային սեռը, եւ զիս ալ մխիթարէր:



- 
- |                            |                        |
|----------------------------|------------------------|
| 1. Յոյն բանաստեղծ.         | } երկուքն ալ կոյր էին: |
| 2. Անգղիացի բանաստեղծ.     |                        |
| 3. Փօփ Անգղիացի բանաստեղծ: |                        |

# ԳԻՇԵՐ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՀՈՒԱՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ԱՌ

## ՄԵՃԱՊԱՑԻԻ ԿՈՄՍ ՈՒՒԼԻՆԿԹԸՆԻ

Երբոր խօսեցաւ հաւը, արտասուեց՝ սաստուէլով այն Աջքեն, որ կը նայի իմ վրաս ու ամենուն վրայ: Այն գօրութիւնը կը հրամայէ կես գիշերուան այս պահանորդին սուր ձայնով (ազդարար անոր որ պիտի արթնցընէ մեռեալները) արթնցընէյ հոգիները իրենց քունեն՝ երկնային խորհուրդներու: Ես այ արտասուեմ մի: Ո՛ր է ուրեմն արիութիւնը. ես երբ չի կայ արիութիւն, ո՛ր է մարդ. ես գիտեմ այն պայմանները, որով կրնայ մարդ տեսնէյ լոյսը. այն որ կը ծնանի, ցուցակի մէջ կ'առնուի. կեանքը պատերազմ է, անընդհատ պատերազմ՝ տառապանաց հետ. այն որ շատ կը դիմանայ, շատ քիչ անոր արժանի է: Ես ուրիշ բնաբանի մը պիտի դառնամ՝ Լորենցիօ, թո՛ղ՝ իմ խորհուրդս ատրեզ դարձընեմ, քեզի սեպնական օգտակար բնա-

բան մը. որուն խիստ դու կը կարօտիս: Հարագատ  
բնաբաններ՝ սիրելի Ֆիլանտրոսի հողէն բուսած :

Ան բէէ. մեռեալ, բայց տակաւին կրնայ բարե-  
կամութիւն ընէլ . — Ինչ բնաբաններ. . . — ժամանա-  
կին զարմանալի արժեքը՝ Մահը՝ բարեկամութիւնը  
է. Ֆիլանտրոսին վերջին տեսարանը . այս բնա-  
բանները էս կրնամ նկարագրել այնչափ, որ դուն  
յարմարութիւն ունիս լսելու, է. սիրտդ անզբաղ ջի-  
բողելու. բարի արդիւնքը զիս պիտի մխիթարէ. է.  
երբ իմ մուր ամպային ծիածանիս վրայ կէս տը-  
պաւորութիւն մը տեսնեմ, բշուառութեան մեջէն  
փառք կուտամ. . . :

Կ'ողբա՞ս մի դուն Ֆիլանտրոսին տխուր ճակա-  
տագրին վրայ. զիտեմ դուն անունկ կ'ըսես, բայց  
կեանքդ ալ անանկ կ'ըսէ՞ մի. ան կ'ողբայ մեռ-  
եալին վրայ. բայց ո՞վ կ'ապրի մեռեալներուն ու-  
գածին պէս. ո՞ր է այն մեծութիւնը՝ ժամանակի  
ագահութիւնը. (ն փառաւոր ագահութիւն). մահ-  
ուան խորհուրդը զայն մեզ կը յիշեցընէ. ինչպէս  
համբաւեալ զողութիւնները մեր ոսկիները աւելի  
սիրելի կ'ընեն: Ո՞ ժամանակ. ոսկիէն ալ աւելի նա-  
խապատիւ. բայց յիմարներուն համար կապարէն  
ալ աւելի ծանր բեռ մըն էս, է. մանաւանդ իմաս-  
տուն կարծուած յիմարներուն. հրջափ վայրկեան  
մարդուս շնորհուած է առանց հաշիւի, հրջափ

տարիներ վատնուած են. իմաստութեան պարտքը անվճար մնալով՝ մեր հանապազօրեայ կենդանութիւնը պարտական է այդ ազատութեան : Շնորհակալութեամբ ասեմք, որ արդէն զրանը առջեւ է. նենգաւոր մահ. երբ մէյ մը իւր զօրաւոր ձեռքը անցունէ մեկը, ուրիշ զօրութիւն մը ամենեւին չի կրնար այն որսը անոր ձեռքէն ազատել. յաւիտենականութեան անագորոյն շղթայով սաստիկ կը կապէ, եւ վրէժխնդրութիւնը իւր մնացորդը կատարեալ կը պահանջէ :

Ո՛րքան ուշ էս սարսափեցայ կենաց ժայռին վրայ. նրբան ուշ կանչուեցաւ կեանքը իւր վերջին ապաւինութիւնը անյուսութեան մեջ գտնելու. այդ ժամանակը իմա է՝ ո՛ւ Մէտ, բայց քեզի կը պարտիմ զայն : Յօժարամիտ կ'ուզէի յաւիտեանս քեզի նուիրել զայն. բայց իմ կարողութիւնս՝ փափաքանացս հաւասար չէ. իմ տկար երգերս մահկանացու են. քու ըրած բժշկութիւնդ անցաւ, բայց իմ կամքս իմ երգերուս հետ չի մեռնիր : Ի՞նչ բանի կը կարօտի քու հիւանդութիւնդ Լորենցիօ. ոչ թէ էսքույաբիանին՝ այլ բարոյական օգնութեան. դու յիմարութիւն կը սեպես շուտով իմաստուն ըլլալը. պատանեկութիւնը ժամանակաւոր հարուստ է, աղքատ կրնայ ըլլալ. խնայէ զայն, ինչպէս որ կը խնայես ստակը՝ վատնած ժամանակդ. վայրկեան մը

մի կորսնցընէր առանց անոր արժանաւոր փոխարեւը ընդունելու. եւ ինչ է անոր գինը... Մանուան անկողնոյ մէջ պառկողներուն հարցուր. անոնք կրնան քեզի զրուցել. բռնի կցորդ եղիր անոր հետ ինչպէս որ կենաց՝ բարի ժամանակի մը գալուն սուրբ յուսովը պէրճացեալ, այնպիսի ժամանակի մը որ աւելի բարձր նպատակներու սահմանուած է. մարդոց է հրեշտակաց համար մօտ է այն նպատակը, աւելի երկնային առաքինութիւն: Միքէ ասոնք են մեր պարտականութիւնները, իմաստութիւնը, փսնօքը, եւ շահը, (ասոնք երկնային բարերարութիւնը կարեւոր միութեան մէջ կը կապէ). բարունակներու նման կը զուարճանանք, երբոր զարնանային Արեգը կ'ազդէ: Կ'իշխէ ժամավաճառութիւնը՝ մարդուս ամենէն աւելի փնտրածը: Զուարճանալը ապրիլ է, մեռնիլն ալ զուարճանայ է մի: «Դուն կը քարոզես» կ'ըսես Լորենցիօ. այն արդէն քարոզուած է. եւ ինչ՝ երէ անգամ մ'ալ էս քարոզեմ քեզի. պատերազմներու բոցերուն մէջ ո՞վ զուարճութիւն կը փնտրուէ. ասիկայ քրեական յանցանք չէ մի անմահ հոգիին, քանի որ իւր թշնամին զինեալ է, եւ վարձքը յատենականութիւն է: Հեշտութիւնները կրնան մի զուարճացընել, երբ դեզերը ջեն կրնար բուժել, երբ կ'սպառի հոգին, երբ կենաց դիւքող տեսա-

բանները իրենց պայծառութիւնը կը կորսնցընեն եւ մեր տեսութեան առջեւ կը նուաղին, երբ երկիրները եւ քաղաքները իրենց շքեղ բուրգերովը՝ շաղշաղեայ նաւակի նման յանկարծական փոքրիկով նետուին ծովուն մէջ, ուր իսկոյն կորսուին. ան ատենը հեշտութիւնը կը գուարճացընէ մինչ: Այն ժամանակ գաները խաղալիք պիտի ըլլան, եւ երկիրքն ու երկիրս համաստեղութեան մէջ փոշի պիտի տեսնուին:

Մենք ժամանակը կը տուժենք. ճի՛ անոր կորուստը մենք քանկագին կը զնենք. ինչ հատուցում կրնայ ըլլայ Լորենցիօ քու քանկագին ունայնութիւններուդ. դուն կը հատուցանես ժամանակին անհատնում ունայնութիւնները. դուն գոռոզաբար կ'արդարացընես խոտանման հեշտութիւնները կենաց հասարակ հոսանքին վրայ: Որմէ՞ են այս ունայնութիւնները եւ հեշտութիւնները, երե ոչ քեզմէ. բնութիւնը ճշ հեշտութիւն եւ ճշ այ ունայնութիւն կ'ստեղծէ: Գոնէ ունեցիր առաքինութիւնը, կամ առաքինութեան փափաքը, որ կը ջնջէ անմիջապէս քու բոլոր թշուառութիւններդ, հեշտութիւն չի բողոք գործերուդ մէջ, եւ ոչ այ ունայնութիւն՝ ժամանակիդ մէջ: Առաքինութիւնը կը մեծցընէ, կը յագեցընէ, կ'անմահացընէ ամենքը. այս բարեբաստիկ միջոցը ամենքը ոսկիի կը դարձունէ,

Եւ բարի սրտին առանձնաշնորհութիւնը յարուցանելու մեկ արքայական հարկ մը կը հաւարք ամեն մեկ աղքատ ժամերէն անգամ. անհատնում էկամնաւ: Ամեն մեկ վայրկեան էթէ միայն յօծարութիւն հատուցանեն քու գօրութեանդ մէջ, քու հաստատուն յօծարութիւնդ կատարուածի կը հահասարի. ով որ կ'ընէ ինչ որ իւր պարագաները կը ներէ՝ աղէկ կ'ընէ, ազնուութեամբ կը գործէ. Եւ հրեշտակները ասկից աւելի չեն կրնար ընել. յիրաւի մեր մարմնային գործքերը զմեզ առաքինութենէ կ'արգիլեն, բայց ոչ բան մը կրնայ իշխել խորհուրդին վրայ. լաւ կառավարէ խորհուրդդ, վասն զի մեր խորհուրդները Էրկնից մէջ կը լսուին:

Ժամանակին ամենակարեւորութեանը վրայ ամեն ժամանակ քեռ իմաստունները խօսած են. . . բայց դեռ չէ ծնած այն մարդը որ մեկ ժամը ըստ օրինի գործածէ. — Իշխանը՝ որ ազնուութեամբ ողբաց, առանց քագի քագաւոր մը պիտի ըլլամբ Հռովմայի, կամ ըսենք աւելին, մարդկային ցեղին իշխան մը պիտի ըլլամբ: Այն իբր մարդկային ցեղէն ընտրուած մը խօսեցաւ, ասանկ պարտին ամենքն ալ խօսիլ. այսպէս՝ դատողութիւնը ամենուն խօսիլ կուտայ:

Աստուծոյ՝ մարդուս շնորհած այս փափուկ

խորհրդատուէն (դատողութենէն) ինչ հարկ յիմարութեան յարիւ. ինչ հարկ անմտութեան կցորդիւ. միթէ զրկուելո՞ւ համար այն մեզի վերաբերեալ օրհնութիւններէն, որոնց նախապատիւը ժամանակն է: —Ժամանակը յախտենականութիւն է. յախտենականութիւնը կրնայ տայ ամենուն ինչ որ կարեւոր է, հրեշտակապետները զմայլեցընող կարեւորութիւնները. ով որ կը մեռցընէ ժամանակը առանց զայն յարգելու, երկնային զօրութիւն մը սպառած կ'ըլլայ: Ա՜հ որքան կ'անհրաւի այնպիսին բնութեան է ինքըզինքին. անխորհուրդ ապերախտ է. անհաստատ մարդը իրեն զուարճութեան մեջ ունայնութիւն կը տղայաբանէ. մենք բնութիւնը թիզէ մըն ալ կարճ կը կարծենք. է. այդ թիզը միանգամայն անկարեւոր է. ճանճրալի կը սեպենք: Կէշծ տառապանք, ամենքն ալ պիտանի են. դանդաղ վայրկեանները քանի որ զմեզ առաքինութեան մղելու կ'շտապեն (երջանիկ ճեպ), մենք մենե միջոց' անմիտ միջոց կ'ստեղծենք. է. մեր յիմար կառավարը (ինչո՞ւ որ բնութեան ճայնը սլմեր ականջը չի լսեր) կը քարշէ զմեզ գլխիկորդեպ 'ի մահուան անդունդը. մահը' որ արդէն մեր սոսկումն է, ասանկով մեզի աւելի սոսկալի կ'ըլլայ:

Ո՞հ ինչ անվայելուհ կնճիւ մըն է այս: Պարապութիւնը ցաւ կուտայ, մեր կառքին անիւները



կը հանէ. Եւ ասանկով սրբան ծանրութեամբ մեր կենաց բեռը կրնանք քարշել:

Բարեբաաստիկ ունայնութիւնը մեր վիշտն է. Կայենի նման ճեզ քափառակէան կ'ընէ. Երկրիս բոյորը քափառելով՝ կ'ուզենք բռնաւոր խորհուրդէն ազատիլ. ինչպէս որ Երկրիս տակ ատյասը կը հեծէ, մենք ալ մէկ ժամուն տակը կը հեծենք: Գալիք զբօսանքէն ողորմութիւն կը խնդրենք, իսկ Եկած Երջանկութիւնը մեր դաշտերը կը գրահ: Անփոյթ անյարմարութիւն: Բանտերուն սոսկումը Երէ կարենան զմեզ ատելի ժամանակէն ազատել, իրենց պիտի ապաւինինք. բայց տակաւին Երբ մանը մեզի ազատութիւն կը նուիրէ, զայն անգութ կը կոչենք, Եւ մեր կենաց տարիները վայրկեաններու կը դառնան, Եւ դարերը տարիներու. դիտակը դարձած է դեպ 'ի մարդուս սխալ տեսութեանը (իւր յիմար սխալումէն):

Ժամանակը իւր յառաջագնացութեան ատեն իւր բեռերը Ետին կը ծածկէ, Եւ դանդաղ ընթացքի մեջ կը տեսնուի. բայց լնւ. նկատէ Երբոր կ'անցնի, ինչ կը տեսնուի, իւր ընդարձակ բեռերը չէ որ հովէն ալ սրընթաց. բայց բոյոր մարդկային սեռը զօրաւոր ներհակութեամբ տառապեալ շուարեալ կը զանգատին իրենց ասպարիզէն (արշաւէն):

Քու անմտութեանդ տուր բոյոր այս չարիքները, իսկ անոնց պատճառը էւ բժշկութիւնը՝ արդարախոն բնութեան հարցոյր. անբաւ է երկնից մարդասիրութիւնը, մեր վատնումը անսահման է:

Բնութիւնը ժլատ չէ. մարդիկ վատնիչ են. մենք ժամանակը կը վատնենք, ոչ թէ կը գործածենք. շնչառութիւն կ'ընենք, ոչ թէ կ'ապրինք. ժամանակը վատնելը գոյութիւն է, իսկ գայն գործածելը՝ կեանք, էւ մարդուս լոկ գոյութիւնը՝ (որ ապրելու սահմանուած է) գայն սոսկալի ծանրութեամբ կը ճմլէ էւ կը նեղէ. բայց ինչո՞ւ. որովհետէ ժամանակը գործածուելու, էւ ոչ թէ վատնուելու համար տրուած է, ոչ նաեւս ապօրինաւոր գործածելու՝ խռովութիւնով, աղմուկով, աստղերուն միայն ճըգելով անոր ընթացքը նկատելը. ան տրուած չէ էւս մարդուս կամացը համեմատ գործածուելու, որպէս զի մարդս կարենայ իւր անտեսանելի վրիպումները զգալու, էւ զգալով ուղղուելու համար աշխատութեան դիմելու, չի շփոթելու, էւ հանգրատութեան համար ծոյլութեամբ չի պատսպարուելու... կենաց հոգերը հանգստութիւններ են: Երկիրք սասանկ սահմանած է. այն որ թշուառ ըլլայ չուզեր, աշխատելու է. հոգերը զբաղմունքներ են. էւ առանց զբաղման հոգին տանջանարանի մեջ է, անոր ամենէն աւելի չուզածը անգործութեան

տանջանարանն է. իսկ աշխատութիւնը իւր ամէն ուրախութիւնն է:

Այսպէս ուրեմն վերոյիշեալ կնճիռը կը բացատրուի. ժամանակը ան ատեն տագնապ կը պատճառուէ, երբ մարդիկ յիմար կ'ըլլան: Մեծ բընութեան օրինաց դէմ կը բանդագուշենք, կը կրօնահնք, Աստուածութեան դէմ կը հակառակիմք. Եւ սահմանուած է, թէ՛ այն որ Աստուծոյ կամացը դէմ կը հակառակի, ինքըզիմքին կը հակառակի. ուրեմն մեր անբնական կռիւը մեզի դէմ է. մեր խորհուրդները թշնամութեամբ, Եւ կուրծքերնիս աղմուկով լեցուն է: Մենք ժամանակը մեզմէ կը վնասենք, Եւ դարձեալ Ետ դառնալը կ'ուզենք: Հեշտասիրութեան մեջ շռայլ, Եւ տակաւին ապրիլ կ'ուզենք. կեանքը երբեմն կարճ է. երբեմն երկայն կը կարծենք, իսկ մահը խուզող, Եւ խորշելի. հոգին Եւ մարմինը նման են դժգոհ այր Եւ կնոջ, միացած հառառակութիւն. բայց Եւ այնպէս ջենն ուզեր իրարմէ զատուիլ: Ա՛ն՛ ունայնութեան սեաւ օրէր: Քանի որ հոս են, որքան տիաճութիւն կ'զգանք, իսկ երբ կ'երբան որքան կը ցաւիմք: Կ'երբան, երբէք ջէն երթար. երբոր կ'երբան, տակաւին մեզի կը տեսնուին, անցեալ ամէն մէկ օրերուն մեջ հոգին կը շրջի, հրեշտակի մը պէս կ'զմայլի, կամ յիմարի մը պէս կը խոժոռի:

Ոչ մահը է. ոչ ալ կեանքը կրնան մեզի հաճելի ըլլալ, անցեալ ժամանակն ալ, ունեցած ժամանակնիս ալ զմեզ կը նեղեն, ինչ բան կրնայ այնչափ հաճելի ըլլալ մեզ, որչափ որ ըստ սանմանադրութիւն Աստուածութեան՝ ժամանակին գործածելը:

Այն անձը՝ որ իւր ժամերը Աստուծոյ կը նուիրէ զօրաւոր ջանքով է. համեստ նպատակով, անմիջապէս կենաց է. մահուան խայթոցէն կ'ազատի, է. կը քալէ բնութեան հետ, է. իւր ճանքաները խաղաղութիւն են: Մէր տառապանաց պատճառներն ու դարմանները տեսնուեցաւ:

Դարձիր ուրեմն նկատելու՝ ժամանակին բնութիւնը, սկիզբը, կարեւորութիւնը, երազագնացութիւնը, է. զայն ըստ օրինի գործածելէն ունեցած մեծ շահոյ:

Ամենամարմնասէր մարդը (որովհետէ ժամանակը չի դալչուիր, չի տեսնուիր), զայն ոչինչ կը համարի, է. ոչ ալ ինչ. բայց յիրաւի ժամանակը մարդունն է, է. իւր բարեբաղդութիւնն է. . . ժամանակը Աստուած է, դու երբէք ժամանակին ամենակարողութիւնը լսած չունիս մի, է. իւր զարմանալի գործքերը (որ դեռ կը շարունակէ) աննպատակ մնալու չեզոքութենէն Այն կը խորշի, վասն զի ինքը աննպատակ ըլլալու համար (երկ-

նից պանդնւխտ) խրկուած չէ, այլ իւր մարդոց հարկաւոր պատգամին համար Լորենցիօ. Եւ այն շատոնց որոշեալ ժամուն համար, որն որ յաւիտենական դարերէ հետէ հասուննայու վրայ է. այն զարմանալի ծննդեան անմոռանալի ժամը, Էրբոր անագին արգանդը, բղխման մօտ, Եւ բնութեամբ ուռուցեալ, իւր կարողութեանը ջափ բարձրանայով՝ յառաջ բերաւ ստեղծագործութիւնը, (ինչու որ ան ատենը ժամանակը ծնած էր), Եւ Աստուածութեան ձառագայրելովը հազարաւոր Աշխարհները. այս նպատակներով չի կտրուեցաւ ժամանակը երկնից այն մեծ օրերէն, հին յաւիտենականութեան զարմանալի սահմանէն, Եւ նետուեցաւ հաստատութեան ներքէս, հաստատութիւնները, որոնք կ'ապասէն իրեն՝ նոր կայանին մէջ, ջափելով իւր շարժումները պտուտաւոր գունտով, երկնային մէքենական ժամացնյց. ժամեր, օրեր, Եւ ամիսներ Եւ տարիներ իբրէս իրեն տղայք՝ կը խաղան անբիւրեւերու նման իրեն բոլորտիքը. քանի որ ինքը կը բռնի. Եւ կամ անհասար փետուրներու նման, անոնք կը մեաջընեն իւր յայնատարած փետուրը, Էրագաշարժ հրահարեալ բոցի նման, իւր վերջին սահմանը ըստանալու, իւր հին հանգիստը վերադառնալու, Եւ վերջստին իւր արգանդը եղող յաւիտենականութեան

միանայու, և մտնայու իւր բոյնին մեջ, երբ աշխարհները՝ որոնք հիմայ իւր շրջանները կը հաշուեն, ալ քայքայուին, (ճակատագիրը իր վերջին նշանը տալով) և քաւագլոր իյնան անժամանակ գիշերին և վիհին մեջ, ուրկից էլան:

Ինչո՞ւ փութացընէլ արագութիւնը, ինչո՞ւ ունայնութեամբ նոր թեւ տալ քու կարճ, կարճ օրերուդ՝ աւելի արագ սահելու. զիտէս մի, ինչ կ'ընես. կամ ինչ էղած է. մարդս ժամանակէն կը փախչի, և ժամանակը մարդէն. խիստ տխուր բաժանմամբ շուտով այս կրկնակի փախուստը պարտի վերջանայ, և ո՞ւր մենք ան ատենը պիտի գտնուինք Լճրէնցիօ, ո՞ւր. Լճրէնցիօ, ո՞ւր ան ժամանակը քու գութարձութիւններդ և փառքերդ. ես կը գիշանիմ քեզի. բայց ոչ փառացդ կը ցանկամ. ինչ, միթէ Մահը պերճութիւն կը փնտրուէ այն խոռվալից փակարանին մեջ՝ քու Փարեան Տապանիդ յաղքական կամարին ներքէւ. ուրեմն կեանքը աւելի լաւ կրնայ պարծենայ, և փայլիլ իւր ծիածանին վրայ:

Ո՛ր պճնեալներ, ո՛ր երկրիս շուշանները. ո՛ր արու շուշաններ. դուք՝ որ ոչ կը ջանաք, և ոչ ալ կը նիւթէք. (ինչպէս քորք շուշանք) որոնք թէեւ Սողոմոնին պէս իմաստուն ջեն, բայց շքեղ են տեսութեան, ո՛ր փափկասուն, որ բանի մը ջէս

կրնար դիմանայ, դուն ինքնին անտանելի ես. որն համար արդեօք կը փչէ ճմեռը. եւ Արեգը աւելի պայծառ. ճառագայթ մը կը ձգէ Լեօի մէջ. (արդարեւ փափուկ մետաքսեայ փափկութեամբ կ'ազդէ. երբ ոչ կը սաստուի). եւ օտար աշխարհներ կը խրկեն բուրմունք, համեմունք, եւ երգ, պատմութեան, եւ զգայութիւնք օտար գործարաններու մէջ կազմուած:

Ո՛ր ժամանակի Լորենցիօները. դուք որ առանց զուարճութեան անցած մէկ վայրկեանը տկար մարդոց համար թշուառութիւն կը համարէք. դուք բարձրաձայն կ'աղաղակէք եւ կը փափագիք մտահնար ամեն սնոտեաց, ամեն տեսակ խաղալիքներու եւ երեւակայութեան, յիմարութեան, եւ ուրախութեան փոփոխութեանց, եւ կը փափագիք ազատելու ճմեռնային կարճ օրուան մը դժնդակ երկարութենէն — ըսէք ճիմաստուններ, ըսէք ճիմանարեղ պատգամախօսներ, ըսէք՝ ճիմաղ երազներ երագողներ, ինչպէս պիտի կարենաք յաւիտենական գիշերը անցընել, ուր այսպիսի միջոցները ալ կը նուաղին:

Ո՛ր մատնիչ խղճմտանք . . . որ երբ քունի մէջ կ'երեւնայ վարդի եւ մրտենիի վրայ՝ Սիրենին երգովը յափշտակուած, ու երբ իւր պարտականութեանը բոլորովին անփոյթ՝ յօծարամիտ կ'երեւայ

քուլցած սանճը ճգելու, և զայն մեզի յանձնելու. և  
ան չի դառնալով աննկատ մնալու, նկատէ ան ա-  
տեն իւր գաղտնի կանգնումը. այն խորամանկ ամ-  
բաստանողը ամեն մեկ յանցանքները կը նշմարէ,  
և իւր ահաւոր օրագրութիւնը սոսկումով կը լե-  
ցընէ, ու գոհ չըլլար միայն չար գործքերուն իւր  
գրիչը գործածել. հասլա կը նշմարէ երեսակայու-  
թեան օղային խորհուրդներն անգամ. հսկող ա-  
խոյեանն. ահաւոր լրտես. որ մեր բանակին ամեն  
գաղտնի բանակցութիւնը յռելեայն մտիկ կ'ընէ, և  
կը դիտէ մեր դէռ. նոր ծնանելիք նպատակները,  
և մեր ապիրատութեան սաղմը կ'արմատախլի  
կողոպտիչ վաշխառուներու նման, որ կը ծածկեն  
իրենց արձանագրութիւնը իրենց վատնող ժառանգ-  
ներէն. և աւելի դառն առատաձեռնութեամբ ան-  
կշիռ կուտայ ժամանակը մեզի պէս շռայլներու,  
և ինքը առանց նշմարուելու կը նշմարէ ամեն  
մեկ վայրկենին վրիպումները, և պղնձեայ տախ-  
տակէ աւելի տոկուն թերթերու վրայ մեր բոլոր  
պատմութիւն կը գրէ. զոր Մահը պիտի կարգայ  
ամեն վնասապարտ ականջներուն, և դատաստա-  
նը պիտի հրատարակէ. պիտի հրատարակէ ուրիշ  
Աշխարհներու ալ, ոչ թէ միայն այս Աշխարհիս  
մեջ. և անվերջ տարին պիտի հնջեցընէ հե-  
ծեծանքը՝ Լորէնցիօ, ասանկ է ահա քու կուրծքիդ



մեջ ննջողը (խղճմտանքը). այսպէս է իւր ննջումը, եւ այսպէս իւր վրեժխնդրութիւնը՝ իւր խորհուրդը արհամարուելուն համար, եւ այսպէս պիտի ըլլայ քու ապառնի խաղաղութիւնդ. արդ կը խորհիս դեռ, եւ կը կարծես որ երբ եւ որչափ կանուխ ուզես նե, պիտի կրնաս իմաստուն ըլլայ:

Բայց ինչո՞ւ ժամանակին վրայ այսչափ կը վատնեմ երգս. բարերարն բնութիւն այս մեծ բընաբանին վրայ դպրոց մը կը ներկայացընե, որ իւր զաւկընէրը իրմե ուսանին. ամեն գիշեր կը մեռնինք, ամեն առաւօտ դարձեալ կը ծնինք: Ամեն մեկ օրը կեանք է, եւ կը վայելէ ամեն մեկ օրը սպաննել. երե ունայնասիրութիւնը զայն կը մեռցընե, անտարակոյս ուրեմն ջարութիւնը զայն կը մահացընե. ո՞ր ինչ կոյտ սպաննուածներու. առ մեզ վրեժխնդրութիւն կ'աղաղակեն: Ժամանակը կործանելը աննասպանութիւն է. ուր արդեօք ասկէ աւելի առատ արիւն կը թափուի. ժամանակը կը թռի, մահը կը մոզե, թաղման զանգակը կը կոչե, երկինքը կը հրաւիրե, դժոխքը կ'ապառնայ, ամենքն ալ կ'աշխատին, ամենքն ալ ջանադիր են արարչագործութեան աշխատութիւններէն աւելի. ինչ, ասկից աւելի աշխատութիւն կ'ան մի արարչագործութեան մեջ. ինչո՞ւ համար այսպէս ընդհանրութիւնը շփոթած է երազընթաց սուրհանդակի նման,

Եւ եռանդուն ուժգնութիւնը (մարդը) ծուլութեամբ կը յօրանջէ: Մարդս կը ննջէ եւ մինակ մարդը այն մարդը, որուն ճակատագիրը՝ անհրաժեշտ ճակատագիրը է անդրդուելի, վերջին սահման, անվերջ մագէ կախուած, գեփիւռէ անգամ խրթելու մօտ, եւ անդունդին վրայ. զոր մէկ վայրկեանն ալ կը շարժէ, կը ձգէ, եւ մարդը՝ որուն համար ամեն բան վրդովման մեջ է, մարդը՝ որ այս շըրջապատող փոթորիկներուն միակ պատճառն է, տակաւին կը ննջէ՝ իբր փոթորկածայութի (1) վրայ հանգչած. տարիներ կը վատնէ, կարողութիւններ կ'սպառէ. եւ անպարտ կը համարի զինքը. վայրկեանները Երկինքը իրենց բեւերուն վրայ են առած. վայրկեանի մը կրնանք կարօտ ըլլալ. բայց ան ատենը աշխարհիս հարստութիւնը չի բաւեր զայն յապաղեցունելու, եւ հրամայել անոր՝ որ իւր ընթացքը ետ դարձընէ, եւ անցեալ միջոցը անպիտանացընէ, եկած ժամը չէկած ըլլայ. . . Լորենցիօ մենք հրաշքէն աւելի կը խնդրենք, Լորենցիօ — նն էրանի թէ երէկ ըլլար, այս է արթուն մարդուն խօսուածքը, եւ այս եռանդն է որ զքեզ կը նեղէ. ինչ, միթէ իւր եռանդը ունայն է, Լորենցիօ, ոչ. այդ հրաշքէն աւելին՝ կրնայ Երկինք շնորհել, այ-

1. Ծովու մէկ ցցուած ժայռ:

սօրը երեկուան դարձն է, լի գօրութեամբ վերադարձած՝ եղծանելու ջնջելու վերցընելու կազմելու է. զմեզ վերստին խաղաղութեան ժայռին վրայ հաստատելու. արդ թող այս օրը իւր նախորդներուն պէս ջանցնի. միթէ անյա ալ սնոտեաց մեջ պիտի ցնդի, է. փախչի մրճոտեալ, է. զմեզ աւելի ապականութեան պիտի մատնէ. մենք աւելի խեղճ պիտի ըլլանք անոր առատ է. արագ հոսմանը պատճառաւ. Երկնից բարերարութեամբ աւելի թշուառ պիտի ըլլանք:

Ո՞ւր արդէօք կրնամ գտնել էս զԱյն՝ հրեշտակներ, պատմեցէք ինձ՝ ո՞ւր. դուք գիտէք զԱյն: Այն ձեզի մօտ է. ցուցուցէք զԱյն, պիտի տեսնեմ երբէք իւր Երեսաց փառաց ճառագայթները, կամ հետեւիլ իւր քայլերուն՝ նորածիլ ծաղկանց վրայ. ձեր ոսկեղէն քեւերը հիմայ կը տարութերին Անոր վրայ՝ հովանաւորութիւն սփռելով է. գովաբանելով նախատեսութեան Որդին, ճակատագրին Տերը. է. վաղուան ինքնիշխանը որ յաղթանակեց անցեալին մեջ, որուն երեկուան նայուածքը ժպիտով մը էտ կը դառնայ, ոչ թէ Բարբիանի նման թռուած ժամանակը կը խոցէ. այն հասարակ՝ բայց նախատալից բնորդը: Անցեալ ժամերը թէեւ անմեղ անցնին, տակաւին իրենց փախուստովը զմեզ կը խոցեն, երբ յիմարութիւնը մեր բոլոր բարե-

բաղդուքիւնը գերեզմանին մեջ կ'ամփոփէ, ան ա-  
տեն անշուշտ մեր բոլոր ապառնի զգացումները կը  
սառնին . եւ մեր բոլոր Աստուածանման համբե-  
րութիւնը յաւիտենականութեան վրայ կ'ապառնին  
եւ իրականութեան բոլոր հաճութիւնը կը ցնդի :  
Երկնային բոլոր հաղորդակցութիւնը կը ժխտուի ,  
մեր ազատութիւնը շղթայակապ կ'ըլլայ , եւ մեր  
բոլոր փափագները անթեւ կը մնան . մտքերնիս'  
որուն պէտք էր սառնանիլ, մթապատ բանտին  
մեջ կը կարկամի' սողալով փոշիի մեջ . ամեն  
մեծ եւ փառաւոր նպատակներնիս կ'ոջնջանայ, եւ  
ամեն երկնային շնորհքները ապարդիւն կը մնան .  
սիրտը կը մխի Աշխարհիս աներակին մեջ , այն  
Աշխարհս հոգիներու անդունդ . անմահ հոգիներ,  
վէճ հոգիներ, որոնք հրեշտակային եւ հրեղէն  
թեւերով վերին աշխարհները հասնելու էին' հոն  
յաղթանակելու գահերու վրայ . անանկ գահեր, որոնք  
ջի պիտի ողբան երբէք իրենց Տերերուն փոփո-  
խութեանը վրայ, (ըստ որում հոն փոփոխութիւն  
ջի կայ), երկիրես դէպ 'ի հոն պիտի երթանք, ուր  
եղողները թեւ երկնային, բայց ինկան . այսպի-  
սի մեծարանք մը' ո՞ւմարդ, պիտի շնորհուի մար-  
դուս :

Աշխարհս ինքզինքը մեծարողէն կը խորշի,  
ինչ բանի համար' ո՞ւ գուարք բարեկամ . այս

Աշխարհս հպարտացած է, զոր մահը յաւիտենական գիշերի մը մէջ պիտի նետէ . գիշեր մը որ կը մը-բընցընէ զմեզ, քէէ միջօրեական ճառագայթից մէջն ըլլանք . Էս մեր խորհուրդները կ'արգիլէ պատանքի մէջ : Կենաց փոքրիկ տեսարանը՝ փոքրիկ բարձրաւանդակ մըն է, որ մատնաչնփ մը միայն գերեզմանէն բարձր է : Մարդոց տննն է այդ, ուր կը բնակի բազմութիւնը : Չորս կողմեր-նիս կը նայինք, անոնց դամբանականները կը կարդանք, կը հեծենք, Էս քանի որ կը հեծենք, կ'ընկերդմինք . բայց ինչո՞ւ կ'ողբանք, ողբալ կամ ողբացուիլ մեր մի միայն ճակատագիրն է :

Մահը հեռ.ի է մի . ջի . այն . մօտեցած է քե-զի, Էս գրաւական տուած է իւր վերջին հար-ուածին . այն ժամերը որ քիջ մը առաջ կային, ո՞ր էն հիմայ . գունաքափ եղած էն մեր խոր-հուրդին առջէս, Էս խաւարամած ընկղմած էն, ամենքն ալ ընկղմած էն այն ամենի խորխորատին մէջ, զոր ոչ բան մը կրնայ պարպել, Էս անոնք անցնելով, քեզի քիջ հռչակ կը բողոն, մնացեա-լը քէէրնուն վրայ է . իրենց սահիլը ճրքան ա-նօսք է Էս քէքէւընքաց . անա արդէն աղետալի հանդէսը բոցերու մէջ է . վայրկեան մ'ալ, Էս յե-տոյ բոլոր աշխարհը քեզի համար ալ պիտի կոր-ծանի . Արփին պիտի մթննայ, Էս աստղերը հող

պիտի դառնան : Մեծ իմաստութիւն է անցեալ  
ժամերուն հետ խօսիլը , եւ անոնց հարցընել , թե՛  
ինչ լուր կը հասցընեն Երկիրքը , եւ թե ինչպէս  
կրնան աւելի լաւ լուրեր հասցընել . մարդուս  
փորձառութիւնը կրնայ անոնց պատասխանը գիտ-  
նալ . եթէ իմաստութեան բարեկամ է , իւր ամե-  
նասիրելին է . եթէ ոչ ամենէն յիստերիմ թշնամին :  
«Ո՛հ ամոգէ զանոնք» կ'աղաղակէ բարերար  
փորձառութիւնը , « Հոս ոչինչէն 'ի զատ իբրան  
« մը չի կայ , որջափ ալ որ գուարճանանք , նոյն-  
« չափ ալ անոնց ունայնութիւնը կը ճանչնանք ,  
« յաջողութեամբ վիստութեան կը կրթութիւնք» . ա-  
սիկայ չէ թէ միայն այսպէս է , այլ այսպէս  
պարտի ըլլալ . ով որ չի գիտեր այս , թէեւ ալե-  
զարդ ծերունի մըն ալ ըլլայ՝ տակաւին մանուկ է .  
քակէ ուրեմն քու քաղցր գրկախառնութիւնդ աշ-  
խարհէս . վերցնաւ խարիսխը , եւ ուրիշ աւելի եր-  
ջանիկ գաւառ մը փնտրուէ : Ի՛նչ , միթէ անչափ  
հաստատ խարսխուած էս , որ չես կրնար շար-  
ժիլ , եւ ոչ ալ ապառնի տեսարանաց վրայով ըզ-  
բաղմունք մը տալ խորհուրդիդ : Քանի որ կենաց  
անցաւոր շնչառութիւնը երկրէս վեր կ'ելլէ՝ ա-  
մառուան փոշիէն ալ թէթեւ , մենք օդին մէջ մեկ  
վայրկեանին անհաստատ բռիլը կը նշմարենք , եւ  
դարձեալ կ'իյնանք . կը միանանք ճանճրայի զանգ-

ուածին հետ, կ'աւելցընենք կոխկոտուած հողը, եւ կը ննջենք, մինչեւ որ երկիրս իւր կատարածին հասնի. քանի որ ան ատենը (ինչպէս որ մրջիւնք՝ երբ իրենց փոքրիկ աշխարհը կործանուի) մենք վիրայից սոսկումով երկրիս աւերակին վրայ կորագլուխ պիտի սողանք. եւ պիտի հանդըպինք ճակատագրին վախճանին՝ ամօքայից կամ հանդարտ՝ ըստ ընտրութեան մարդոյ (երկնից կառուանք) եւ իւր ինքնիշխան կամաց. իսկ ան ատեն մէկ ժամն ալ (ո՛հ ժամանակը ինչպէս ամենակարող է) պիտի պակսի իրեն:

Մի թէ այս տեղեկութիւններուն ամեն մէկը գմեզ ուժգնութեամբ ջէն վրդովեր. մի թէ սերտ մտերիմներնուս գմեզ վիրաւորելէն պակաս կ'ազդեն. մի թէ ամեն մէկ ժամը ջնձղեր անցնելու ատենը՝ պատի վրայ գրուած այն գուշակական պատգամին պէս, որ կէս գիշերուան հանդեսը վրդովեց, քանի որ հպարտ Ասորին լեցուած էր գոռոգութեամբ եւ զինիով. ահա անոր պէս կը խօսի քեզի ժամացոյցը, Լորենցիօ, որ թէեւ համր՝ բայց պատրաստ է քու խնջոյթդ վրդովելու, « Ո՛վ մարդ, քու թագաւորութիւնդ քեզմէ վերցուած է, եւ ան քանի որ կը տեւէ՝ իմ շուքես ալ « աւելի ունայն է » ժամացոյցին անճայն լեզուն այսպէս կը խօսի: Դուն կարօտ ջես մոզը կան-

ջէլ, եւ անոր նշանակութիւնը լուծել. գիտցիր Մա-  
 դիանացիին պէս, որ քու ճակատագիրդ քու պարիս-  
 պիղ մեջն է, կը հարցընէս, ինչպէս, ուսկից, Պաղ-  
 տասարի նման վրդովելով. մարդուս շինած փակա-  
 րանները՝ մահուան որումը կը պահպանեն, կեանքը  
 կը կերակրէ մարդասպանը: Ապերսխտ, ան կը կե-  
 րակրի բուն քու սեղանեղ, եւ կը դառնայ եւ իւր  
 սնուցիչը կը խայթէ: Հոս խաբէութիւնը՝ Լորէնցիօ,  
 հոս կը պառկի. այդ արեգակնային շուքը քանի  
 որ կեանքը կը ջափէ, կենաց կը նմանի. կեանքը  
 կը հեռացընէ մէկ կէտէն միւսին, քէեւ անշարժ  
 կ'երեւնայ, այդ շոգոքորդ թափառականը հեռանա-  
 լու ժամանակը աննշմարելի է, շարժումը վերջը  
 կը տեսնուի. շուտ պիտի լըմննայ մարդուս ժամը.  
 եւ մենք պիտի երբանք. տեղեկութիւնը մեր վը-  
 տանգը մեզի կը յայտնէ. արեւացուցակներ, ժա-  
 մանակ, որոնք ինչպէս անօգուտ են երբ Արեգը մարը  
 կը մտնէ, անանկ այ ստոնք. բայց երբ անաւոր եւ  
 փառաւոր դատողութիւնը փայլի, գամենքը պիտի  
 դատէ, դատողութեան աջաց առջէն այդ անշարժ  
 շուքը սրընթաց կը ջուէ, բայց մենք այնչափ հա-  
 կամիտ ենք սխալման, որ մեր սրտերը կը կար-  
 կամին կարօտութիւննիս իմացընելու. իմաստունը  
 ինքըզիքը փոխանակ արքուն գտնելու՝ էտ մնա-  
 ցած կը տեսնէ միշտ:



Ուիլմինկըն մը Արեգէն կամաց կ'երթայ. Եւ  
բոլոր Մարդկային սեռը իրենց օրական ժամա-  
նակէն կը խաբուին, տարիներն անգամ. նոր յոյ-  
սեր կը սերմանուին ակօսացեալ յոնգերու վրայ.  
Կենաց էջքը դիւրացընէյու. համար աջուրներնիս կը  
գոցենք, Եւ գայն հարթ հովիտ մը կը կարծենք.  
ձմեռուան մէջ գարնանային գեղեցիկ օրեր կը  
փնտրուենք, Եւ ասանկով մեր վայելքները թոյնի կը  
փոխենք. թէեւ մարդուս պարտքն է իւր ջը գգա-  
ցած տարիները հաշուել, բայց ասոր հակառակ՝  
դեռ ինքըզինքնին տարիներնուն ջափ ծերացած  
ջէն կարծեր. ասանկով մենք կենաց ամենէն վեր-  
ջի երեկոյին մէջ՝ անյոյս ստուգութիւն կը պահենք  
մնացեալը պսակէյու. համար, այսինքն խոստաց-  
ուած ժամու մը անյուսութիւնը: Ասոր Եւ նմանե-  
րուն վրայ, դու Ֆիլանտրոս, որ միտքդ քարոզչի  
մը լեզուին ջափ բարոյական էր, Եւ զօրաւոր՝ ամեն  
իրենց անուանը ջափ յարգ ունեցող գիտութիւն-  
ները ամփոփէյու, քեզի հետ ո՞ Ֆիլանտրէ քանի  
ամառուան օրեր անոնց վրայով խօսելով կ'անցը-  
նէինք, Եւ մեր կիրքերը գով գեփիւռով կը գո-  
վացընէինք. ձմեռուան քանի քանի օրեր ասանկով  
կ'անցընէինք. օգտակար հակաճառութեամբ գաղտ-  
նի ճշմարտութիւններ կը գտնէինք. ինչպէս զի-  
րար գտած էինք, փնտրուէյու արժանի, բայց մե-

ճակեացի համար արհամարհելի: Խորհուրդները բաժնուելով էւ շրթունքէ դուրս անցնելով մաքուր ընթացք մը կ'ստանան. էք ոչ' անպիտան կ'ըլլան, էւ կրնան ոչնչութեամբ էրգ մը յօրինելու գործածուիլ. էրգ հարկաւ անպտուղ' էրեւակայութիւնը աղտոտելու, պիղծ տոփանքը բորբոքելու. էրգ մը' որ իւր սուրբէրը կիբէրեան մեհեանին մէջ կը համախմբէ:

Գիտէս մի կ'որենցիօ, բարեկամ մը ինչ կը նուիրէ. ինչպէս որ մեղուները նեկտար կը հաւաքեն քաղցրահոտ ծաղիկներէն, այսպէս ալ մարդըս բարեկամութենէն' իմաստութիւն էւ հաճութիւն կը հաւաքէ. ազնիւ էրկուորեակներ' բնութեան ձեռքով միացած. որոնք էք գատուին իրարմէ, կը մեռնին: Դու բարեկամ մը ջունիս մի միտքդ անոր հաղորդելու. առանց որոյ բարիխելքը անշարժ կը մնայ. հաղորդակցութենէ գուրկ խորհուրդը օդ կ'ուզէ, էք ոչ կ'ապականի' Արեւէ գուրկ մնացած հակերու նման. էք խորհուրդը առանձին բաւ ըլլար, անոյշ խօսակցութեան կարօտութիւն չէր ըլլար: Խօսակցութիւնը խորհուրդին ծորակը էւ դատման փորձաքարն է. խորհուրդը իւր հանքին մէջէն կրնայ ոսկի ալ էլլել մրուր ալ. իսկ էրբոր խօսքով դրոշմուի, սնն ատեն անոր արձեքը կը գիտնանք. էք հարազատ էւ անխառն

ըլլայ՝ ապառնիի մեջ գործածելու կը պահենք. անոնց յառաջ բերած օգուտը շատ է, ասանկ այ համբարը. խորհուրդը որքան ազատ ձգուի, այն- ջափ աւելի կը շահի. սորվեցունելով կ'ուսանինք է. տալով կը հարստանանք. իմացականութիւնը ծնած ատենը էրէ համբ ըլլայ՝ կը մոռցուի, խօսակցութիւնը մեր իմացականութեան բոցը կը նը- րահրէ, խօսակցութիւնը կը փայլեցընէ մեր մտա- յորական շտեմարանը, կը փայլեցընէ մեր գոհար- ները, է. կը նորոգէ գործածելու համար. սրջափ կամ քանի քանիներ հմտութեան մեջ փակեալ է. ընկղմած են պատուական մատեաններու հատո- րոց մեջ, է. հոն էղծուած. որոնք կրնային ամե- նայն պայծառութեամբ փայլիլ, էրէ խօսակցու- րեան դիմէին, էրէ իրենց մայրենի լեզուին հարա- զատ ժառանգներ էղած ըլլային: Խորհրդոյ փո- խանակութիւնն է որ դիմամարտ այեաց փոփո- խակի հարուածներու նման՝ կը կոտրէ ուսումնա- յից փրփուրը, է. կը մարբէ ուսումնականին կա- յուն ծովակը, որուն հպարտ խորհուրդը կը բարձ- րանայ հայեցողութեան մեջ. բայց այն իւր հպար- տութեանը ջնփի այ խեղճ է՝ էրէ խօսակցութեամբ ջէ խոյացած. անվարժ խորհուրդը վայրենաբար կը շրջի հայեցողութեան դաշտին մեջ. խօսակցու- րիւնը կտորներու կը բաժնէ խորհրդոյ սեպհա-

կան կայարանը, և հետամտութեան մտրակը շը-  
նորհայից զօրութիւն մը կուտայ անոր. հակառա-  
կորդներէ վախցողը՝ խօսակցութիւնը առանձնա-  
կեցութեան կը փոխէ. ինչպէս որ յոգնիլը առույ-  
ջաւետ հանգստութեան կը կարօտի, ասանկ այ  
հայեցողութիւնը անվարժ մնայով կը յիմարի, և  
բնութեան յիմարը իմաստութեամբ կ'ազատի:

Իմաստութիւնը Փերովեան հանրերէն հարուստ  
է. Ամբրոսիական անոյշ փերակէն աւելի քաղցր է,  
և այս է անա երջանկութեան միջոցը. զայն ջըն-  
դունողը ոչ միայն յանցաւոր՝ այլ և յիմար է, սե-  
ւամաղձոտ յիմար մըն է առանց անոր առաջնոր-  
դութեանը: Բարեկամութիւնը՝ որ իմաստութեան  
միջոցն է, առատութեամբ կը շնորհէ մեզ անգին  
վախճան մը, որ մեր իմաստութիւնը կ'աւելցընէ.  
բնութիւնը մարդկային մտերմութեան վրայ նա-  
խանձելով՝ կը խնայէ կամ կը նուաճէ անոր մէկ  
հատիկ զուարճութիւնը. զուարճութիւնը կարեւոր  
է, զուարճութիւնը փոխանակութիւն է, զուարճու-  
թիւնը մենավաճառ. կը բռնի, այն երկու անուն  
ունի՝ հասուն պտուղ, երկնից տունկ. զոր դեռ  
մէկը չէ կրցած փրցունել, մեր բարեկամները մե-  
զի կարեւոր օգնականներ են, առանց բարեկամի  
մարդկային ընկերութիւնը չի երջանկանար. բէե-  
լիւր պայծառ, ձառագայթովը երջանկութիւնը ուղ-

դակի մեր վրայ հոսի, տակաւին իւր տուած երջանկութիւնը տկար կը մնայ, զայն վայելելու համար անդրադարձութիւն կարեւոր է. անդրադարձ հաճոյքները կուրծքը կը ջերմացընեն:

Երկնաւոր երջանկութիւն, որ երբ երկրիս վրայ կ'իջնայ, այն աստուածութիւն միայն մեկ տեղ մը կը փնտրուէ, եւ մեկ տեղ մը միայն՝ իւր Երկնային քաղցրիկ շնորհները ընծայելու. . . բարեկամի մը կուրծքը կը փնտրուէ, ուր սիրտը սրտին կը հանդըպի. փոփոխակի մեկ մեկու հանգստութեան երկնային փափուկ բարձեր, անկէդծ. տենջանաց բոցերու մէջ կը հայլի սիրտը, բայց սառի պէս կը հայլի. շուտ կը կարծրանայ: Ճշմարիտ սերը կ'արմատացընէ դատողութիւնը. առաքիւնութիւնը միայն զմեզ կենաց կ'արժանացընէ. եւ ինչ կ'ըսեմ, — մեզ յաւիտենականութեան կ'արժանացընէ: Բարեկամութեան ընտրելագոյն գեղեցիկ պտուղները՝ Առաքիւնութիւնը միայն կրնայ արգասաւորել, եւ մրցել իւր արշաւին մէջ:

Ո՞ր քաղցր մրցումն. ո՞ն հաճելի նախանն. որ կրնայ բարեկամութիւնը իւր կեղորոնին հասընել՝ անոր յաւիտենական քեւեր տալով: Բարեկամութիւնը որ, իմ նախնի բնաբանս կ'անմահացընէ. հին աւուրց ժամանակին եւ Մահուան փառաւոր տեսնւջ. իմաստունը՝ բարեկամութենէն (Երկնային սերման

ծաղիկ) կը նիւթէ Երկրիս Հէյպլեան Երանութիւնները. ընտրագոյն իմաստութիւն. որ Երանութեան պսակովը կը պսակուի: Բայց որո՞ւ համար կը ծաղիկի այս Եղիւսեան ծաղիկը. ով որ իւր տանը մէջ գայն կը խնամէ, գայն ամեն տեղ կրնայ գտնել. Լ՛որէնցիօ՛՛ ներէ ինձ, ներէ սիրոյս բռնութեանը, անկեղծ սեր մը՝ որ չի վախնար խոժոռ. դեմքէն. մեծամեծ յիմարութիւնները մեծամեծներուն քով էն, ոչ որ անէլի կամակորութեամբ կրնայ յարիլ անոնց՝ առանց յիմար Երեւակայութեան. սրբագան բարեկամութիւնը անոնց ամենէն դիւրըմբռնելի որսն է. անոնք ոսկեղէն հրապոյրով գայն կ'որսան, կամ իրենց ժպիտին դիւրութեամբը. իրենց ժպիտները պջրանք էն, զոր հարուստներն ու տարփածուները կը գործածեն՝ ուրիշներու սրտերը որբալու համար. բայց իրենց սրտերը մեկու մըն ալ չեն տար. սակայն գիտցէք՝ ո՞ր բարեբաղդութեան զաննապետներ, մենք ալ մեր սիրտը ձեզի չենք տար, մեր տուածն ալ լոկ պջրանք է, ո՞ր զօրանոր հարուստներ. դուք ձեր վարձկաններուն ապիրատութեամբ կ'անիրաւեք, մեր սերը կ'ուզէք, բայց ոսկին մի քէ բարեկամութիւն կրնայ մի գնել, չիրք յնյս, անէլի դիւրին է որ մարդս հրեշտակ մը ծնանի. սերը եւ միայն սերն է սիրոյ փոխարէնը. Լ՛որէնցիօ հպարտութիւնը քող նուաճի, է.

դադարի բարեկամ մը գտնելու յոյսէն. բարեկամ մը քու վրադ ինչ կրնայ գտնել՝ զայն գնելու. եւ շատ քիչ մարդիկ անոր գինը կը վճարեն, եւ անոր համար է որ երկրիս վրայ բարեկամ գտնելը հրաշք սեպուած է :

Ի՞նչ կ'ըլլայ, եթէ (որովհետեւ համարձակեցայ այսպիսի ընտիր բնաբան մը ձեռք առնելու.) եւ բարեկամութիւնը ձեզի բերկրալի եւ սիրելի ցուցնեն, եւ յայտնեն որ՝ թերեւ տարակոյսն անգամ կրնայ մեռցնել զայն՝ զգուշութիւնը զայն խոցել՝ եւ անվտանգութիւնը զայն կործանել. ամեն բանի վրայ խորհրդակցէ բարեկամիդ հետ, բայց որովհետեւ բարեկամ գտնելը դժուար է, եւ գտնուածն ալ տարակուսելի, ուրեմն նախ ինքըզինքիդ հետ բարեկամացիր, եւ ինքըզինքիդ հետ խորհրդակցէ, քննէ, խորհէ, փորձէ, մի՛ աճապարէր շուտ գտնելու, մի՛ նախանձիր գտնուածին, գտնար մէյ մը՝ հաստատուէ. բարեկամութիւն ընելէդ առաջ խորհէ, եւ ետքը մինչեւ իման վստահէ. այս աղէկ է քու բարեկամիդ համար, իսկ քեզի համար ազնուութիւն է. կսնջ մի երկրիս վրայ այնպիսի վստանգ մը որ անոր գնոյն հաւասարի. բարեկամ մը մեր կենաց ամեն արկածներէն աւելի զին ունի:

“Թէեւ” Տեր բլլայ Ալխարհիս, աղքատ է ան բարեկամը, . .

“Եթէ Ալխարհը տրուի բարեկամի մը փոխարէն, դարձեալ լան է, . .”

Այսպէս կ'երգէր այն, (հրեշտակները անգամ  
 զայն հաճութեամբ մտիկ կ'ընէն, հրեշտակային  
 էրգ. հրեշտակները անգամ իրենց երջանկութեան  
 կեսը բարեկամութենէն կ'ստանան). այսպէս կ'երգէր  
 Ֆիլանտրոս, երբ իւր բարեկամը կ'գմայլէր պատ-  
 ուական շարաւին մեջ՝ Բագոսեան ազնիւ արեան  
 մեջ. ուրախութեան հնարից ծիրանեզոյն գուարք-  
 էրես ոգի. այն շատ անգամ իւր բարեկամին ա-  
 ուողջութեանը եւ առաքինութեանը խմեց, իւր  
 բարեկամին, որ զինքը աւելի ջերմացուց. որմէ  
 աւելի շունչ առաւ: Բարեկամութիւնը կէնաց գի-  
 նի է. բայց նոր բարեկամութիւնը (ասանկ չէր ա-  
 նորը) ոչ ոյժ ունի՝ ոչ մաքրութիւն:

Ո՛հ, այն պայծառ որակութիւնը, այն խանթա-  
 կաթ աշխոյժը, բարեկամի մը գերազանց ոգին,  
 այն քսան ամառներով հասուցած էր, ա-  
 մէն ընկերական յարաբերութիւնները իւր հոգւոյն  
 մեջ ամփոփած էր, եւ հեռու էին իրմէ ամէն մը-  
 րութեայ ստութիւնները. սկանակիտ ջրոյ նման  
 մաքուր եւ գուարթ էր, հոս կը բոխի նեկտարը,  
 եւ մեր տեսութեանը առջեւ կը փայլի. խիստ  
 համեղ է եւ սրտի հաճելի, զոր Երկինքն անգամ  
 օրհնած է. նի, ինչպէս այն՝ երկրիս վրայ նուազ  
 է, եւ գրեթէ կորսուած. — Ֆիլանտրոսը չի կայ այլ  
 էն, կը կարծես որ այս բնաբանը զիս կ'արբէ-



ցընէ, շատ ջէրմ էմ ես, — ես խիստ ջերմ չեմ կրնար ըլլալ. ես գայն շատ սիրեցի. բայց հիմայ աւելի կը սիրեմ, բռնուններու նման, որոնց գեղեցկութիւնը՝ երբ բառած էն, չի տեսնուիր, մինչէն որ բռնու սկըսին, ան ատեն իրենց տարածեալ բեւերը կը լուսափայլի՝ կապուտակ, կանաչ է. ոսկեգոյն. ինչպէս անոնց վսեմութիւնը կը փայլի բռած ժամանակին, Ֆիլանտրոնսն ալ բռաւ. մինչէն հոն բռաւ. ուր հոգին հասնելու կարող էր. երանի թէ ձգած ըլլար (այն արծիւ ոգին) մէկ փետուր մը իւր թռակն. ան ժամանակը ես կրնայի գրել, ինչ որ բարեկամները կրնային շողումել. թէն լիբբ թշնամիները խորշին. է. հազիւ հակառակորդները կըրնան բամբասել: Բայց կարողութեանս ներածին չափ պարտիմ ընել. քրեական յանցանք մը գործած պիտի ըլլամ եթէ երկնից մէջ վառեալ այսպիսի փառք մը մարելու ըլլամ, է. իւր փառասոր վախճանը շուրի մէջ նետեմ:

Ջարմանք, խիստ ազդու բնաբան, խիստ ընտիր, է. մարդուն ամենէն աւելի պիտանի. մի թէ բունը պիտի չերգաբանուի, քանի որ ան (Ֆիլանտրոսը) կը ննջէ, քրիստոնէայ մըն է՝ որ կը ննջէ. հանճարոյ յանկարծական երեսունը՝ մարդուս ամենէն աւելի յաղթանակն է. մարդուս անդնդային

անկումը՝ արդարեւ մահուան անկողին, որ դեռ ստորագրուած չէ մահկանացու ձեռքով. որ կըրնայ երկնայինի մը արժանի ըլլալ. հրեշտակները զայն պիտի գծագրեն, հրեշտակներ հոն պատուոյ էւ ուրախութեան դիրք մը կը պահեն:

Կրնամ մի ուրեմն էս նկարագրելո՞ւ համարձակիլ. բայց Ֆիլանտրոսը կը հրամայէ, փառքը կ'ըստիպէ, էւ յօժարութիւնը կը հրաւիրէ. բայց էս տակաւին անշարժ էմ, հողին մէջի եղողներուն սէս անշարժ. երբեքական անտմո՞ւ, անբաժանձեյի աղջամնուղջ. ամենի աւերակի մը անեղ շուքին մէջ չորս դիս կը նայիմ աղօտայոյս կանքեղով մը, ազնուական հողին վրայ, գերեզմանատան մէջ. անշողորորբելի խեղճ արքայից զազիր ապաշննը. կամ նուիրական տաճարին կէս գիշերուան բոցերը կը տեսնեմ . . . կրօնքն է որ պիտի դատէ. էս կը խորհիմ էւ կը մտնեմ սոսկայից՝ իմ համբաւոյ տաճարիս մէջ. այս իւր մահուան անկողինն է մի. նջ. իւր պատսպարանն է, դիտէ, նկատէ, զայն. . . առ Աստուած կը սաւառնի:

Այս այն սենեակն է, ուր բարի մարդը իւր բաղդը կը հաւաքէ. առաքինի կենաց հասարակ ճամբայէն առաւել, բոյրովին երկնից սահմանը կը մտնէ . . . :

Փախիր՝ ո՞ւմարմնասէր, երէ ոչ հոս սոսկումով մօ-

տեցիր, ընդունէ օրհնութիւնները, և բարեբաղ-  
դութիւնդ գովաբանէ. ասանկով միայն կրնաս քու  
հիւանդութիւնդ այս Բերնեզդայի աւագանին մեջ  
նետել. երէ ասանկով ջառողջանաս, ալ մի յու-  
սար բժշկուիլ. վասն զի հոս անհակառակելի ա-  
պացոյցը կը բնակի: Մահուան անկողին մը սրտին  
յայտնիչն է, ուր հոգնած կեղծաւորութիւնը վար  
կառնէ իւր դիմակը՝ կենաց պատիր կերպարանքը՝  
աշխարհի տեսարանի տիրունին, ուր իրականը  
և երեսուրականը մի էնոյն են. կը տեսնես մար-  
դը, կը տեսնես իւր Երկինք հասնիլը. երէ լսելի  
ըլլայ իւր առաքինութիւնը, ինչպէս որ եղաւ Ֆի-  
լանտրոսինը, ան ատենը Երկինք վերջին վայր-  
կեանին ջի սպասէր, իւր բարեկամները մահուան  
միւս կողմը կ'անցընէ, և զանոնք մարդոց կը  
ներկայացընէ. յուռ. կշտամբանք. բայց խիստ ու-  
ժեշ և ազդու, անօրէններուն վրդովմունք, և առա-  
քինիներուն խաղաղութիւն:

Թնոգ խաղերգութիւն մը, որչափ որ համարձակ  
կրնայ, դիւցազնը կը ներկայացընէ. բայց Առաքի-  
նութիւնը միայն վեհանճնութիւն ունի մահուան  
մեջ, և այնչափ աւելի կը մեծնայ, որչափ որ  
բռնաւորը կնճռէ իւր ճակատը. Ֆիլանտրէ, այն  
բռնաւորը դժնդակ զժամնեցաւ քու վրայ, «Ա-  
ռանց նշան տայու. անմարդավար ճակատա-

« զիր. — յանկարծուստ էլլայ կենաց միջօրեական  
 « վայելումեն. մեր ամեն սիրելիներեն մեկեն 'ի մեկ  
 « զրկուիլ. անհանգիստ ցաւոց անկողին. վհատիչ  
 « է. անկարծելի մրութիւն. տկար բնութեան  
 « սոսկումն. զօրաւոր դատողութիւն օտար մրու-  
 « քեան մեջ զողջղնայ. մարանձ արվի մը. նոր  
 « բացուած գերեզման մը. է. . . ան. . . վերջը. . .  
 « վերջը. . . ինչ (կրնայ մի լեզուն բացատրել, է.  
 « կամ խորհուրդը վերահասու ըլլայ). վերջը . . .  
 « բարեկամի մը լրութիւնը»:

Ո՞ր էն սոսկումները. շուարումները. ինչ, այս  
 անաւոր ջարեաց կոյտը (որոնց ամեն մեկը կը զարհու-  
 րեցընէ) մարդէն կը պահանջուի — էս զայն մինչէս  
 ցարդ մարդ կը կարծէի: Բնութեան եղծման ժամանակը  
 հոգեւարգութեան ժամանակը (ինչպէս աստղերը կէս  
 զիշերուան մրութեան մեջ կը վայլիլին) ինչպէս գու-  
 արբութեամբ կը ճառագայթեր. ասկէց աւելի ինչ  
 խաղաղութիւն կրնայ ըլլայ Մարդկային սեռին  
 համար. . . ո՞ր է կորստական մահկանացուն. խեղճ  
 է. ողորմելի որդը. ո՞չ, մահուան մեջ մահկանացու  
 չի կայ. իւր վարքը հրեշտակ մըն է ամենուն. Մա-  
 մոնայէն ալ հարուստ է, իւր մեկ հատիկ ժառանգ-  
 րին պատճառաւ. Այն կը մխիթարէր իւր մխիթա-  
 րիչները, վեհանձն էր իւր անբմանը մեջ, անդժկա-  
 մակ վստմութեամբ տուաւ զ՝ քէ աւանդեց, իւր

ընտիր հոգին, և ճակատագրին հետ աւարտեցաւ: Ո՛րչափ մեր սրտերը ջաւեցան այս տեսարանէն: ուսկից է այս գօրութիւնը մարդուս՝ իւր կատարածին մօտ. Աստուան՝ օժանդակեց իրեն իւր վերջին ժամուն մեջ. իւր վերջին ժամը փառք կ'ընծայէ Արարչին. Երկինք կը շիջանի մարդուս փառքը իրեն սեպնականելու, մենք կը դիտենք, և կ'արտասուենք. վշտով և ուրախութեամբ խառն արտասուք. ան աստեղ սոսկումը կը հարուածէ. ջերմեռանդութիւննիս կը հրահրի. Քրիստոնէայները կը յարգեն, և անհաւատները կը հաւատան:

Ինչպէս բարձր լեռան մը կամ աշտարակի մը գագաթը որ իւր բարձրութեան պատճառաւ տակաւին կը լուսափայլի, քանի որ էլլող շոգիները և իջնող շութերը, խոնաւութեամբ և մրութեամբ կը ծածկեն իւր ընդարձակ ստորոտը, և ինքը խոնաւութենէ ու մրութենէ ազատ կը մնայ, նմանապէս Յիլանտրոսն այ այսպէս օգոստափառ իւր գլուխը կը կանգնէ, այն սեաւ վայրկէնին, որ ընդհանուր սոսկումն կը սփռէ վարը գտնուող փառագործի ամբօխին վրայ: Քաղցրիկ խաղաղութիւն. Երկնային քնք. խոնարհ ուրախութիւն. Երկնային ճառագայթ մը կը ցոլանայ իւր փառաւորեալ հոգւոյն վրայ, մանր գայն Երկնային ոսկեղէն պակով պղտակեց՝ անճառելի լոյսով պայծառացընելով:

# ԳԻՇԵՐ ԵՐՐՈՐԴ

ՆԵՐԿԻՋԷ

---

ԱՌ

ՇՆՈՐՀԱԶԱՐԴ ԴՔՍՈՒՅԻ Փ—

---

*Ignoscenda quidem, sciunt, si  
ignoscere manes.*

*Virg.*

---

Ահա դարձեալ կ'արթննամ երազներէն, ուր խոր-  
հուրդը շուարեալ երեսակայութեան մեջ յիմարա-  
բար կը շրջի դատողութիւն ընելու (ահա կանքեղ  
մը, զոր երկինք վառելով մարդուս նուիրած է), եւ  
որոշեալ ժամանակէն, առանց վրիպելու. ինչպէս  
որ սիրահարք խոստացեալ վայրկէնին, անանկ ալ  
էս ժամադիրութիւնս կը պահեմ բշուառութեանցս  
հետ. ո՞ն՛ կորնւտ առաքինութեան. կորնւտ մարդ-  
կօրէն խորհուրդներու, կորնւտ ազնիւ ուժգնու-  
թեան հոգւոյ. ո՞վ կը խորհի բնաւ որ առանձին ըլ-

չայլ առանձնակեցութիւն է. քաղցրիկ ընկերութիւն, մեծ է. բարձր ընկերութիւն: Մեր դատողութիւնը, առաջնորդող հրեշտակը, է. մեր Աստուածը, ասոնք ան ժամանակը կը մերձեցան, երբ ուրիշները կը հեռանան. ամենքն այլ վերջապէս կը հեռանան՝ սակայն ասոնք ոչ... բայց որքան ահարկու է անոնց հետ առանձին մնալ. . . : Օտարական՝ անծանօթ՝ անփորձ. հիմայ սիրահարէ անոնց. պսակուէ անոնց հետ, կապէ զանոնք կուրծքիդ՝ քու փափաքդ յաղթելու համար. . . արարչութիւնը ասկից առաւել ջունի, բայց երէ չորրորդ մ'այլ կ'ուզենք, ան այլ բարեկամ մըն է. — բայց բարեկամները նրպիսի մահկանացու են. այս փափաքը վերտանգաւոր է: Փեպոսը ձեզի առեք ո՛ր հրահրեալ բարդեր, է. արբեցեք բարեբաղդութեան աղբիւրեն, է. տատանեցէք ուրախութեան անապատին մէջ, ուր իմացականութիւնը վայրենաբար կը շրջի, դատողութեան շղթայներեն ազատ, է. կեղծ խաղաղութեան երգեր կ'երգէ, մինչեւ որ դագաղի ծածկոյթովը ծածկուի:

Իմ բաղդս տարբեր է, է. երգս այլ, է. իմ երգիս մաղթած Աստուածութիւնն այլ. էս այս օրուան քաղցրահայեաց Քոյրիկն (Էնտիմեբնի նախանձորդին) իմ մեծարանքս կը մատուցանեմ, իւր օգնութիւնը կը խնդրեմ. արդ առաջին անգամ խնդրա-

ծրս Մուսային նպաստն է. . . :

Ո՛վ դու. որ շատ ժամանակ չէ որ Կինթիային կերպերանքը\* առիք, էս համեստաբար բուկղ բողոցիր, նվ դու որ կես գիշերուան ժամերուն մեջ ազդեցութիւն տուիր, ինչո՞ւ չես պատասխաներ Կինթիա՛ն էրգոց Սրբունի պաշտպան, քանի որ դու անոր Մահիկն էս. ան այ բու պատկերդ կը սեպնականէ, էս այս փոփոխութեան առէլի գեղեցիկ Աստուածունի մը կ'ըլլայ: Կան մի տարակուսող հանճարեղներ որ կարենան վիճելու համարձակիլ այս վրդովման վրայ՝ Աշխարհիս մեջ ո՛ր Բիւրեան հանդիսներ, լուսնական գունտին լուս. ժամուն մեջ ընծայէ բու եռանդուն ինչիւնդ անմահի օգնութեանը. ան (լուսինը) իւր եղբօրը իրաւունքն առաւել ներդաշնակաբար գիշերով կ'առաջնորդէ վարանեալ պարը, էս կը լսէ անոնց անգութական մեղեդիները, երկնային մեղեդի՛ որ գլացուած մահկանացու ականջներէն. գայն լսելի ըրէ ո՛ր երկնից արժաբեղէն բագունի. ինչ անուն քեզի առէլի յարմար է. Կինթիա, Կիլիսա Փեպոս. կը լսէս մի, առաւել բերկրութեամբ՝ երկնից գեղեցիկդ Փ—. այս է այն փափուկ էս դիւրող անունը որ քեզ վար կը կանջէ. ո՛ր հին Կիրսանէն

---

\*Նորֆօքսի դուքսին պահարանդիսին մեզ:



առաւել յափշտակող գեղեցկութիւն, եկնւր, միայն թէ երկնային հանդեսէն հետոյ բեր' երգոց հոգին. եւ իմ ունկանցս հջնէ այդ երկնային գողօնը, կամ քաղցր երազներու մէջ (վասն զի քուկիններոյ երազներ են) թափէ զայն կուրծքիս մէջ' քու առջի սիրովոյ, բայց ոչ վերջին, եթէ քու անուանող պէս բարերար մըն էս. եւ դուն բարերար պարտիս ըլլայ, բարերար' այսպիսի բնաբանի մը վրայ, բնաբան մը' որ թեզ կը նմանի, բոլորովին լուսնական բնաբան մը, փափուկ' համեստ' մեյամաղձոտ' իգական, եւ գեղեցիկ, բնաբան մը' որ զամենքը կըտըխրեցընէ, եւ կը խօսի հոգիիս:

Գիշեր էր, իւր (Ներկիգէին) սիրելի յոյսերուն գիշերը, գիշեր մը' որ մեռելատիպ խոնաւութիւն ուներ, այն գիշերէն աւելի անարկու, այն գիշերէն' որ զիս Ֆիլանտրէին գերեզմանին վրայ ձգեց. բայց Ներկիգէինը անոր գերեզմանը ծածկեց, թշուառութեանց հաւարնամն. առանձին թշուառութիւնք քիչ կը պատահին. անոնք հանդես կը սիրեն, անոնք իրարու ետեւէ կը քայեն: Ներկիգէին մահը Ֆիլանտրէին իրաւացի ողբերը գրաւեց, եւ խընդրեց այն ողբերը, զորոնք իմ շքրունքս իւր եղբօրը կը ձօնէին. զանհաւատն այ, կը գրաւէ օտարացեալ արտասուրը, զոր կը հեղուն բաժնուած ժամանակնին. այսպէս յանախ մահը

տրամութիւն կը պատճառէ եւ կ'ապշեցընէ, Մարդկային ողբով այն գոն կ'ըլլայ, եւ աղետները կը սատկացընէ: Ա՛ն Ֆիլանտրէ՛ ինչ էր քու ճակատագիրդ, էրէ ոչ իմ կրկնակի ճակատագիրս. նշանէ՛ ցաւ, սպառնալիք մը, եւ հարուած մը, որ տըխրագուշակ սեաւ ագռաւին նման իմ խաղաղութեանս շուքըը բռնըտելով՝ որչափ որ իբրեւ գուշակութեան բռնուն մը նոյնչափայ որսի՛ նն, Ներկիզէն իւր ժամանակէն առաջ կանչէց, քանի որ անոր փափուկ հոգին այն ինչ կը վայելէր բարեբաղդութիւնը. խլէց զայն իւր առաջին ծիլէն՝ ուշախութեան կոկոնէն. քիչ բան կան որ մեր դժնդակ ճակատագիրը առանց թշուառութեան կը բողոսն՝ կենաց այս դառնաշունջ կլիմային մէջ:

Ներկիզէ՛ Ներկիզէ. քաղցրիկ ներդաշնակնդ, գեղեցիկ՝ որքան որ քաղցրիկ, մանկամարդ՝ որքան որ գեղեցիկ, փափուկ՝ որքան որ մանկամարդ, ջքնաղ՝ որքան որ փափուկ, անմեղ՝ որքան որ ջքնաղ, եւ երջանիկ՝ (էրէ հոս կայ երջանկութիւն) որքան որ բարի. վասն զի յիմար բաղդը իւր բոյնը հաստատած էր անոր վրայ որ բոյորովին կատարելապէս բռննոց նման էր տեսքով եւ փետուրով, բաղդը (որ կը սիրէ բարձր նըպատակ մը) զայն խոցելով ինչպէս ձգէց իւր բաւութին եզրէն, եւ զայն աններդաշնակ բողոսց. իւր

ամեն զմայլումները իւր երգերուն հետ սպառեցան. իւր երգերը տակաւին իմ ականջացս թլմբուկները կը հնչեցընեն, ուր տակաւ նուաղելով՝ (նմ ինչպէս զինքը մոռնամ) սրտիս կը թափանցեն. երգ՝ գեղեցկութիւն՝ մանկամարդութիւն՝ սեր՝ առաքինութիւն՝ ուրախութիւն՝ զուարթ գաղափարներու պայծառ շէղջ, դրախտի ծաղիկներ, ասոնք դեռ անկորուստ են. մի է. նոյն բոցի մէջ մենք կը միանանք, կը ծնրադրենք է. երկնից կը շնորհենք. վասն զի ամեն բան յերկնից կ'ընդունինք: Այս ամեն բարեմասնութիւնները Ներկիզելինն էր, է. այն իմս էր. է. էս էի. . . էի խիստ երանեալ, ջքնաղ տիտղոս ամենախոր թշուառութեան: Մարմինները երբ կարեւոր կ'ըլլան հասուննալով՝ կեանքէ կը կողոպտուին. ազնիւ կողոպնւտ, որ յաւետ թշուառութեանց մէջ կը կշռի՝ քան թէ երջանկութեան մէջ կը շահի՝ մատաղ ծառերու նման, որոնք զարնանային փոթորիկով յերկիր կը կործանուին. մահուան մէջ սիրելի գեղեցկութիւնը աւերակ կը պառկի. արդ եթէ մահուան մէջ սիրելի է, հոն առաւել սիրելի է, խիստ սիրելի. զուրթ կը զօրացընէ սիրոյ կապը. ուստի այսպիսի թշուառութիւն մը բաւ չէ՞ ողբացընելու, նախատինք հպարտ մարդուն՝ որ կ'ամբընայ արտասուելու. մեր շնորհաց արտասուքները

յիբաւի մեր նախատանացը արժանի են: Ո՛վ դուք  
որ հրեշտակ մը կորուսած էք, գրացեք ինձ: Ան-  
միջապէս երբ իւր աջաց լոյսը նուաղեցաւ մարդ-  
կային տեսութեան առջեւ, խաւարացեալ օր մը  
կը ներկայանար. եւ իւր այտերուն վրայ՝ զարնան  
կայան, տխուր գուշակութիւնը տեսնուեցաւ, եւ  
սուկումն տիրեց այն ամենուն վրայ, որ իրեն կը  
նայէին. (եւ զով կրնար դադարել իրեն նայելէն, ե-  
թէ անգամ մը զայն տեսած ըլլար). շտապով՝ ծը-  
նողական շտապով աճապարեցի ես, ես յափըշ-  
տակելով հեռացուցի զինքը անողորմ հիւսիսէն  
իւր հայրենիքէն, ուր ցուրտ Բօրեասը\* կը փչէ, եւ  
տարի զինքը Արեւին աւելի մօտ. Արեգը (իբր թէ  
դժկամակած ըլլար) զլացաւ իւր ճառագայթը, խը-  
նայեց իրմէ խնդրուած օգնութիւնը, անտարբեր  
դիտեց անոր նուաղումը ինչպէս շուշաններուն, ո-  
րոնք թէեւ ամենագեղեցիկ, բայց ոչ Ներկիզէիս  
հաւասար:

Ո՛ր բազումի շուշաններ, ճ դաշտաբնակ Երփն-  
Երանգ բազմութիւն, որ ամբրոսական կեանք կ'ան-  
ցընէք, առաւօտեան եւ երեկոյեան ցօղով մեր գեղեց-  
կութիւնը կը լուար, եւ մեր այտերուն բորբոք տուող  
արփին կը վայելէք, եւ տակաւին գունաթափ

---

\* Հիւսիսային հողմ

կ'ըլլաք (բաց 'ի Ներկիգէես), դուք ուրախութեամբ կ'աճէիք, իւր ձեռաց պատուամոյն էիք, անու՛ որ շատ անգամ ձեր բուրումը կը հոտոտէր, եւ ձեր բուրումը անոր գուտ ուղեղին կը դաչէր, անոր՝ որուն ծաղկային մտաց գուարբութիւնը տակաւին ինկած չէր. նվ սիրելի վաղանցիկներ՝ վիճակակից մարդկային սեռին, մարդուն համար դուք կը կը գուարթանաք. ինչո՞ւ ուրեմն իւր վրայ չէք գուարթանար. դուք՝ բաժանորդ կ'ըլլաք այն անոր յանկարծական աղետիցը, բայց ոչ իւր յարատեւ վշտացը:

Մարդս գուարճութեանց տէր ստեղծուած չէ. բայց իւր բորբոքած կիրքը ինչո՞վ կրնայ զբաղիլ. բորբոքած կիրքէր՝ որոնք առարկայ մը կը խնդրեն երկրիս վրայ. բայց շուտ կամ ոյշ ցաւոց կը դառնայ կարգը. այն ցաւոց՝ բայց գրաւութեն վերջը. նրբան սոսկայի յափշտակութիւ, համարձակ մարդ, որ կը փորձէ երկնային բարկութիւնը, բրցընելով այն պտուղը՝ որ արգիլեալ է մարդկային ճաշակին. հոս իբր Նրկնից պարտականութիւնը սեպելով՝ անկից ամեն մէկ ժամիդ փոփոխութիւն կը խընդրէս Լնրենցիօ, քու բարեկամիդ կորուստովը գունէ իմաստուն եղիր. մի կրքընիր երկրիս, որ մինչեւ սիրտդ կը խոցէ, այն՝ իւր լաւագոյն վիճակին մէջ կոտորտած կոճղ մըն է, բայց շատ անգամ

նիզակ. անոր սուր ծայրին վրայ բարեբաղդութիւնը կ'արունի, եւ յոյսը կ'սպառ.ի. դարձիր՝ անյոյս խորհնւրդ, դարձիր անկէ՝ հալածեալ խորհնւրդ. վրեժխնդիր ծիծաղողներ. որոնք քշուառութիւններ կ'արգասաւորեն. քու մանկութիւնդ յափշտակեցին քու հարսնացու ժամանակիդ մեջ՝ անանկատեն մը՝ էրբ բարեբար բարեբաղդութեամբ կ'ըզմայլիր քու սիրականիդ հետ, էրբ մօտ էր քունոր գուարթութեան օրերդ, էրբ կոյր մարդիկ անգամ քու էրջանկութիւնդ կը կրկնէին օտար էրկրի մը մեջ, ուր օտարականներն անգամ արտասուեցին, եւ անէլի զարմանային՝ բարեբարութեան անգամ օտարականները արտասուեցին. իրենց աչուրները՝ թէեւ ոչ մարդասիրապէս, արտասուրհուեցին, օտար արտասուրներ. արտասուրներ՝ որոնք արաստոյ սրտերէ դուրս բափեցան. դաժան զգացմանը որ զանոնք առանէլ դժնդակ ըրաւ. կարծրացան անոնք՝ ի նախատինս բնական փափուկ յօժարամտութեան. ու էրբ բնութիւնը կակղացաւ, սնապաշտութիւնը կարծրացաւ. անոնք որ ողբացին մահը, զերեզման մը Ներկիգէես խնայեցին. բորբոքեցաւ իրենց հեծեծանքը՝ որուն օտարական էր իրենց կամբը. վագրը յափշտակեց անոնց կամբը, անցաւ փորորիկը. բայց... ահ... այն անիծեալ անսուրբ նախանը... քանի որ մեղսալից դիակը թուցաւ,

հողին խնամուեցաւ կոյր անոխակալութեան զըրկին մէջ. սրբացած հողին խստացուց կուրծքերը. որոնք խնայեցին հողը հողին վրայ սփռելու առաքինութիւնը. առաքինութիւն մը՝ զոր իրենց շուներէն անգամ ջեն գլանար. ես ինչ կրնայի ընել. ինչ օգնութիւն, ինչ դարման. . . համեստ սրբապղծութեամբ Դերեզման մը ես գողցայ, անիրաւ երկիրաձուրթեամբ գերեզման մը անիրաւեցի, արագ էի պարտականութեանս մէջ, անարի՛ իմ ողբոցս մէջ, աւելի իբր իւր մարդասպանը՝ քան թէ իւր բարեկամը. սողացի ես անճայն քայլերով, եւ շրջապատուելով կէս գիշերուան խոր մութեամբը՝ իմ վերջին հեծկլտութիւնս անխելի ընելու ջանքով, եւ ջի տալով անոր անունը, որուն գերեզմանը Երկնից գուրբ կը շարժեր, վատ երկիր, ինչպէս վախցայ իւր թշնամիներէն, քանի որ բնութեան ամենաբարձր հրամաններուն եւ հնազանդեցաներուն կը խնդրեմ՝ օրհնեալ շուք. ցաւեւ եւ հակառակորդացս վայրենաբարոյութենէն զրգուելով դուրս թափեցի բերնես աղօթիցս հետ խառն անեծք՝ գայրանալով այն մարդոց վրայ, որոնց Աստուածը յարգելու զբաղած էի. կարեւոր գանգատեցայ Ներկիզէին սուրբ հողը պարունակող վայրենի երկրին դեմ, տրոփելով անիծեալ հողը, եւ մարդկօրէն (Ներկիզէին զլացուած) գերեզմանը

անոնց ամենուն համար այ մաղբեցի\*:

Միթէ յանցանք է գայրանալս. ինչ յանցանք կրնայ հաւասարիլ մեռ.է.ի մը դէմ եղած բարբարոսութեան. մեռ.եալը ճրքան սուրբ է. սուրբ է հողը զոր Երկինք ձեռակերպեց. որմէ Երկինք սեպհականեց իւր Անճին. Իւր վեհանճնութիւնը երկրիս հողը հագնելու զիջաւ, Այն որ հաստատեց սա ընդարձակ տարածութիւնը կապուտակ պայծառութեամբ, եւ արփին սակիով զգեցուց. երբ որ ամեն կիրքերը կը ննջեն, Այդ կրնայ նախատել:

Երբ ամեն մէկ վայրկեանները մեզ կը հարուածեն, Այն կրնայ ամոքել. երբ որ մարդս կըրնայ իւր խարիսխը խորտակել առանց սանճութեան, նախատանաց եւ ջար կամաց այդ գօրաւոր սանճահարութիւնը ան ատեն հողին կը սրտմտի. անմեղութեան հնդ, հրեշտակի մը հնդ. որ կը զերգանցէ Լուսիփերը. որ երբ իւր նախահարցը ոսկորներովը գոն եղաւ, հակառակութեան եւ ջարասիրութեան արգասիքը չէր, միայն քահանայապետական հպարտութեան. Ամենաբշուառ. ցեղի

---

\*Եունկ Անգղիական Եկեղեցւոյ պաշտօնեայ մը ըլլալով պապականութիւնը անոր ամենի բշխման ըլլալով զարմանք չէ որ այսպիսի վատութեամբ եւ տմարդութեամբ վարուեցան իրեն դէմ. չի տալով իւր աղգկանը մէկ գերեզման մը. հետեւաբար Եունկ ըստ որում վրտահար հայր, իրաւամբ կրնար ցանկալ գերեզման մը այն ամենուն համար: Ծնր. Թրգ.:



համար այս քիչ ահարկու է. անոնք փոխադարձ սերէ 'ի զատ ուրիշ զգացում մը չունին. բայց մի միայն երկնային սիրոյ համար կորսնցուցած այս վայրկեցիս մեջ իմ բաղդս պտղագութիկ մնաց, էւ ընկղմեցաւ. անվերջ զիշերի մը մեջ: Մարդուն սիրտը մարդուն դէմ կարծրանալ. . . այս ամենէն սոսկային է. դժնդակագոյնն է. էւ իւր ամեն պշրանաց մեջ քամանրելի է. հպարտութիւնը կը շողացընէ պարզեւնէրը, էւ ասանկով մարդկութիւնը կը թշնամանէ. հապա ինչպէս է իւր վրէժխնդրութիւնն ալ. . . . — զայն մի լսեք՝ Աստղունք, էւ դու տխմար Լուսին. դուն աւելի կը տխրիս երէ լսելու ըլլաս: Մարդուս թշնամին մարդն է, իւր անտարակուսելի ջարիքը: Ժանտախտի հարուած մը կ'իմացընէ մօտայնուտ փոքորիկը. փոքորիկ աշտարակները երկիւղ կը պատճառեն կործանած ժամանակին. հրաբուռիս կը գոռան պորթկած ժամանակին. կը դողայ երկիրս երբ անոր ծնօտները կը բացուին կլլելու, էւ մուխը կը մատնէ ահարկու լափող կրակը. բայց մարդէ եկած կործանումը ծածուկ է, այն իւր հարուածին հետ իսկոյն կը սոսկացընէ. այս է մի երէւակայութեան աշխոյժը. այս ըլլայու է. բայց երկնային իշխանութիւնը կը փրկէ զմարդ ամեն բանէ բաց 'ի այն գաղտնի տեսութենէն՝ որ է մարդ-

կային մերկ սիրտը: Մտաց յափշտակութիւնը  
հրահարեան է մի, բող հրահրի. որ երբ բորբոքած  
ջէ, իւր խօսածը կ'զգայ. բայց երբ շղային ուժ-  
գնութեան մէջ է իւր բարեկամներուն դէմ. . . ամօք  
մարդկութեան:

Ֆիլանտրոսն ալ իւր բշտամիները ուներ, ան  
զգացած էր իմ երգիս ճշմարտութիւնը, եւ ես  
ալ իրմով. մեր զգացմունքը հաւասար էր. անց-  
եալ չարիքներս՝ Ներկիզէ, քեզմով աննետացան.  
դուն սրտիս նոր վերքն էս. կը զայրանայ ու-  
րիշ հոգերով ալ, ուրիշ տառապանքներով ան-  
համար տագնապներ անքիւ. չարեաց նման բու-  
կանխասահման ճակատագրիդ վրայ դիզուեցան.  
Եւ յանախեցին Նեղոսի երկրին մարախներուն  
պէս. այս մանը զիս առաւել տարաբաղդ ը-  
րաս, եւ բու գերեզմանդ առելի մթացուց. . . խոր-  
նըրդածել անգամ մը՝ (Եթէ սրտածմլիկ պատմու-  
թիւնս չի մոռցրներ) ինչպէս ամեն մէկ պարա-  
զաները ասպիղներով գինեալ էին. անոնց ամեն  
մէկը մէյմէկ ասպիղ էին, եւ ամենքը մէկտեղ տար-  
օրինակ վայ. ինչ ուժեղ Հերթիւլեան առաքինու-  
թիւն կրնայ դիմանալ անոնց. եւ կամ առաքի-  
նութիւն է հոս յաղթուիլը. սա բորբոսեալ այտը  
արտասուեաց շարք մը կը ցողէ. եւ այս արտաս-  
ուեաց ամեն մէկ կաթիլները իրենց սեպհական

բշուառութիւնը կ'ողբան. եւ ամեն մէկ բշուառութիւններս որոնք թէեւ զատ զատ ողբացուած են, տակաւին աւելի հեծեծանք կը պահանջեն. ամեն մէկը ինքզինքը միւսներէն աւելի դասելով, հեծեծանք՝ որոնց ամեն մէկը տէր ունի: Միայն բարեկամները չեն, որ այսպիսի թաղման հանդեսը կ'ողբան. այն՝ բոլոր մարդկային սեռը կ'ողբացնեն. կը տարածուի այս ողբը մինչեւ հոն՝ ուր մահկանացու համբաւը կրնայ հասնիլ իւր թէեւրովը. հոն՝ ուր ամենակայտառ տարիներուն ամենագուարք խորհուրդը իւր վախճանին կը վերադառնայ մահուան ձորը . . . — Մահուան ձորը, այդ Գոմորեան անշշունջ ձորը, ուր մթութիւնը դեռ չի վերջացած ճակատագրաց վրայ ագռաւեան թէեւրով տարածուած՝ օրուան կ'սպասէ, (ահարկն օր). որ կը խաբանէ ամեն ապառնի փոփոխութիւնը, եւ կը տանի այն ստորերկրեայ աշխարհը՝ այն սուերակաց երկիրը. շփոթ չնա՝ Լնրենցիօ, մարդկային հպարտ խորհրդին առջեւ: Հոն թող իմ խորհուրդս շրջի, բայսաանեան ճշմարտութիւններ եւ առողջարար զգացումներ քաղեմ. քաղեմ ամեն անոնք՝ որ հոս խիստ կարեւոր են եւ ընդունելի. քաղեմ զուարթ Լնրենցիօին սիրոյն համար, եւ քեզի՝ ո՛ր իմ հոգիս, «մեռեալ բարեկամաց պտուղները քննեմ. յայտնեմ կենաց ունայնութիւնը, համեմատեմ կեան-

քը Է. մահը, տամ մահուան իւր գովեստը, անոք  
 Էրկիւղը նուանէմ, Է. պատրաստեմ ազնիւ մտաց  
 այն առաջին յաղթանակը, Է. արժանաւորապէս  
 քամահրեմ գերեզմանէն սոսկացողները: Հաւա-  
 քեմ Ներկիզէին գերեզմանէն այն հունձքը, զոր  
 բանաստեղծք իբր Ածարսի հոսող արիւնէն Էլած ան-  
 ստորագրելի ողբայից ծաղիկ մը ստեղծաբանեցին.  
 Բնոյ իմաստութիւնը ծաղկի իմ մահկանացու խո-  
 ցերես՝ մանաւանդ մեռեալ բարեկամներես. բայց  
 ասկից ինչ պտուղ. Էռապատիկ գօրութիւն մը,  
 օգնութիւն մը, որ պիտի հալածէ մեր անխորհրդ-  
 դութիւնները, Էրկիւղ՝ հպարտութիւն Է. յանցանք.  
 մեր մեռեալ բարեկամները ամպերու նման մեր  
 վրայ կուգան, մեր անմիտ փախաբները զար-  
 հուրեցընելու, Է. ընկճելու կենաց այն բոցը  
 որ շատ անգամ իմաստունը կը կուրացընէ. մեր  
 մեռեալ բարեկամները բանակի զորժաւորներ են  
 հարբելու. մեր խորթութորդ անցքը դէպ ՚ի մահ.  
 ատելութեան սոսկայից անջրպետը վերցընելու հա-  
 մար բնութիւնը մեր արգիլեալ ճանբան խաջանէ.  
 Երած է, Է. ասանկով հաճելի Է. ապահով է մեր  
 ընթացքը ամեն փոթորիկի ժամանակ. ամեն մէկ  
 բարեկամ զոր բաղդը կը յափշտակէ մեզմէ՝ յաղ-  
 թանակ մըն է. մարդկային ունայնութեան բեռերէ  
 կ'ազատէ զայն, որով զմեզ մեր օղային բարձրու-

քենեն վար իջեցընելով եւ մեր (բարոյական) հիւանդութենէն զմեզ զարհուրեցընելով՝ փառամոյութեան գերութենէն կ'ազատե, մեր ճիշդ տակն ու վրայ ըրած հողը կը բանայ՝ ապականեալ հողին վրայ բիջ մը փոշի ցանելու, եւ Աշխարհս վնասակար բանէ մը ազատելու համար: Մեռեալ բարեկամները հրեշտակներ են, անոնք մեզի սիրալից պատգամախօսութիւններ կ'ընեն, անոնք մեզի համար կը հեծեն, եւ մեզի համար կը մեռնին. եւ միքէ 'ի զո՛ւր պիտի հեծեն. 'ի զո՛ւր պիտի մեռնին. ինչ անմտութիւն, իրենց անշարժացեալ շուքերը պիտի ողբանք, որոնք մեր սրտերուն մեջ վրդովմունք կը յարուցանեն. մենք խոտէնք մի անոնց լուսութիւնը. բաղբիկ աղերսաբանութիւն. անգոսնէնք մի անոնց մահուրնէ վերջը տուած խըրատնին, եւ բարեպաշտական աղօթքնին\*:

Անզգայաբար՝ ինչպէս անոնց սուրբ գերեզմանը շրջապատող բոյսերը՝ նոյնպէս կը կոխկոտէնք ոտքի տակ իրենց հեծեծանքներն ու հառաջանքները. 'ի դերէս կը հանենք իրենց փափաքը, եւ անօգնուտ կ'ընենք իրենց մահը:

\*Շունկի այս պարբերութեամբ յայտնի կը նշմարուի որ մեռեալք ոչ բէ միայն զմեզ չեն մոռնար, այլ նաեւ մեզի հետ յարաբերութիւն կը պահեն, մեզի բարի կուզեն, եւ բարեգրքաբար կ'աղօթեն մեզի համար. որո՛ւ, Աստուծոյ անլուրտ ուրեմն անոնք կը բարեխօսեն մեզի համար, ուրեմն սուրբերն ալ կը բարեխօսեն: Ծան. Թարգ.:

Լնրենցիօ, ջէ, մահուան խորհուրդը հաճելի  
 բող ըլլայ բեգ. տուր անոր՝ իւր կատարեալ իշ-  
 խանութիւնը. բող բագաւորէ այն բարերար պատ-  
 ժողն ու խրատողը հոգւոյդ ուրախութեանը մէջ.  
 անոր բագաւորութիւնը քու փառաւոր յաղթա-  
 նակդ կը տարածէ, եւ կը հանդարտեցնէ քու ա-  
 լեկոծեալ շնչոյդ վրդովմունքը. Բարեբաստիկ է-  
 քերական ոսկեղէն օրէր. բող սկըսի մահուան  
 խորհուրդը. Աստուծոյ նման կ'ազդէ. եւ ինչո՞ւ չի  
 խորհիլ մահուան վրայ. միքէ ամեն խորհրդիդ  
 առարկան միայն կեանքն է, միայն սն է ամեն  
 ժամուն ուզածը. եւ միայն կեանքը ուրախութեամբ  
 պիտի երգենք. գարմանայի իրողութիւն. հարուած-  
 եալ շան յիմարութիւնը ասոր ջափ գարմանայի ջէ.  
 վասն զի մարդս ենթակայ է ամեն անբիւ թշուա-  
 րեանց, որ կենաց մէջ կը գտնուին՝ իբր անոնց ստաց-  
 ուածք եւ օրինաւոր որսեր. քանի որ մարդս ջա-  
 փած է անոր ճանճրայի տեսարանին կեսը. իւր  
 հեշտասիրութիւնը իրեն մթերք ջէ բողոնցած՝ ո՛չ  
 կուսական բերկրութիւն, ո՛չ անկորուստ գուար-  
 ճութիւն. կենաց նուիրած նմանօրինակ պաղ անց-  
 քերուն մէջ այն կը յարատէւէ, եւ անհամ ներ-  
 կային մէջ անցեալը կը ծամէ, զգուանօք կը ծամէ,  
 եւ հագիւ քէ կրնայ կույ տալ. շուայլ ժառանգորդ-  
 ներու նման, իւր կանուխ տարիները ժառան-

գագուրկ ըրած էն զինքը իւր ապառնի ժամերէն. որով սովամահ կ'ըլլան մնացորդաց մեջ, եւ կ'սկըսին իրենց նախկին դաշտը քաղել:

Միշտ հոս ապրիլ' Լճրենցիօ, սոսկալի խորհնրդ, սոսկալի մանաւանդ անոնց համար, որոնք կ'ուզեն անկից հեռանալ. հեռանալ այն ամօթէն, զոր իրենց յիմարութեամբը ստացած էն. միշտ արգանդիմ մեջ մնալ. բնաւ լոյս չի տեսնել, եւ ինչ պատճառաւ. դողդողուն քայլերով մէյ մը անցած ճանբանիս դմբճեալ անցնելու, յաւիտենականութեան շնորքը շրջելու, կենաց մաշոնածները մագլցելու. ծանր անիւ. որն որ բան մը վեր չի բերեր, կոխկըռտելի' դարձեալ կոխկոտել արդէն կոխկոտուած ճանբան' ամեն մէկ բշուռօ օրերը անցեալներուն պէս ծաղրելու, անոնք ալ վատնելու, եւ մեր ուրախութիւնները զգուելի ընելու, եւ կամ փոփոխութիւններէն բշուռօութիւն խնդրելու' թէ եւ տխուր, տեսնելի դարձեալ արդէն տեսածնիս, նոյն շաղփաղփ պատմութիւնները լսելու. անգամ մը ճաշակուածը դարձեալ ճաշակելու, եւ ամեն անգամ ճաշակելնուս նուսնզ ճաշակ զգալու, ճնշուած տարի մըն ալ ճնշելու. . . քայքայեալ գործիքներ' երկրիս անպիտան պտուղները աղալու, բէռն' ոչ թէ կեանք. բանական բիրտ ջրանցք, շրոսայութեան մշտահոս ապուշ գեղխութեան սնցք, ա-

մեն մեկ շնչառութեան ատեն դողդղացող. իբր քե  
մահը պիտի յափշտակե բաժակը. անա այսպէս է  
անոնց կամքը, զոր անոնք կը խնդրեն. ընտիր բաղ-  
ճանք, բայց ինչո՞ւ առ.առ.էլ չեն փնտրուեր գոմերը եւ  
ամայութիւնը. չէ՛ այսպիսի օրինակները իրենց եր-  
կիւղը կը յարուցանեն. անոնց առաքինութիւն հարկ  
է, այն է՛ խորհուրդ. (պայծառ խորհուրդներո՞ւ կ'ըն-  
ծայեն անոնք իրենց բռնիչքները) բայց անոնք ինչ  
բանի՞ համար սահմանեալ են, սիրելու եւ միան-  
գամայն ատելու նոյն ունայն աշխարհը. դատա-  
պարտելու, եւ յայտնելու սա ներկեալ կեանքը,  
որ զիրենք յիմար կը կոչէ ամեն օրուան՝ ամեն մեկ  
վայրկեանները. վատբարագունին սոսկումեն՝ դժըն-  
դակին ապաւինելու, մագցցելու այս դժնդակ ժայռը,  
որ քե՛ս կարծր է, բայց անոնց համար աղէկ է, ջա-  
րիբներով լեցուն, եւ յարաժամ կը խաւարի սպառնա-  
լից փորորիկներով, եւ մարդկային յոյսերը խորտա-  
կելուն համար՝ վատանուն, զարհուրելով այն  
գունտեն՝ որուն ներքեւ կը ճմլուի. . . անա այս է  
իրենց յաղթանակը, եւ այսպէս իրենց ուրախու-  
թիւնները: Ժամանակը հասած է զոցելու այս տը-  
խուր տեսարանը, այս վիթխարացեալ եւ դժնդակ  
կացութիւնը. բայց որո՞նք են միջոցները, կայ  
բայց միայն մեկ մը. բայց այս մեկը կրնայ մի ա-  
մենուն բաւել. Առաքինութիւնը՝ այն հրաշագործ



Աստուածունին՝ այդ ժայռը նորածիլ ծաղիկներով կը  
 գարգարէ, եւ կը հրահանգէ ներկեալ կեանքը. աս-  
 կից աւելի ի՞նչ գարմանք՝ Լորենցիօ, այն կուտայ  
 հիւանդ կենաց նողկալի կրկնումներուն՝ նոր ըն-  
 քացք մը, եւ բնութեան շրջանը մէկ գծի կը դար-  
 ձընէ. կը հաւատաս մի՛ Լորենցիօ, մտիկ ըրէ ինձ  
 ուրեմն. լաւ ազանջ դիր, որ ամչնաս չի հաւա-  
 տայուդ: Արդարեւ ճանճրայի ծանր կրկումներ  
 կ'իշխեն միշտ անոնց վրայ, որոնց գուարճութիւն-  
 ները կախումն ունին տեսութենէ՝ բուրմունքէ  
 եւ ճաշակէ. կկուն իւր ժամանակին կ'երգէ, որուն  
 երգը ոչ ինչ կ'արժէ, վասն զի միշտ մի եւ նոյն տը-  
 խուր ներդաշնակութիւնը ունի. անկեց աւելի ինչ  
 կը շնորհէ Նրկիրս. բայց ազնիւ մտքերը՝ որոնք  
 Արեգով չի հասունցած պտուղներ կը սիրեն, ի-  
 րենց օրերը երփներանգ կընեն. աղաւնիի վզին գոյնե-  
 րուն ջափ երփներանգ. անմէղութիւնը կը փայլի այն  
 յուսաւորեալ մտաց մէջ, որք առարխնութեան ճա-  
 ուագայքներով կը շերմանան. ասանկներուն ամեն  
 բան նոր եւ հաճելի կ'ըլլայ, անոնք քեւաւորուած  
 ըլլալով երկնային յուսով՝ իրենց գօրաւոր ջանքը  
 հոն հասնելու կը գործածեն, եւ անոր համար  
 կ'ապրին. անոնց ամեն մէկ առաւօտը աւելի շքեղ  
 է. անոնց ամեն մէկ իրիկունը իւր ազնուութիւնը  
 կը ներկայացընէ. անոնք յարմար են նոր գօրու-

թեան՝ լուսոյ եւ համբաւի. քանի որ բնութեան շրջանը կառքի անուոյն նման կը դառնայ անոնց բարձրացեալ նպատակին ներքեւ, իրենց քաղցր յաջողութիւնը աւելի կը քաղցրանայ հետզհետեւ. առաքինութիւնը զանոնք ուղղակի օրհնութեանց եւ երջանկութեան կը մօտեցընէ. առաքինութիւնը, որով Քրիստոնեական շարժառիթները ամենէն լաւ կը կենդանանան. երանութիւնները միայն Քրիստոնեութեամբ կ'ստացուի. ինչ, միթէ առաքինութենէ հեռանալու համար ուրացողներ ըլլանք, եւ հեշտութեանց համար անկրօ՞ն. Քրիստոնեութիւնը որչափ որ անտարակուսելի ճշմարտութիւն մըն է, տակաւին քիչէրը անոր կը վստահին. « Այն որ կ'արհամարհէ հանդերձեալը, այս կենաց դէմ կը մեղանջէ » . ինչ է այս կեանքը, քիչէրը իրենց մըտերիմը կը ճանջնան՝ մրութեան մեջ գտնուելով, եւ գրկախառնութեան մեջ կոյր ըլլալով: Մենք կեանքը տենջանօք սիրելով, սիրելի կեանքը ատելի կ'ընենք. բայց զայն մահուան նուիրելով ժամանակին յաւիտենականութիւն տուած՝ դէպ 'ի մեր նաւահանգիստը ջուելու սկըսած կ'ըլլանք: Կեանքը արժեք ջունենար՝ եթէ վախճան ունենայ. ան ատեն կեանքը ինքնին աղիոդորմ վախճան մը կ'ըլլայ. եթէ այն է բոլոր մեր ունեցածը, ոչինչ է, ոչինչէն ալ չարագոյն ցաւերու բոյն մը. բայց

Երբ ոչնչի մը պէս գործածենք՝ շատ կ'արժէ, գեղանի փոփոխամտաց կէանքը ան ժամանակը կը վայելուի՝ երբ քիչ սիրուի, խիստ շատ արժէք կ'ունենայ՝ երբոր անարգուի, ան ատեն կէանքը հանգստութեան նիստ, է. խաղաղութիւն կ'ըլլայ . յաջողութեան մէջ կը զարգանայ, կարեւոր կ'ըլլայ է. ահարկու. է. ան ատեն զայն պարտիմք գովաբանելով յիշել, է. անոր վրայ ուրախութեամբ խորհիլ. յաւիտենական Երանութեանց գօրաւոր ամբուրիւն. ո՞ր է արդ ամայի ժայռը, ներկեալ կէանքը. ո՞ր է արդ Լորենցիօ՝ կենաց յարակալ շրջանը. էս իմ խոստումս եռապատիկ չի կատարեցի մի. ունայն է Աշխարհս, բայց անոնց՝ որ ունայն են. ինչ բանի հետ ուրեմն բաղդատեմք այս դիւրափոփոխ տեսարանը, որուն արժէքը երկբայական է, որ կը բարձրանայ է. կը խոնարհի. կը լըրանայ է. կը պակսի. (նկատատաւոր գիշեր օգնէ ինձ) զայն Լուսնին հետ բաղդատեմք, որ ինքնին մութ է է. կարօտ, բայց հարուստ՝ երբ աւելի բարձր սահմաններէն լոյս փոխ կ'առնու. բայց երբ անհեթէք չարիքը մէջ կը մտնէ՝ վաստակեալ Աշխարհը, կը շքապատի. է. կ'ողբայ իւր խաւարացեալ ուրախութիւնը, իւր ամենապայծառ ուրախութիւնները, է. կը տխրանայ այն ամենափայլուն փառաց լոգարանին մէջ, ուսկից անոնք կը

բղխին : Եւ այն փառքը հեռի ջէ ան Լորենցիօ :  
 Բարի մարդ մը է հրեշտակ մը՝, ասոնց մէջ տեղի  
 պարիսպը ճրքան նուրբ է, ինչ բան կը բաժնէ ա-  
 նոնց ճակատագիրը, գոցէ վայրկեան մը, կամ տա-  
 րի մը, բող դար մը, տակաւին ամենը մէկ վայր-  
 կեան մըն է, վայրկեան մը՝ որ յախտենականու-  
 րեան մէջ կ'անհետանայ. ան ժամանակը ինչ որ  
 երբեմն էին՝ նոյնը պիտի ըլլան. անոնք որ հիմայ  
 յուսափայլ եակներ են, Ֆիլանտրոսի պէս էին եր-  
 բեմն, է. կը պահանջեն երկինքները . ասպուշ բը-  
 նութիւնը այս տխուր անցքին մէջ կ'արքննայ մի .  
 քաղցր փոխումը կը հրաւիրէ, է. կ'ուրախացընէ .  
 այս շատ անգամ կը պատահի, է. ինչո՞ւ քեզի ջի  
 պատահի, ամենէն յաւը յուսայը խոհեմութիւն, քա-  
 ջութիւն է իմաստութիւն է. ասոնցմով վատահու-  
 րիւնը ինքնին կը պատրաստուի : Կեանքը խիստ կը  
 սիրեմք, իսկ Մահը կ'անարգեմք. բաղդատէ այս  
 երկու ոսոխները, է. գտիր բարերար պսակատուն .  
 գարմանայի հակառակութիւն՝ ճշմարտիւ Լորենցիօ՝  
 գարմանայի. ասանկով ջնջին կեանքը իւր հաւա-  
 սարակշռութիւնը կը կորսնցընէ. կեանքը զնոզին  
 հողին վրայ կ'իշխեցընէ . իսկ Մահը անոր թեւեր  
 կուտայ՝ վերին սահմանները սահառնելու, աշխար-  
 հիս հարստութենէն հեռանալու. մքին կեանքը յու-  
 սոյ կ'սպասէ. Մահը կը փարատէ պատող ամպե-

ըը է. ահա այն անմարմին գորութիւնը բոլորովին կը լուսաւորի :

Մահուան այնպիսի ջարհիքներ կ'ստեղծաբանեն, զորոնք բնութիւնը երբեք չի պիտի զգայ. իսկ կեանքը ջարեաց իրականն է. որմէ իմաստութիւնը զմեզ չի կրնար ազատել. չէ որ Այն գորաւոր բանն Երկնից Որդին՝ կեանքով բողոք իւր գահը, բանտարկեցաւ, ցաւ քաշեց. բայց Մահուամբ՝ պերճացաւ, ազնուացաւ, է. Աստուածացաւ. Մահը միայն մարմինը գերեզմանը կը դնէ, իսկ կեանքը հոգին. « Ուրեմն Մահը անմէղ է, քանի որ ան իւր ընթացքին մէջ շատեր կ'անպիտանացընէ՝ որոնք փայլելու արժանի են : Արհեստը՝ յօժարութիւնը՝ բարեբաղդութիւնը՝ ընդարձակեալ գորութիւնը՝ որ այս Երկիրս պայծառացընող զանազան լոյսեր են, Մահը կը մարէ ասոնք, է. կը մթնցընէ Մարդկային սէռը » :

Լնրենցիօ, էս այս կրնամ ճշմարտաբանել. մահըն է որ կը խոնարհեցընէ իմաստունը՝ աւագը՝ ինքնակալը՝ թագաւորը՝ յաղթողը. իսկ աւելի բարբարոս է կեանքը. այն զմարդ ջնջին հողովը կը բարձրացընէ, իսկ Մահը անվախճան հոգին երկնաբաղաբացի կ'ընէ, Մահը սոսկում չունի, բայց միայն անցաւոր կեանքը կը վերցընէ. ոչ ալ կեանքը ճշմարիտ երանութիւն ունի, երէ բարերար Մա.

հը ջի նուիրէ գայն անոր. կեանքը վայելք մը չու-  
նի հպարտանալու, էքէ Մահը անոր ջի տայ. էսս  
առ.առ.էլ՝ կեանքը պարտապան մըն է գերեզմանին.  
խաւանք վանդակապատ, որ յաւիտենական օրուան  
մէջ կը բացուի: Լորենցիօ, ամչղիր կեանքը սիրե-  
լուդ յիմարութեանը վրայ, որ շքեղ է. փառ.առ.որ հո-  
գիները կը բողոս տխուր ճորերու մէջ՝ ծառայելու  
այն վայրենայից վիրապին մէջ, ուր գուցէ ամեն  
մէկ սողուն իրաւամբ այս յաղթութիւնը կ'սպասեն:

Բագմառատ խնճոյք. հոգի մը՝ անմահ հոգի մը,  
Լորենցիօ, գագանային ատամանց որս էղած. ա-  
մըջցիր Մահուրնէ վախնալուդ համար, Մահէն՝ որ  
քեզի հանգստութիւն կուտայ հանդիսական սարփի-  
նային մէջ, ուր Նեկտարը կը փայլի, հրեշտակնե-  
րը կ'սպասաւորեն. ուր հրեշտակաց վայելածէն ա-  
ռ.առ.էլ դուն կը բարձրանաս, կը պսակուիս էս կ'ան-  
մահանաս, էս ծնունդդ երանութեանց մէջ կը ծաղ-  
կի. ինչ բանի ալ կարօտ կ'ըլլամ էս. ով Մահ՝  
յաղթութիւնը բուկդ է. ուրեմն էկ բարեառ Մահ.  
ձերութիւնն էս հիւանդութիւնը բու սուկացընող կա-  
րապետներդ են. հիւանդութիւնը իմ հինաւորց  
հիւրսէ, որ կը քաշէ իմ ջիդերս՝ այս՝կենաց փա-  
փուկ քելերը. էքէ քիչ մըն ալ քաշէ՝ Մահուան  
գանգակը պիտի հնչէ, որ իմ նոր բարեկամներս  
յուզարկաւորութեանս հանդիսին պիտի հրաւիրէ.

պիտի հրաւիրէ հոն՝ ուր տկար բնութիւնը կը նուա-  
ճի, և կարելի է կ'արտասուէ. քանի որ դատո-  
ղութիւնն ու կրօնքը Մահուան խնդակից կ'ըլլան  
և իւր շիրիմը կը պսակեն յաղթական պսակով .  
Մահը յաղթութիւն է, որ շղթայակապ կ'ընէ կենաց  
ջարիքները՝ հեշտասիրութիւնը, փառասիրութիւնը,  
բարկութիւնը և արժասիրութիւնը. որոնք անոր  
անիւններովը քարշուէյով իւր գօրութիւնը պիտի  
յայտնեն. այն խայթիչ ջարիքները և նեղիչ հովե-  
րը անմահ չեն ով Մահ, քուկդ են մեր աւերման  
օրը, անոր անունը ըսէ մեզի, այն՝ մեր անեղ վը-  
ճարման օրն է, այն մեր հնճոց ժամանակն է՝ ճոխ  
և հասուն. և ինչ՝ երէ մանգաղը սուր ըլլայով  
էրբեմն՝ խլէ զմեզ քանի որ մենք հազիւ սկըսած  
ըլլանք ոսկեղէն ցորենները հաւաքել. ուստի ան  
ատեն առատել ևս է քու յաղթական բայասանդ  
ն կիլետ, որ կ'առողջացընէ վերքը, կը լուեցընէ  
ծննդեան տկար աղաղակը և մահուան խորին  
սարսափելի հառաջանքը. բնութեան տուած փոր-  
րիկ հարկերը կը ծառայեն մեծ շահերու համար .  
ամեն մէկ շահը կեանք է, բայց ճի վերջինը՝ այս-  
պէս կը գերազանցէ առջինը, կեանքը բողբառ-  
մամբ կը մեռնի, կեանքը գերեզմանէն անդին կը  
գտնաս. և միքէ քու վրայօթղ խորհելու ուրա-  
խութիւն չէմ մի զգար՝ ով Մահ, մեծղ խորհրդա-

կան, դուն կը նուիրես մարդուս ազնիւ խորհուրդներ եւ ջքնաղ գործքեր . . . :

Մահը ազատիջ է, գմարդս կ'ազատէ . Մահը փոխարինող է, ազատածը կը պսակէ, Մահը որ իմ ծնունդս կ'աւարտէ, էքէ ջըլլայ' ամեն բան անէծքի կը փոխուի. հարուստ Մահ, զիս ամեն հոգեբէս կ'ազատէ, նեղութիւններս, առաքինութիւններս, յոյսերս առանց անոր մտացածին կեղծիքներ են. Մահը ցաւերուն վերջ կուտայ' բայց ոչ ուրախութեանց. այն' ուրախութեանց աղբիւրն է եւ առարկան. որ իւր արգանդէն մինչէ իմ հոգւոյս մէջ կը հոսին առանց արգելքի: Թէեւ ջորս հովերը իմ փոշիս համար փչէին, այն հովերէն անգամ էւ այիքներէն, էւ եական գիշերէն' քէեւ հոն բանտարգեայ ըլլամ, անոնցմէ իմ հողս անգամ պիտի պահանջեմ (էրբոր հողէն կ'իյնայ հպարտ բնութեան ամենահըպարտ իշխանութիւնը) էւ յաւիտեան պիտի ապրիմ: Մահը կենաց պսակն է, էքէ Մահ ջըլլար' խեղճ մարդը 'ի գուր պիտի ապրէր, էւ ապրիլը կեանք ջի պիտի ըլլար, էւ յիմարները անգամ մեռնելու պիտի փափաքէին. Մահը կը խոցէ բուժելու համար, մենք կ'իյնանք, կ'ելլենք, էւ կը բազաւորենք, մեր կապանքներէն ազատելով երկինք կը բռնչինք. նւր ծաղկեայ եղեմը մեր տեսութեանը կը ծառայէ, կորսեայ եղեմէն առաւելը կը շնորհէ



մեզի Մահը, սոսկումներուն քազաւորը՝ խաղաղու-  
թեան իշխանն է, սն էրբ Ես պիտի մեռնիմ Եւ ա-  
զատիմ ունայնութենէ ու վշտերէ. ով Մահ,  
Երբ Ես պիտի մեռնիմ, Երբ Ես պիտի ապրիմ յա-  
ւիտեան :

---

# ԳԻՇԵՐ ԶՈՐՐՈՐԴ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿ

ՈՐ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

ՄԻ ՄԻԱՅՆ ԴԱՐՄԱՆ ՄԱՀՈՒԱՆ ԵՐԿԻՒՂԻՆ ԴԷՄ

ԵՒ ԱՅԴ ՇԱՀԱԻՈՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՄՐՏԻ ՅԱՐՄԱՐ ԶԳԱՅՈՂՈՒԹԻՒՆ

---

ԱՌ

ՄԵԾԱՅՈՒՔ ՊԱՐՈՆ ԵՕՐԿ

---

Խիստ երախտապարտ ոգի մը՝ ո՛ր Եօրկ, կը սը-  
պրդի բարեբաղդութեան եւ պատանեկութեան գմայ-  
լումներուն մէջ: Դուն պատրաստ ես կարեւոր Երգ  
մը լսելու. նրբան խոր արմատացեալ է Մարդուս  
կուրծքին մէջ Մահուան սոսկումը, ես անոր զըլ-  
խանոր դարմանը պիտի երգեմ: Ինչո՞ւ խրտուել  
մահեան. ո՞նք է ան. հասած մահը անցած է, իբրեւ  
թէ ոչ էկած ըլլայ եւ ոչ գացած. ան հոս չէ բնաւ,  
բանի որ յոյսը ՚ի դերեւ կը հանէ զգացողութիւնը.  
տխրագուշակ մարդը կ'ընդունի Մահուան զար-  
հուրելի հարուածը՝ բայց ոչ թէ կը կրէ. Մահուան

զանգակը՝ պատանքը՝ բրիչը՝ գերեզմանը՝ խոր  
ձորը՝ մթութիւնը եւ որդը, ահա ասոնք են ճմեռ-  
ուան արեւամուտքին սնտի երկիւղները, ապրո-  
ղի մը սոսկումները ասոնք են ոչ թէ մահը: Երե-  
ւակայութեամբ յիմնար եւ երկիւղիւ բշուառ: Մար-  
դըս այնպիսի մահ մը կ'ստեղծէ, զոր բնութիւնը  
բնաւ չստեղծեց. մարդս բուն իւր երեւակայութեան  
ծայրէն կ'իյնայ, եւ մէկ մահուրէն վախճալովը  
հազարաւոր մահեր կ'զգայ: Բայց բող մահը եր-  
կիւղալի ըլլայ. ծերը անկից ինչո՞ւ պիտի վախճայ,  
էրէ ծերը խոհեմութիւն ունի, համարձակ կը ներ-  
կայանայ իւր ոսոխանման բարեկամին, եւ կը  
պահպանէ զայն իւր հիւրընկալ մթութեանը մէջ:  
Ես հագիւ հանդըպած ունիմ շիրիմ մը՝ ի մանկութենէ  
հետէ, որուն վրայի բուսականը, «մէկդի Եկուր» ջի  
կանչեր. եւ ինչ է որ զիս կը կանչէ, նայէ ամեն  
կողմդ, եւ ըսէ ինձ՝ ինչ. ամենէն իմաստունն անգամ  
ջի կրնար ըսել. կնիկէ ծնածներուն մէջ կայ մի  
մէկը որ կարենայ խորհրդալից կերպով աս ան-  
հաճոյ դաշտին կատարեալ հայեցողութիւն մը տալ-  
ունայնութիւն յամենայնի. տես մարդոց թերութիւն-  
ները՝ ամենէն ընտիրին մէջ անգամ թերի. եւ շա-  
տերը կան որ ամեն կերպով կը վրիպին. ընձա-  
ռիւծի նման պիտակաւոր կամ էրիօբի նման մթին  
եւ երկարատեւ են չարիք. բարին տարածամ կը

մեռնի (ինչպէս որ վաղամեռիկ Ներկիզէիս մարմարիօնը կը պատմէ) Եւ իւր մեռնելէն վերջը անվերջ ցաւ կը թողու. ամենէն համարձակ սիրտն անգամ այս տեսարանին չի կրնար դիմանայ, Եւ չի կրնար ինքըզինքը մզել, ապառնի տեսարաններու մէջ նայելու, բայց շնորհէնք կեանքին Եւ իրաւունք Եւ բաղդաւոր կեանքին շնորհքը մէկ քանի առաւել ուրախութիւններ: Ժամանակ մը կայ, երբ երէք անգամ պատմուած պատմութեան մը նման՝ չափազանց քաղցրութեամբ յափշտակուած կեանքը՝ ուրիշ բան չի կրնար պտղաբերել, բայց միայն մեր դիտողութիւնը՝ այս կատակաբանութեան վրայ. հաճելի անդրադարձումները՝ նպատակուած զգացողութեանը, կամ զովութեան յոյսերը մեր անխարդախ դատաւորէն՝ այս մասին աղէկ կ'օժանդակեն. ասունք երբոր հրաժարին՝ հոգին անփառունակ կը թողուն, կեղծ բարեբաղդութիւնը՝ իւր սնոտի պատմութեաններն ու զոռոզութիւնը Ետ կ'առնու. Եւ այս մտեղէն դիմակը միայն կը թողու Տեսարանին Ետեւը:

Ինձ համար այդ ժամանակը հասած է, իմ Աշխարհս մահ է. նոր Աշխարհ մը յառաջ կուգայ. Եւ նոր կերպեր կը թագաւորեն. տարաշխարհիկ կատակերգուներ, Եւ պճնագարդ խումբ մը Եկան հասան զիս տեսարանէն դուրս ընելու. Եւ հոն իմ

վրաս սուգելու. ինչ ժպիրն ցեղ մը. անոնք օտարական' ինձ կը նային եւ ես անոնց կը նայիմ, իմ բարեկամներուս ամենքն ալ մոռցուած են. բայց ասկից ալ գեշը կայ: Ա՛ն ես եմ դժնդակ պատճառք իմ հոս վայրապար դանդաղելուս, մահուրնե այսչափ ժամանակ մերժուելուս, եւ ծերութենէն այսչափ շնորք գտնելուս. թնդ ալ բաւե բուն իմ Տէրս զիս չի ճանչնար. համարձակիմ ըսելու թէ ճակատագիրը մասնաւոր է. ես որ շատ կը յիշուէի' հիմայ մոռցուած եմ. միշտ ներկայ եղող առարկայ մը կը նեղէ տեսութիւնը, եւ իւր ետին կը ծածկէ տեսնուելու բաղձանքը, երբ ես իւր պալատին պաշտօնեաներուն կ'իմացընեմ իմ տրտունջս, անոնք մեծամեծաց նեկտանին նման զայն կը խմեն, եւ իմ ձեռքս կը սեղմեն, եւ կը խնդրեն որ հետեւեալ օրը երթամ. ո՛ր մերժումն, միթէ ասկից առաւել փափուկ ձեռ մը չէս կրնար ունենայ:

Շնորհէ՛ ինձ, եւ մի կարծեր թէ բնաբանես կը շեղիմ. ով որ կեանքը կ'աժանցընէ, Մահուան սուկումը կը հայածէ. իշխաններէ դէռ. շնորհ ընդունուած չէ. ես կը մերժեմ հարուստ ըլլալու փառասիրութեան վնասակար փափաքը. անձո՛ր փառասիրութիւնը իմ ունեցած քիջս՝ անելի քիջ կ'ընէ, արդէն ունեցածս կը դառնացընէ. ինչո՞ւ ան-

լին փնտրուել, փնտրուելը ամեն գործի մեջ ամենեկն գեշն է, Փիլիսոփայութեան հակառակ, եւ առողջութեան վնասակար է, եթէ ես գերապանծ Աստուածաբանութեան պէս փայլուն ըլլայի, տակաւին փնտրուելը զիս այս շութին մեջ պիտի վատներ. եթէ ես հարաւային ծովու երազներուն ջափ հարուստ ըլլայի, խնդրելը տակաւին ինձ աղքատացնելու միջոց մը պիտի ըլլար. խնդրելը յիմարներուն մշտնջենաւոր ծիրական ախտն է՝ մեծամեծաց պալատներէն տարափոխելալ, որ կրնայ ջնջուիլ աւելի մաքուր օդով եւ պարզ կերակուրով, գեղջկական կենաց շնորհքներով: Օրհնեալ ըլլայ այն երկնային Աջը, որ բաղցրութեամբ դրաւ իմ սիրտս այս խոնարհ հիւղին տակ: Աշխարհս մեկ հոյակապ նաւ մըն է, վտանգաւոր ծովերու վրայ հաճութեամբ կը տեսնուի, բայց մեր կորստեանը կը ծառայէ. հոս մեկ տախտակի մը վրայ ապահովաբար եզրը կը նետուինք, ես կը լսեմ հեռուի ամբոխին աղաղակը, ինչպէս որ կը լսուի հեռաւոր ծովերուն կամ մեռնող փոթորիկներուն շրշունջը. եւ կը խորհիմ այս տեսարանաց վրայ աւելի լուռութեամբ եւ հանդարտութեամբ: Հետամուտ եղիր իմ բնաբանիս, եւ պատերազմէ մահուան երկիւղին դէմ. հոս ես հովուի նման որ ինչպէս կը զննէ իւր խրճիթէն իւր ցուպին կրթը-

նած, եւ իւր սրինգը ճայնելով, եւ ալ կը զըն-  
նեմ բորբոքեալ փառասիրութեան հրային հա-  
լածումը, եւ կը տեսնեմ խռովայից մար-  
դոց բազմաթիւ որսորդները. կը տեսնեմ օրենքը  
պաշարուած եւ ճշմարտութեան պատեհը յար-  
ձակուած. հալածող եւ հալածուող մեկմեկու որս  
կ'ըլլան, ինչպէս գայլերը յափշտակութեան, եւ աղ-  
ուհսները խորամանկութեան, մինչեւ որ մահը  
այն ուժեղ որսորդը՝ անոնց ամենքն ալ յերկիր  
տապալէ: Մեկ ժամու մը յաղթանակին համար  
ինչ հարկ այսչափ նեղութիւն, ինչ հարկ հարստու-  
թեան մեջ ընկղմիլ, կամ փառաց համար բորբոքի-  
քանի որ երկրիս ամենաբարձր վիճակը կը վերջանայ  
«Այս է Տապան հանգստեան» ին մեջ. եւ «հող էիր եւ՝ ի  
հող դարձցիս» անոր ամենաշքեղ երգը պիտի ըլլայ.  
Քանի որ կան այս երգերը, ետքի եկողները անտարբեր  
աջօր պիտի նային որ եւ իցե մեկու մը վրայ,  
քեւ Բրիտանիոյ արքունեաց մեջ ծնած ըլլայ. եւ  
պիտի ըսեն մեկու մը համար, թէ աս ալ խորհե-  
ցաւ, թէ մինչեւ անգամ ոսկին կրնայ օր մը անօ-  
գուտ ըլլալ. բայց ոչ թէ իւր հնարիմաց մահուան  
անկողնոյն մեջ. այս գաղափարը գծագրեց, եկե-  
ղեցեաց կամ վիճակաց ետքի դատարկութեանը հա-  
մար. մեկ քանի արգելքներ գայն յարմար սեպե-  
ցին . . . մեռնելու. չի սանձուիր կատաղութեամբ

մեռնող հարուստի մը շնքաղցը, յանցանքը անհնա-  
րին կուրօւթիւն է. եւ դժոխքին ամենաբարձր խըն-  
դումը: Ո՛ր իմ հասակակիցներս, ո՛ր մնացորդներ, խեղճ  
մարդկութիւնը գերեզմանին վրայ դողդղելալով անա-  
կը կործանի, ուր մենք՝ մենք որ ծեր ենք, տարօք  
ծառերու նման, աւելի խոնր պիտի ձգենք մեր ար-  
մատները եւ աւելի սաստիկ մագլցենք տակաւին  
սա թշուառ ապականութիւնը, տակաւին սա տըժ-  
գոյն դողդղելացող ձեռուրներնիս պիտի տարածենք  
դողացընելով միանգամայն անձկութեամբ, եւ կա-  
տաղութեամբ, արծաքսիրութեամբ եւ աղմուկով ուժ-  
գնաբար ձեռք անցընելու. . . : Յ՛ղը ձեռք անցընելու,  
ո՛ր. երկիրս ինչ առաւել բան ունի, մարդս քիչի  
կարօտ է, եւ ան ալ կարճ ժամանակի համար, որ-  
քան շուտ մարդ պարտի յանձնել այն հողը զոր  
սակաւապետ բնութիւնը իրենց փոխ տուած է մեկ  
ժամու մը համար. անփորձ տարիները կը վատ-  
նուին անթիւ ջարեաց, մարդու պէս շուտով ժամա-  
նակին բանիբուն կենաց բանային կը գտնեն եւ  
կը բանան մահուան դուռը. երբ այս տարիներուն  
ձորին մեջէն դեպ ՚ի էտ կը նայիմ, եւ կը կորսնցը-  
նեմ այնպիսի տարիներ, տարիներ առողջութեան,  
եւ կանանչ իրենց ժամանակին մեջ, եւ հաստա-  
տուն, իրենց պահանջորդութեանը, եւ խիստ յար-  
մար կենաց ճարտար խաղը կատարելու. հազիւ



կրնամ հաւատալ իմ ապրելուս, արդ էս որ հազիւ կրնամ ապրելուս հաւատալ կրնամ մի կենաց բաղձալ, կ'ապրիմ հրաշքով էս, էս կամ Մետով, յիւրաքի բէէ էս դէռ. կ'ապրիմ, բայց շատոնց հետեւ բաղած էմ ամեն զանոնք՝ որոնք կեանքը կը պարարեն, ջղային գօրութիւնն ու խորհրդոյ ուժգնութիւնը. կենաց մրուրը որջափ անմաքուր նոյնջափ ալ ծանծաղամիտ էս ապականեալէ. իսկ միտքը էս դատողութիւնը դուռը ինձ կը ցուցընեն, իմ դագաղս կը ներկայացընեն, էս ինձ հողին կ'ակնարկեն: Ո՛ մեծ իշխանդ կենաց էս մահուան, ճ Անմահդ բնութեան, ճ հոգեդէնդ Արփի. անոր արգասաւոր ճառագայթը զիս մթութենէ ուշ կանչեց, ուռնացեալ գրութիւն. որուն մեջ էս կը կենամ որդերու նուաստս, էս անպիտանութեան մեջ հողին տակ էս կը ճմլուիմ, անկարող՝ ճակատս վեր վերցընելու, էս ոսկեդէն օրուան ոգին խմելու, էս գոյութեան մեջ յաղթանակելու, էս ուրիշ շարժիչ մը ջունիմ բաց ՚իյաւիտենական երանութենէս, որուն երբայու միջոց պատրաստուած կայ. Հայրապետական ուրախութեամբ էս կը հետեւիմ անոր դեպ ՚ի անծանօթ երկիրը, էս կ'ապաւինիմ Անոր, էս գիտեմ բէ որու կ'ապաւինիմ, կեանքը էս մահը մի հաւասար են, ճջ իրարմէ առաւել. ասոր մեջ ամենքը կը կշռուին, ան թող ինձ Քեզի համար ապ-

րիմ: Բնութեան սոսկումներէն այսպէս կրնայ նու-  
 աճիլ խոժոռադէմ դաժանատեսիլ մահը. յան-  
 ցանքը միայն կը յայտնէ բռնաւորին ճիգակը. բայց  
 ուսկից էն մարդկային բոլոր յանցանքները . . .  
 մահը մոռնալէն: Ա՛ն էս խիստ արհամարհեցի իմ  
 շուրջս յաճախող խրատող բարեկամացս խումբը,  
 է. ծիծաղելով անպատիժ մնացի. քիչ պատճառ-  
 ներ ունիմ էս ծիծաղելու: Մահուան ազդա-  
 րարութիւնները՝ դեպ ՚ի վեր նետուած բքիններու  
 պէս էն, աւելի սոսկալի կ'ըլլան քանի որ կ'ուշանան,  
 է. որչափ որ ուշանան այնչափ առ.աւել մեր սըր-  
 տերուն կը գարնեն, է. աւելի խորը կը թափանցեն.  
 ճն խորհէ Լորէնցիօ, որքան խորհիս՝ այն կը խայթէ,  
 ո՞վ կրնայ անոր ցաւը ամոքել, ինչպիսի կ'այրի ան,  
 ո՞ր հաստաբազուկ ձեռք, կամ ո՞րպիսի քաջարուեստ  
 միտք կրնան զայն քարշել դուրս. ո՞ր առողջարար  
 ձեռք խաղաղութեան բալասանը կրնայ անոր վրայ  
 թափել, է. իմ անաբեկեալ խորհուրդս շիրմին վը-  
 քայ դարձընել. ուրախութեամբ, միանգամայն վըշ-  
 տով այն ամոքարար ձեռքը էս կը տեսնեմ: Ա՛ն  
 խիստ տեսանելի է այն, այն ՚ի բարձունս գետեղ-  
 եալ է . . . ՚ի բարձունս, ինչ կը խելացնորեմ էս, կը  
 հայնոյեմ էս. աւանդ... որքան ՚ի խոնարհ է Այն, հաս-  
 տատութեանն ներքէն. հաստատութիւնը Այն ձեռա-

կերպէց, Է. արդ ինձ համար արիւն կը թափե, բայց իւր թափած արիւնը իմ կարօտացած բախասանս է, տակաւին այն կը հոսի . . . նն . . . դնւրս գարշէ սա անագորոյն Երկաթը . . . նն ճէ, այն անաւոր օրհնութեանը ո՞վ կրնայ՝ կամ ո՞վ կը համարձակի մերձենալ. անկէ կախեալ է մարդկային ամէն յոյսը. այդ Երկնաթիւն է, որ հաստատուն կերպով վեր կը պահէ անկեալ տիեզերքը. Էրե Էլլէ, մենք կ'իյնանք, սոսկումը գմեգ կը շրջապատե, Է. այդ սոսկումը կը փափաքի որ արարչութիւնը իւր ծնանելուն հետ իսկոյն ջնջուեր, մրութեամբ ծածկուեր, Է. իւր անկողինը հողը ըլլար:

Երբ Աստուծոյն Է. Արեգը իւր գահին տակի հողն էն, կրնայ բուն Երկնից մէջ այսպիսի շնորհք մը գտնուիլ:

Ա՛հ, ինչ հեծեծանք կար հոն. հեծեծանք մը՝ որ Իրը ճէր. Այն իւր վրայ առաւ մեր անարկու բաժինը. վերցնաց բեռը՝ յանցաւոր աշխարհս իւր տակը ճնշող բեռը . . . Էրե հագարաւոր աշխարհքներ այսպէս գնուած էն՝ շատ սուղ գնուած պիտի ըլլան:

Նոր զգացմունք մը Հրեշտակաց կուրծքին մէջ կը բարձրանայ, որոնք կը թողուն իրենց Էրգերը Է. վայրիկ մի կը դադարին: Ա՛հ Էրանի թէ ամոնց Էրգերուն հասներ իմ վսեմ բնաբանս . . . ո՞ գիշեր

օգնէ ինձ քու ներդաշնակասոր պարովդ, բայց առաւել Դու՝ որ այս պարին կ'ազդես, քանի որ ես սերովբէներուն հետ կը բաժանեմ սերովբէական բնաբանները եւ մարդուն կը ցուցնեմ մարդուն գերազանցութիւնը. ապա թէ ոչ ես իմ երգովս կ'ապականեմ իմ առարկայս. ինչ. միթէ հեթանոսութիւնը պիտի բորբոքի երկնային բոցով եւ Քրիստոնէութիւնը պիտի ողբայ. մեր սրտերուն՝ ոչ թէ գլուխներնուս վրայ կը թափի զազիր նախատինքը. արթնցիր սիրտն իմ արթնցիր. ինչ բան կրնայ զքեզ արթնցընէյ, եթէ ասով ջարթննաս, «Աստուածութիւնը կախուած է մարդկային երջանկութեան համար» . զգն այս մեծ ճշմարտութիւնը որ հեթանոսական մոլորութեան տասնապատիկ գիշերէն դնւոս կը պորտկայ անվերջ օրուան ոսկեղէն հեղեղով. զգալը՝ բորբոքիլ ե, եւ հաւատալը՝ Լորենցիօ զգալ ե. . . Դու ո՛ր ամենագրած եւ ամենահարկու Զօրութիւն, աւելի ամենահարկու ես քու զարմանալի սիրովդ, այս աւելիահարկու կ'ընէ քու պատուիրանքներդ, եւ զազիր փորձութիւնը եօթնապատիկ կ'ընկղմի յանցանաց մեջ. սո՛ւ, ինտո՛ր մեր սրտերը կը դողան քու անհուն սիրոյդ առջեւ, սիրոյ մեջ անհուն այն, բայց եւ անպարտելի՛ արդարութեան մեջ. Դու քու արդարութենէդ առաւել Խաչը ներկեցիր. եւ ամենամեծ զարմանալիք գործեցիր, որ քու ամենասիրելիդ

կարենայ առաւել արիւն քափել: Յանդուզն խոր-  
խնորդ, ինչ. միթէ ես պիտի համարձակիմ զայն բար-  
բառելու. կամ ներկայացրնելու, պիտի դեռ. եւս մար-  
դը յանցանքով պարծենայ որ այսպիսի վրէժխնդրու-  
քիւն մը յարուցած է, որ այսպիսի սեր մը բորբոքած է,  
վասն յանցանաց (որպիսի բարձրացեալ) բազկատա-  
րած բազուկներով, ահագին Արդարութիւնը եւ փափ-  
կասուն զմայելի Սերը զիրար կը գրկախառնեն. կը  
բարձրացունեն Քու գահդ ամենայն վեհանճնութեամբ  
երբ կը տեսնեին անոր վսեմութիւնը օգնութեան կա-  
րօտ. կամ Այն եւ կամ մարդս անշուշտ պիտի մեռ-  
նէր. անյատակ երկնային խորհուրդէն ՚ի զատ ուրիշ  
ինչ վհատութեան մեջ այսպիսի հնարք մը կրնայ  
ստեղծուիլ, եւ երկունքն ալ ազատիլ. այն, երկունքն  
ալ, երկունքն ալ փառասորեալ. ան ինչպէս երկունքն  
ալ, փառասորութեան այս արարքով, զարմանալի ա-  
րարք, կամ եւս առաւել զայն կոչել կրնամ Ահե-  
հակարողութիւն. հրաշք մը՝ որ որչափ մարդուս՝  
նոյնչափ ալ երկնից զարմանալի: Ոչ այսպէս մեր  
անհաւատները յաւիտենականութիւնը կը նկարագ-  
րեն, Աստուած մը յամենայնի կատարեալ եւ ինք-  
նիշխան, կատարեալ շրջանակ մը լեցուն իւր ամեն  
ճառագայթներովը. անոնք անվայելուչ երկինք մը  
կ'ստորնագրեն եւ միայն մեկ պատուականութեամբ եւ  
այն ալ փոփոխուած, կը պակսեցրնեն երկնից կա-

տարելութիւնը, կը կոտրեն անոր հաւասար ճառագայթները, ողորմութեանը միայն յաղթանակ կ'ընծայեն... Աստուած ինքնին անոնց այսպիսի խայտառակ գովաբանութեամբը կը ջաստուածանայ, միմիայն ողորմած աստուած մը անիրաւ աստուած մըն է, զմտագուրկ հանճարեղէններ, զմկրտեալ անկրօններ, նորոգութիւն անյարմար եակներ. զաւելի զագրութեամբ աղտեղեալներ. լսեցէք փրկանաց գինը վճարուած է. երկնից դրամագլուխը, երկնից անըսպառելի թափած դրամագլուխը հիանալով է. հիացընելով գինը դուրս թափեց ամեն գիներէն գերագանցելով, այս զարմանալի գումարը կարող հրեշտակապետները չի կրցան տալ. անոր ընդարձակ արժեքին միտք չի հասնիր զոր Գերագոյնը միայն գիտէ է. կը ծածկէ :

Յիրաւի փրկանաց գինը վճարուեցաւ. մի, այն, է. ձեզի համար վճարուեցաւ (իմչ բան ասկից առաւել կրնայ Աստուծոյ բարերարութիւնը հռչակել) Արեգը տեսաւ . . . այն անարկու տեսարանը չէր որ անոր կարգը էտ դարձուց, անոր դէմքը կես գիշերով քողածածկեց. ոչ թէ սա գիշերուան պէս, ոչ թէ բնութեան ըրածին պէս, կես գիշեր մը՝ որուն վրայ բնութիւնն անգամ նայելու սոսկաց. նոր կես գիշեր մը՝ սոսկալի խաւարում մը (առանց գունտերու ղիմաղրութեան) իւր արարչին խոժոռելին. զ Արփի

միքէ քու արարչիդ մանը ջիտեսնէյու. համար ծածկուեցար, եքէ ոչ մարդկային յանցանաց այն անեղ բեռեն, որ Անոր օրհնեալ գլուխը ծուեց իւր Խաչին վրայ ճնշուելով. հառաջեց երկրիս կեդրոնը. դուրս պորտկաց անոր մարմարիոնեալ արգանդը՝ անհնարին եւ զարմանալի սաստկութեամբ իւր մեռելները դուրս տալով՝ գոռաց դժոխքը եւ այդ վայրկենին երկինքը արտասուեց. արտասուեց երկինք որ մարդս ցնծայ, արիւն հոսեց երկինք՝ որ մարդս . . . ալ ջի մեռնի:

Արդ բարեպաշտութիւնը առաքինութիւն է միայն ստիպողական է. ինչպիսի բար սիրտ մը կրնայ այսպիսի խորհուրդ կրել. այսպիսի մտածմունքները զմեզ կը բարձրացընեն. եւ պիտի բարձրացընեն միտքը աւելի բարձր. բայց ասոնցմով ջի յափշտակեալ եւ ջի բորբոքեալ մարդոց վրայ ջի պիտի նայի անգամ... ուր կը շրջին իմ խորհուրդներս. մեկ զարմանալիքն հանգչելու ժամանակ ուրիշ զարմանալիքի մը կը հանդիպի, որոնց ամեն շրջումներուն մեջ հոգիս բռնուած է. երկնային զօրութեան օրհնութիւնները Խաչին վրայեն բազմութեամբ հոգւոյս վրայ կը խըմբեն եւ գայն կը շրջապատեն: Հիացման բանտարգեալ՝ Անոր օրհնեալ կենաց մեջ ես կը տեսնեմ շաւիղը, եւ իւր մահուանը մեջ գինը, եւ իւր փառաստոր բարձրանալուն մեջ անմահութեան գերագոյն փաս-

տը . . . իրօք համբարձան մի, լսեցեք՝ ո՛ր Ազիւք, Երզնայք ո՛ր մեռեալք, Այն համբարձան, Այն համբարձան, Այն խորտակեց մահուան փականքը, գլուխնիդ վերուցեք ո՛ր մշտնջենաւոր դռներ, փառաց թագաւորին մուտք տալու. ո՛վ է փառաց թագաւորը. Այն որ մահուան սոսկումը վերցընելու համար իւր փառաց գահը ձգեց. գլուխնիդ բարձրացուցեք՝ ո՛ր մշտնջենաւոր դռներ փառաց թագաւորին մուտք տալու. ո՛վ է փառաց թագաւորը. Այն որ սպաննեց մարդկային ցեղը կործանող գիշատիչ թշնամին, Այն փառաց թագաւորը, որուն փառքը լեցուց հիացմամբ երկինքը՝ իւր առ մարդս ցուցուցած սիրոյն համար. Եւ որուն կը նային լուսափայլ գօրութիւնները երկնային հաճութեամբ շուարելով այս իրողութեան վրայ . . . հիւանայի գործ, Եւ տարօրինակ ուրախութիւն. ուրեմն ինչպէս մարդս կրնայ դիմանայ, ահա այն պայթեալ դռները, այն ճնշեան խայթոցը, այն տապալեան գահը, Եւ յաղթուած մահուան վերջին շունչը. բող ցընծայ երկինքն ու երկիրս մարդուս այս բարի վախճանին համար, որուն բնութիւնը այն ժամանակը բեաւորութեամբ, Եւ իւր հետը մեկտեղ գերեզմանէն բարձրացաւ, ան ժամանակը Եւ յարեալ, ան ժամանակը առաջին անգամ մարդկային յաղթանակը լուսոյն ականակիտ դռներէն անցաւ. (սրանչելի հիւր) Եւ գրաւեց յաւիտենական պատանեկութիւնը, մեր



անունովը գրաւեց, Է. ահա այն ժամանակէն հետե հայհոյութիւն է զմարդ մահկանացու կոչելը, մարդու մահկանացութիւնը այն ժամանակը մահուան փոխադրութեցաւ, Է. երկնային յարատեւութիւնը անօտարաբար շնորհութեցաւ այս կորստական կազմութեան: Եւ ահա հողին զաւակը, մարդս՝ ամենայնիւ անմահացաւ, ուրախ լեր ուրախ լեր ճ երկինք, բու ամեն առատ նուերներդ մարդուն շնորհութեցաւ, բու ամեն փառքդ, մարդուս անհատնում երանութիւնն է:

Ո՞ր էմ էս՝ յրջապատեալ այս փառաստոր բնաբանով, միքէ Քրիստոնեական կայտառ ուրախութեան բեւերովը Այօնիըն լեռան վրայ էմ. . . աւանդ քիջ պատճառ կայ ուրախանայու, լինջ, եքէ անմահութիւնս վիրաւորութի, Է. եականութիւնս արգիլութի վայոց մեջ, ուր կը մնայ այն ժամանակը իմ սնապարծութիւնս՝ իմ անմահութիւնս, կը մեծաբանէմ մի դեռ քանի որ յանցանքներով պատեալ էմ . . . յանցաւորին Է. ոջ քե անմեղին համար Այն իւր անճը զոհեց, յանցանքը կրնայ միայն Անոր մահը ճշմարտել. առանց յանցանքի Անոր մահը անկարելի է ցուցնել. կակողացեալ յանցանքը երկնից մեջ հաճելի է տեսութեան, բայց եքէ յիմարութեամբ հիւանդացած ալ ըլլամ էս կը զիջանիմ... Ան կը գրէ իմ անունս այն սեպաժայր նիգակով (արեան մեջ խոր մտած նիգակ մը) որ իւր կողը ծակեց, Է. բացաւ հոն բոյոր մարդ-

կային սեռին համար մեկ աղբիւր մը, ան որ յան-  
ցանք կը գործէ, անկից խմելու. է. ապրելու համար.  
այս, է. այս միայն կրնայ մահուան երկիւղը փա-  
րատել :

Եւ ինչ է այս . . . նկատէ՞ զարմանալի փրկումը,  
է. աստիճանաբար քող քու զարմանքդ բարձրանայ :  
Ճեղքումն՝ անսահման հակառակութեան, ներում մը  
որ ինքնին անսահման է, ներում մը որ արեամբ զքն-  
ուած է՝ Երկնային արեամբ, այն Երկնայնոյն ար-  
եամբը զոր էս իմ ռոտիս ըրած էմ, զայն զայրացը-  
նելու ջափ, քէէ. քախանձելով զայն է. վախնալով  
իրմէ, փառաբանելով զինքը, պատժուելով իրմէ,  
բայց տակաւին սաստիկ ապստամբելով իրեն դէմ,  
այնպիսի ապստամբութեամբ մը՝ որ մինչեւ իւր Գա-  
հին որոտմանցը մեջ կ'ելլէ, ոչ քէ միայն էս, տի-  
եզերն անգամ իրեն դէմ կ'ապստամբի, բոլոր  
մարդկային ցեղը Անոր դէմ գէնք վերցուցած է ա-  
ռանց մեկ բացառութեան, բայց . . . Ան . . . տա-  
կաւին Այն ամենէն չարանէնգին համար կը մեռնի,  
է. կ'ուրախանայ ամենամեծ մեղաւորի մը ազատ-  
մանը վրայ. իբր քէ մարդկային ցեղը նախապա-  
տիւ եղած ըլլայ, իբր անելի սիրելի Աստուածու-  
թիւն մը, որքան բարերարութիւն է այս մարդուս  
համար: Թող ցնցուի ամեն սիրտ, է. քող բորբո-  
քի ամեն կուրծք, է. տեսնեն քէ ինչ անկշիռ հը-

րաշք է այս, որուն ամենէն վարը երկնից մէջ խիստ բարձր է, եւ այնչափ բարձր որուն գագաթին բարձրութեանը խելք չի հասնիր, թէ մարդկային խելք է. թէ հրեշտակային, ճի թէ էս կարենայի այս գարմանայի էլքը մագլցելու, միանգամայն զինքը գովաբանելով, յաւիտեան զայն պիտի գովաբանեմ (էթէ գարմանքը ինձ ժամանակ տայ) եռանդուն գովաբանութեամբ, սիրայիր, եւ շարունակ, Արաբիայի զոհերուն բուրումէն աւելի անոյշ բուրում մը դէպ'ի Երկինք բարձրացընելով, եւ բոյոր խնկաբեր լեռները հրահրելով: Այս է մեր պարտականութիւնը առ Երկինս, եւ անա այն ժամանակը բարեմասնութիւնը կ'իջնայ Երկինքէն իւր փափակ փետուրովը (գովելի հրեշտակին թեւէն նախ մարդ զայն փրցուց) մահկանացու սկանջները բերկրեցընելու:

Միթէ այս մեծերուն զրպանին մէջ կը ծածկնի, միթէ բարեբաղդութիւնը ամենուն ստացուածքն է, եւ անոնց որ դժոխքի պէս սեաւ են, եւ ոսկեմոյ: Ան ոսկեսիրութիւնը սերերուն նուաստագոյնն է. ինչ' միթէ բարեբաղդութիւնը իւր բուրումը առաքինութեան մեռնողին վրայ պիտի վատնէ, անհարազատը խնկելո՞ւ, յանցանքին գարշահոտութիւնը օծելու, արժանի է անպիտան հացը Երիօբի մէջ լուացուելու, աղտեղութենէն մաքրուելու կամ աչքէ ծած-

կուէլու համար:

Թատրոններու մեջ աւելածու մը, ՚ի մեջ ապառուհի գոհարեղէն մը գտնայ կը յուսանյ. քանի որ պարապուքիւնը կը տիրէ հոն: Գարձիր այն գովաբանութիւնը դարձիր արքունիքներէն, եւ գահերէն. նոյն արացողը բարեմասնութիւն, նոյն դատարկաշրջիկ եւ անառակ, քու առաջին սիրոյդ դարձիր, առաջինիդ, եւ ամենամեծիդ, որ երբեմն քեզ աննախանձ ենթակայ էր:

Հոն յորդութիւնը պտոյտի նման կը հոսի դեպ ՚ի էտ իւր աղբիւրէն այն ծնող գօրութեանց որ ճայնի համար լեզու տուած է, բարձրանալու համար խորհուրդ, եւ եութեան համար հոգի: Մարդիկ մարդոց յարգութիւն կը մատուցանեն, բայց անխորհուրդ են անոր վրայ, որուն զարհուրելի աջքին առջէն այն ժամանակը կը խոնարհին, երբ կը հասնի սոսկումը, հողէն հողին, յանցանքէն յանցանքին եւ իրենց կունակը միայն քեզի կը դարձնեն՝ նոյն Մեծը Հայր, քանի որ քու բիւրեղեայ գահիդ շուրջը հրեշտակներ լի հիացմամբ անդադար զքեզ կը գովաբանեն: Ո՛ մարդս մարդէ վախճալուն կանխագիտութիւնը, մարդուս հեղինակը, վախճանը, փրկիչը, օրենքը, եւ դատաւորը. ամեն բան քուկդ է, օրը քուկդ, եւ գիշերուան մթութիւնը քուկդ է իւր ամեն հարստութեամբը, իւր ամեն սրանջելի

աշխարհներովը. Եւ ինչ է յախտեցական գիշերը,  
 էքե ոչ քու խիստ ակնարկութիւնդ. Եւ ինչ է  
 երկնից եական փառքը, էքե ոչ քու քաղցրութիւ-  
 նըդ, Եւ ժպիտդ, Եւ ուստի հարկ չէ որ գովաբա-  
 նութիւնն ալ քուկդ ըլլայ, քանի որ երկնից զօրու-  
 քիւնները Ալեյուիա ըսելով կ'ապրին: Ա՛ն էրանի  
 քե բաւ ըլլար շնչառութիւնս, Եւ հոգիս սկըսեր  
 գովաբանել զայն որ զինքը ինձ տուաւ ո՛ն մեծդ Սէր,  
 հեռացուր՝ իմ գեղեցիկ բարեբաղդութիւններս սա  
 դժողքին շուքերէն, ո՛ն ամենառաւել երկրպագելի, ո՛ն  
 ամենէն առաւել ջի երկրպագուած, ո՛ն պիտի ըս-  
 կըսի այն գովաբանութիւնը որ վերջ ջի պիտի ու-  
 նենայ. որ կողմ որ կը դառնամ այս բողոքը կը  
 լսեմ, ինչպէս գիշերուան սամոյր (սէս) վերարկուն  
 (յօդիկ) կ'աշխատի, երկնային յատկութեամբ որ-  
 պիտի վսեմ այն արուեստակերտեալ է. ինչպէս կը  
 փայլի իմաստութիւնը, ինչ սէր. սա կէս գիշեր-  
 ուան հանդեսը, սա հոյակապ կամարը՝ ոսկեղէն  
 աշխարհներով շրջապատեալ է, երկնային փառ-  
 քով շինուած. . . ոչինչ Քեզի համար, այլ ուրիշ-  
 ներու համար է այս առատութիւնը, դու գաս՝  
 մեկդի, վեր, անդին. . . ո՛ն ըսէ ինձ ո՛ն Կարող Միտք  
 ո՛ն էս դու, առաւել խմբը ընկղմիմ, Արեգին  
 հարցընեմ՝ կամ քե սա տատանող հովերուն քե ո՛ն  
 է իրենց Արարիչը, միքէ բարձրաճայն աղաղակով

հարցընեմ, որոտման քի իւր մեջը Ամենակարողը կը բնակի, Ա՞ն է որ սոսկայի փոթոթիկներուն ուղիղ սանձելը կը բռնէ, Եւ կը հրամայէ կատաղի մրրկին որ իւր երագընքաց կամքը յառաջ տանի . . . բայց ինչ կը նշանակեն այս հարցումները, սոսկայով Ես կը հրաժարիմ:

Իմ հոգիս գետնամած իւր Արարիչը կը պաշտէ Եւ կը յարգէ: Հեռաւոր Աստուածութիւն մը Ես կը պաշտեմ. Այն կը ներդաշնակէ իմ ձայնս (Երէ ներդաշնակութիւն). շիղջ որ շատագովութիւններ կը գրէ՝ իւր հոթեանը մեջ կը շրջապատուի, Ես իւր գովաբանութիւնը վերստին կը կրկնեմ, բայց քի Եւ անցաւ մտացս ճապաղումը, սակայն անեզր է իւր Եութիւնը, տեղական է իւր գանը (ինչպէս որ վայելուչ է) հաւաքելու ցրուեալները (ինչպէս որ առաջնորդ մը կը կանչէ հեռուէն ամեն անոնք որ իւր ցուցակին մեջն են) մէկ կետի մը վրայ հաստատելու, մէկ կեղքոնական կետի մը վրայ, իւր որդիները պիտի հաւաքէ, պիտի վերջանայ ամեն բնութիւն, բաց 'ի իրեններէն:

Անանունն Այն որուն ակնարկութիւնը բնութեան ծնունդն է . . . Եւ բնութեան վահանը իւր ձեռքին շուքն է, որուն եղծումը անոր ժպիտին դարբումն է, Ան որ առաջին Եւ վերջին է՝ 'ի բարձունս վրանաւոր կը նստի, իւր անսահման պայծառութե-

նեն մինչէ մթութեան մեջ, որ ծնեալ է անտեսանելի Երկինքէն, իւր փառաց կորսուած պայծառութեան մեջէն, ստեղծեալ պայծառ փառքին, իբրքէ կեղրոնական սոսկութի մը վրայ. Ան վար կը նայի ամեն անոնց վրայ որ կը բարձրանան, եւ անսահմանութիւնը կը ջափեն:

Թէեւ գիշերը անբիւ աշխարհներ տեսութեան կը ներկայացընէ, անսահման է տակաւին արարչագործութիւնը, ինչ էք դուք, ճառագայթ մը՝ լոկ մէկ արտահոսութիւն մը իւր վեհանձնութեան, եւ ուստի սա շամանդաղ Երկրիս մէկ շամանդաղը որ հողին է մեղաց մեջն է կրնայ մի մրմնջել Երկնից բնաբանը. վար կեղրոնին էս պիտի խրկեմ իմ խորհուրդս, փայփյուն մետաղաց, եւ բորբոքեալ գոհարեղինաց հանքերուն, ասոնց զրկուած բոցք իմ տաղերգութենէս պայծառութիւն կ'սպասեն, տաղերգութենէս որ մթութեան մեջ կը շրջի, եւ շատ անգամ խիստ բարձրանալով աստղերուն կամարին կը հասնի, Աստղերը որ քէեւ շքեղ են, բայց իրենց սսկեփայլութիւնը տակաւին աղօտութեան մրուր են քու քովդ, ո՛ր Մեծդ, բարիդ, իմաստունդ, զարմանալիդ, յաւիտենականդ քագաւոր. էք սա քու գահդ շրջապատող վկայ աստեղք մշտահոս գովաբանութիւն, եւ տարրացեալ օրհնաբանութիւն, եւ սեպհական մաղթանք կը նուիրեն. աստղերը որ

աղբատ են առատութեան մեջ, նուաստ իրենց վը-  
 սեմութիւնը, անգօր իրենց եռանդը, ցուրտ իրենց  
 ջերմութիւնը, տակաւին երախտապարտ են. իրենց  
 ամենաբարձր յափշտակութիւնը կը հրահրի. թերի  
 են դեռ. իրենց նպատակեն, թէեւ երկնային են: Բայց  
 այս բնաբանը մարդունն է, եւ միմիայն մարդուն.  
 որոնց ընդարձակ սահմանը հոն չի հասնիր. անոնք  
 բարիքը փոխանակ 'ի բարձանց խնդրելու, երկրիս  
 վրայ կը փնտրուեն, եւ վար կը նային երկնից նախա-  
 պատիւ բարեբաղդութիւնը գտնելու համար: Եթերին  
 առաջին ծնունդը, բարձր լուսոյ դաշտերեն մարդուս  
 վրայ կը նայի, իւր Աստուծոյ փառքը տեսնելու. եթէ  
 հրեշտակները նախանձել կարենային, այս մասին  
 անշուշտ պիտի նախանձէին, եւ յիբաւի անոնցմէ մէկ  
 քանիները նախանձեցան, իսկ մնացեալները թէեւ  
 հոգեւէր բայց տակաւին անազատ են (այս է մարդուս  
 յաղթանակը, որ հողը երկնից դէմ գինելու փոր-  
 ձութեանը կը մատնէ), անոնք թէեւ շատ յար-  
 գուած են, բայց իմ բնաբանս քիչ պիտի զգան,  
 անոնք Արարչութիւնը միայն կ'երգեն (վասն զի  
 հոն բաժին ունին): Ի՞նչպիսի ներդաշնակութեամբ  
 Սիրոյ Որդին համբարձաւ . . . Արարչագործութեան  
 նախապատիւը. ո՞ւմարդ, քու, քուկղ՛է ազատու-  
 րթիւնը, հրեշտակները ալ քեզի տուին բանային, ալ  
 քեզ կը մնայ էլլէլ եւ յաւիտեան երգաբանել, թէեւ



մարդկային, բայց երկնային, միթե այս՝ մարդս չի պիտի բարձրացընէ, և բոբբոբէ սերովբէները: Ազատութիւն, արարչագործութեան նախապատիւը Ազատութիւնն է. այս երկնից աշխատութիւնն էր. աշխատութենէ այ առանել. այն ման էր երկնից մեջ. տարօրինակ ճշմարտութիւն, դժուարաւ անոր ճշմարիտ ըլլալուն վրայ կը խորհուի. եթէ չի հաւատալը անելի մեծ յանդգնութիւն չըլլայ:

Հանդարտինք հոս և քննենք, երկնից մեջ ման կսնր մի. ուստի ինչ երկրիս վրայ, երկրիս վրայ, որ հարուածէց գայն. ո՞վ է հարուածողը, ո՞վ . . . նն ինչպէս մարդս մեծացուցեալ է. սա միջավայրին մեջէն կը տեսնուի, զրպիսի թզուկ պարիսպներ, ինչպէս հաւասարակշռուած է անոր սկիզբը հողէն, և իւր տխուր դարձը հողին. ինչպէս դատարկացեալ է անոր ընդարձակ հեռաւորութիւնը երկինքէն, ինչպէս ան կը մօտենայ սերովբէին. ո՞րն է սերովբէն, ո՞րն է հողին ծնունդը, այս ինչպէս կ'ապացուցանէ խիտ ամպոց մեջէն՝ յանցանքով և հողով քանձրացեալ երկնից Որդին, կրկնապատիկն Որդին, ստեղծեալը, և անստեղծը, և ինչ՝ միթե այս երկնից կրկնապատիկ ստացուածքը պիտի կորսուի, միմիայն մարդուս կրկնապատիկ յիմարութեամբը կրնայ կործանիլ, արիւնաներկ Խաչը ամեն բան խոստացած է. արիւնյուսայ Խաչը

յաւիտենական շնորհք՝ Էխոստացած է, ան որ իւր  
կեանքը տուաւ, ինչ շնորհք կրնայ ! Խնայել . . .  
նվ դուք որ այս կենաց ժայռին վրայ կը խայտաբ,  
ուրացողներ, դուք գլխիկոր անդունդին մեջ պիտի  
ընկղմիք. ինչ սփոփիչ ուրախութիւն, ինչ ուժեղ մը-  
խիբարութիւն, որ եւ իցե հով քե վիչե, ինչ ալեկոծու-  
թիւն այ ըլլայ, մեր յոյսը եւ շահը փոթորկին տի-  
րոջը վրայ է. իւր քովը պիտի երթանք եւ խորտակ-  
եալ բնութեան աւերակին վրայ պիտի ծիծաղինք,  
երբ վատթար ուրացողները հանդարտութեան մեջ  
պիտի դողան եւ զարհուրին:

Ո՛ւմարդ ճանջցիր ինքզինքդ, անա ասոր մեջ ա-  
մեն իմաստութիւն կը կեդրոնանայ, մարդս մարդես  
'ի գատ ուրիշի մը առջեւ անարգ ջերեւնար, գերա-  
պանծ հրեշտակները մարդոց վրայ կը նային, եւ  
կ'զմային. զորքան ժամանակ մարդկային բնութիւ-  
նը անոնց զիրքը պիտի ըլլայ, անհարազատ մահ-  
մանացն, դուր ջես կարդար. դատողութեան աղօտ  
ճառագայթը՝ բազմառատ զարմանալիքներ անոր  
մեջ կը հռչակէ. ինչ բարձր բերկրութիւնք, շքեղա-  
պանծ յատկութիւններ. բայց այն մեծ Տեսութիւնը  
որ մեզ լիովին մարդկային բարձրութեան կը հասցը-  
նէ, հազիւ երկնային խորհրդոց առարկայ եղած է.  
զոր երկինք հեղինակեց, եւ Խաչին վրայ հրատա-  
րակեց. Ո՛վ կրնայ անոր նայիլ եւ չի տեսնել ինքը-

զինքին մեջ մեկ երկիրդայի օտարական մը, հողածին Աստուած մը, եւ փառաւոր ընկեր մը Աստուածութեան. այդ բարձրհանգամանքին մեջ անմահ կեանքերէ Աստուած մըն է որ արեամբ կ'ողողի, ան ճըճիի մը համար չի կրնար գոհուիլ. ես կը նայիմ, եւ քանի որ կը նայիմ իմ բարձրացեալ հոգիս զարմանալի կերպով կըբոբբոբի, օտարական կրակ մը ձեռք կ'անցընէ, այն է Յաիտենականութիւն. եւ կը բողոք աշխարհս, եւ կամ աւելի զայն կը վայելէ. բնութեան դէմքը ինտո՛ր փոխուեցաւ, ինտո՛ր լաւացաւ. ան որ մթին վեճ մը կ'երևնար, արդ փառաւոր աշխարհի մը պէս կը փայլի, եւ կամ ինչ աշխարհ, եղեմ մը՝ յամենայնի պերճացեալ՝ ան այ ուրիշ տեսարան մըն է, ինքնին ան չէ, ուրիշ մըն է: Քանի որ ժամանակը յառաջ կ'երթայ աւելի կը պերճանայ՝ երկայն տարիներէ հետէ, տակաւին շրապատեալ, համարձակ գոշակութեան ուժգին ճառագայթովը դեռ չի բացուած էի, արդ հիմայ այն զարմանալի ճակատագրէն ինչպէս արձակուեցայ, ինչպէս բնութիւնը կը բանայ, եւ իմ հոգիս կ'ընդունի գերեալ խորհորդին անսահման ճամբաներուն մէջ. ուր երկնայինք կը հանդիպին ինձ, եւ զիս կը գրկախառնեն. զարմանալի դիպուածոց քանի նոր ծնունդներ, Արեգին անգամ անգիտելի. ուր ինչ որ հիայ կ'զմայլի, հագլիս կը յիշուի: Հին ժամանակը, եւ սքանչելի

Արարչագործութիւնը մոռցուած են:

Այս անտէղի է մի. մարդես կ'ելլեն անտէղի խորհուրդներ իբր ճշմարտութիւն. անվախճան խորհուրդները քեւերու կարօտ են անոր հասնելու, և անկէ առաւել Աստուածութեան: Ան մեծ Հայրը թոշակառու աշխարհները մեկ բոցի մը մէջ կը բորբոքէ, մեկ հոգի մը կը քափէ այն Հոգիին զարհուրելի աղբիւրքէն, անճամբ կը հեղու. անոնց ամեն հոգիներուն մէջ, բայց ոչ հաւասարաբար. առատաբար կամ չափաւոր՝ ըստ իւր իմաստուն կարգադրութեան, և ըստ պահանջման. և երբ կը կատարուի իրենց գանազան քննութիւնները իրենց գանազան վիճակներուն մէջ, և երբ կը շարունակեն թոշակաւորութիւննին, գանոնք հասուն պտղոց նման իւր բովը կը հաւաքէ, իւր գահը անոնց կեդրոնը՝ և իւր ժըպիտը անոնց պսակը կ'ըլլայ:

Ինչո՞ւ տարակուսինք ուրեմն, և այս փառաւոր երգը չերգեմք, որն որ թէ և դեռ երգուած չէ՝ կարելի է յանդգնութիւն կարծուելով: Հրեշտակները ազնիւ տեսակ մարդիկ են, Հրեշտակները լուսեղէն պատմութեանով զգեստաւորեալ մարդիկ են, որք կը սաւառնին բիւրեղեայ լեռան բարձրութեանը վրայ: Իսկ մարդիկ հրեշտակներ են, միայն մեկ ժամու մը համար բեռնաւորեալ, որ սա տղմուտ ձորը կ'անցնին անհնարին դժուարութեամբ, և գա-

հավիժին յատակը սահող քայլերով: Հրեշտակները իրենց պակասութիւնը ունին, և մահկանացուք իրենց բարեմասնութիւնը, քանի որ հոս են երբեքական բազմութեամբ պատեալ են, որոնք շարունակ կը հրահրեն զիրենք այն փառասոր դրոշակին որ յախտեան կը ծածանի դեպ 'ի Երկինք. մեր Եղբայրները անմտադիր չեն իրենց Ազգակիցներուն վրայ. քե և գատեալ՝ բայց սիրով են: Միքայել մերտեղը պատերազմեցաւ, Ռափայել մեր յաղթանակը երգեց, Գաբրիել մեզի պատգամաբեր խրկուեցաւ. Հըզորեն, և ո՛ր մարդիկ ասոնք քու բարեկամներդ, և ջերմ դաշնակիցներդ են, և դուն (ամօքը այտերդ կը մոխրագունեց) անզգայ կը մնաս:

Ամեն բան Կրօնքն է. երբ կ'իջնայ Երկինքէն թշուառ մարդուս համար այն Աստուածունիին, իւր ձախ ձեռքովը այս Աշխարհս կը բռնե, և իւր աջով միւսը. Կրօնքն է միայն որ մարդուս մարդ ըլլալը կը վկայե, մարդս բարձրացընողը միայն ան է, մինչեւ անգամ սա անհաստատութեան գիշերին, փոխման և մահուան մեջ, ան հոգիին այնպիսի հոգի մը կուտայ որ Աստուծոյ պէս կը գործէ: Կրօնք. նախախնամութիւն, մեկ ապագայ վիճակ մը, այս է հաստատուն կանգնելու տեղը. այս է իսկական վեմը. ասոնք կրնան մեզի պահպանել. ասոնցմէ 'ի գատ ամեն բան ծով է, որ ջորս կող-

մերնիս կը կատողի, կը գոռայ, կը պայթի, և կըլ-  
լելու կ'սպառնայ. բայց բարի մարդը իւր ձեռուը-  
նեքովը Նրկինքը կը բռնէ, և կը հրամայէ երկրիս  
ուգածին ջափ ալեկոծելու, զոր ինքը բնաւ չզգար:

Ինչպէս որ թշուառական մը, երբ խիտ ապա-  
կանեալ օդէն՝ մթութենէն՝ զարշահոտութենէն՝ հեղ-  
ցուցիչ խոնաութենէն՝ և բանտի մը սոսկումնե-  
րէն բարեբաղդաբար ազատելով՝ մեկէն այնպիսի  
տեղեր կը դիմէ, ուր մաքրութիւնը կը տիրէ, և Ն-  
դիւսեան բարեյաջողութիւնը կը գտնուի, որով իւր  
սիրտը կը հրճուի, և հոգին իւր բեռերը կը նետէ,  
իբր նորէն ծնած կ'ըլլայ, և իւր փոփոխութեանը  
վրայ կը պարծենայ. այսպէս կ'ըլլայ հոգիին ու-  
րախութիւնները, երբ փառագոյրկ նպատակներէն՝  
նուաստ քաղցրութիւններէն՝ մրուրներէն՝ և սնո-  
տի երեւոյթներէն՝ երկրային կապերէն կ'արձակուի,  
և կը բարձրանայ դատողութեան սահմանին՝ բուն  
իւր սեպհական տարրին, անմահ յոյսեր կը շնջա-  
ուէ, և կ'ազդէ երկնից: Կրօ՛նք, դու ես երջանկու-  
թեան հոգին. հեծեծող Գողգոթան Քեզմով հոն կը  
փայլեցընէ ազնիւ ճշմարտութիւնները, հոն է ամե-  
նագօրասուր և կարեւոր խղճմտանքին խայթոցը.  
հոն սուրբ սաստկութիւնը կը յարձակի հոգիին վը-  
րայ, հոն միայն ստիպումը չի գտնուիր, կրնայ մի  
սէրը զմեզ որսալ, կամ սոսկումը մեր վրայ տի-

րել: Այն կույայ, հոսուած արտասուքը արփին կը մարե. Ան կը հեծե, Եւ իւր հեծեծանքը երկիրս իւր արմատեն կը շարժե. արդ եք իւր սիրոյն մեջ այսպէս սոսկալի է, հապա իւր բարկութեան բոցին մէջ . . . :

Իւր փափկութիւնը կրակին վրայ բափուած կա. կուղ իւղին նման ուրիշ կրակները կը մարե. կրնայ մի աղօթքը Եւ գովաբանութիւնը գայն հեռացընել, դու իմ ամենս, իմ ենթակաս, իմ շնչառութիւնս, Եւ իմ բազս. ծերութեանս ուծը, նուաստութեանս բարձրութիւնը, իմ հոգւոյս փառքը, հաճութիւնը, հարստութիւնը, իմ աշխարհս, իմ մքութեանս լոյսը, Եւ մահուանս մէջ իմ կեանքս, սս ժամանակին մէջ իմ համարձակութիւնս, Եւ յաւիտենականութեան մէջ իմ երանութիւնս... յաւիտենականութիւնը խիստ կարճ է քու բարեմասնութիւններդ պատմելու, կամ քու մարդուս վրայունեցած սիրոյդ յատակը գտնելու, մարդուս, Եւ ամենանուաստ մարդուս, մինչէս անգամ ինն, իմ զննս, իմ Աստուանս . . . ինչ են ասոնք, ինչ էս դու ուրեմն, ինչ անուն տամ քեզի, երանի քե գիտնայի քե ինչ անուն քեզի համար կը գործածեն Եռանդագին Հրեշտակապետները, ան անունը երկիւղած Հրեշտակապետները պիտի վայելեն առանց իմ նախաննուս, աւելի վերագոյն հազարաւոր ա-

նուններ՝ ոչ այնչափ անոյշէն անոր պէս, որն  
 որ թէ էւ անհնչիւն մնացած է, տակաւին շփտը  
 կը բորբոքէ, ճն ինչպէս ամենակարողութիւնը սիրոյ  
 մէջ ընկղմեալ է, դու ճ մեծդ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ,  
 Հրեշտակաց Հայրը, բայց մարդոց բարեկամն էս,  
 Յակոբի նման ամենէն փոքրիկը կը սիրես, դու որ  
 զայն փրկեցիր, խլէ մխացող շանքը բոցերուն մե-  
 ջէն, էւ մարէ զայն քու արեամբդ, ինչպէս դու  
 կը հաճիս մեր առատ նեղութիւններով զմեզ հա-  
 ռաջել տալ մեր երախտագիտութեան ներքէն, խիստ  
 մեծ ծնանելու՝ շնորհք առնելու էւ ջնջուելու, ամ-  
 բաստանելու, էւ հեռացընելու ամեն դարձուածքը,  
 առատ սիրոյն սքանչելի բարձրութեանը սառառ-  
 նելու, էւ անձկալի գովաբանութիւնը հեռաւոր հո-  
 վիտ մը տանելու. քու իրաւունքդ զքեզ խիստ կը  
 զրկէ արդարութենէդ, էւ սրբապիղծ են բոյոր ամե-  
 նավսեմ երգերը, բայց քանի որ մերկ կամքը քու  
 ժպիտդ կը գրաւէ սա անվճար շիրիմին տակ, էւ  
 ապառնի կեանքը կը ներդաշնակէ իմ տաղս (այն  
 ամենաազնիւ երկնից երգը), ալ յաւիտեան անշի-  
 րիմ կը մնայ իմ մահուան երկիւղս ու ամեն վա-  
 խերը, էւ ամեն ջարեաց սոսկումներուն վրայ մի-  
 այն կը խոժոռիմ:

Ո՞վ է ան որ կը տեսնեմ որ հեռուէն հանդար-  
 տութեամբ կը ծիծաղի: Ծիծաղիլը աշխատանք մըն



է, Եւ կրնայ իրենց հանգիստը աւրել: Ո՛ր դուք խա-  
ղաղեայներ երկնից հպատակ՝ զուարթ, էւ փափուկ  
նուերներով պերճացեայ, ան որ ճեր սրտերուն մեջ  
անբռնի փափկութեամբ կ'իշխե, կը զարշի մի սաստ-  
կութենէն, ան յիրաւի կը վարանի՝ բայց օրհնու-  
թեանց համար. մի կուռիք երկնից դեմ. կը կար-  
ծէք մի թե իմ երգս խիստ պղտոր է. խիստ ջերմ.  
կիրքերը հոգւոյ համար հեթանոսական բաներն են,  
դատողութիւնը միայն մկրտեան է, էւ ձեռնադրեան՝  
սուրբ բաներուն դպչելու համար. ան աւելի ջերմը  
կայ, յանցանքը իմ Եռանդս կը սաստեցընե, էւ ծե-  
րութիւնը կը քմրեցընե իմ գօրութիւնս. ճի աւելի  
խոնարհ սիրտ մը էւ աւելի վսեմ երգ մը երգէի:

Ով դու իմ խիստ վիրաւորած ենթակաս, այդ  
փափուկ աչքով՝ որն որ դատեայ Սաղիմը հալեցուց,  
բարեհաճէ նայիլ իմ կուրծքիս ցրտութեանը վրայ,  
էւ ներէ իմ տաղիս ձմեռներուն:

Ո՛ր պաղ-սիրտ էւ սառուցեայ արուեստասերք,  
այսպիսի բնաբանի մը վրայ ամբարշտութիւն է  
հանդարտ մնայը. հոս բորբոքիլ հարկ է, բնութիւն-  
նիս փոխելու եմք. ինչ միթէ Նրկինք որ մեզի Ե-  
ռանդ տուած, էւ ինքզիկնք այսպէս գօրութեամբ  
մարդուս յայտնած է, զմեզ ջի պիտի արհամարհե:

Ի՞նչ մեղմ էւ մեղմացուցիչ դեղեր Աստուածա-  
բանութեան մեջ կը ներկայացընեն բազմական ա-

ուսարհնութեան փափուկ բժիշկները. բարեպաշտութեան արձակաբանութիւնը եւ տկար բարեմասնութիւնը կրնան մի անոյշ եռանդ մը յառաջ բերել բոցաւորեայ բուրումեն. բարեպաշտութիւնը երբ գաղջ է՝ անբարեպաշտութիւն է. բայց երբ կը հըրահրի, ջերմութիւնը կ'ազդէ երկնից: Որուն ոսկեղէն քնարները կը ներդաշնակին մարդկային սըրտերու, եւ բարձր երկնից երածշտաց կայարանը մարդու «ամեն» կը ներբողեն:

Կը լսեմ ես, կամ բէ լսել կ'երագեմ անոնց հեռաւոր տաղը. ո՞ն ինչ քաղցր է հոգին. երկնից զօրաւոր բերկրութիւնը բարեպաշտութեան բիւրեղանման բեւերուն վրայ փափկութեամբ կը շարժի տիեզերաց ընդարձակ սահմանին մէջ եւ ինչո՞ւ, զիս սա սեւամաղձոտ մրութեան մէջ զուարթացընելո՞ւ համար. Ա՛հ Երբ արդէօք մահը (այ անխայթոց է) մտերմաբար զիս պիտի տանի Աստուծոյ փառաբանիչներուն պարին մէջ. Ա՛հ Երբ արդէօք մահը սա խարխուլ հին փլփլած պատը պիտի կործանէ, եւ շնորհէ ամեն եակաց մէկ բնութիւն մէկ կայան. Ա՛հ երկնային մահ. այն ըզմեզ երկնից կուտայ. մեծ ապագայ, անցեալին եւ ներկային փառաւոր ժառանգաւոր, Երբ ես քու նշխարաց տուփոյ պիտի յարգեմ, բնութեան անսահման ընդարձակութեան անսահման երանու-

թեանց երկրին մեջ, որմէ սա կենաց փոքրիկ կըղ-  
զին, սա բանտարգէալ սահմանը գմեզ կը բաժնէ,  
որքանն բարեբաստիկ է այն օրը որ մեր շղթանե-  
րը պիտի կոտրէ, գմեզ ազատէ, և գմեզ պիտի  
կանչէ սա տարագիր բնակութենէն, և պիտի ա-  
ռաջնորդէ գմեզ բնութեան հոյակապ Մայրաքաղա-  
քին, և գմեզ մեր մեծ եղբայրներուն առաջնոր-  
դութեամբը պիտի ներկայացընէ մեր Հօրը արթուն  
առջեւ, որ կը լսէ մեր փաստերը և իւր վերքին  
պատճառաւ մարդուս այն փափուկ անունը կը շը-  
նորհէ, «անա այս է որ քրիստոնէին յաղթութիւն  
կուտայ օրէնքին մեջ, անա այս է որ իմաստունը  
կ'ուրախացընէ պարտականութեան մեջ. արդ ամ-  
բարշտութիւն է աղէկ մարդուն տխուր ըլլալը»:

Արդ կը տեսնէս Լորենցիօ, հար ես մեր ամեն  
յոյսերը, Խաչին դպչելովը կ'ապրինք, այն դպչու-  
մբ որ Հրեշտակները ջի գգացին, այսպէս դպչումեն  
այ անելի Երկնային է որ խառնակութիւնը մեա-  
կերպեց, և մթութիւնը լուսափայլեց, այս մասնա-  
ւոր դպչում մըն է, անճառելի և գերագոյն յարա-  
բերութիւն մը, մարդուս նուիրեալ և նախապա-  
տիւ ընդճանուր հրաշից ոսկեղէն շղթային մեջ, որ  
մշտատես կը հոսի յերկնից, և կը ներկայացընէ մէկ  
փառաւոր և սքանչելի տեսիլ մը, բնութիւնը քու  
բարօրութիւնդ է, և Աստուծոյդ համբաւը. այն

դպչումը որ ականակիտի նման կը փայլի՝ հիւանդ հոգին կ'առողջացընէ, յանցանքէն ցաւը կ'արտաքսէ, մահուան մէջ կեանք կը վարէ, Երկիրս Երկնից կը փոխէ, Երկնային զահուց կը փոխէ սա աղտեղի գերեզմանը: Կը հարցընէս՝ Էբբ, ան ժամանակը՝ Էբբ Մեռնողը գայ, եւ նրջափ փոխուած պիտի գայ. ուր է արդ թշուառութեան մարդը, փառաց արհաւիրքին մէջ ջնատուածութիւնը կը բռնկի եւ իւր բոլոր ապարանքը, սպառելով իւր բակարքին մէջ ունայնութեանց այլեկոծութեամբը, սոսկալի լռութիւն մը կը տիրէ Երկնից մէջ, եւ պարապութիւն, բայց շուտ կը լեցուի. բազմութեամբ եւ յաղթութեան ձայներով, նոր հրեշտակաց շողշողուն պարով, որք գերեզմանոցէն Ելած են. միքէ այս երեւակայութեամբ հեռացեալ է, եւ մութ տարակոյսներ կը յարուցանէ խոստման եւ կատարման մէջ, եւ քեզի քու բժշկութեանդ համար մատեաններ չեմ խրկեր, բնութիւնը կարդն, բնութիւնը ճշմարտութեան բարեկամն է, բնութիւնը Քրիստոնեական է, ան մարդկային ցեղին կը քարոզէ, եւ կը հրամայէ մահուան՝ փութով հոգ տանիլ մեզի մեր դաւանութեանը մէջ: Երբէք դու չես նկատած գիսաւորին բոցաւոր բռնէլը, այս փառաւոր օտարականը անցնելու ժամանակը հիացող Ազանց սոսկում կը փռէ իւր կրակոտ եւ

առակալի երկայն ազիէն եթերին խորութեանը մեջ իւր համատարած շրջանը ընելով, սա Արեգակ-ճային փառքէն հեռու անհուն աշխարհներէ անցնելով, անտարակոյս երկնից ընդարձակ հրուանդանը կը շրջի, եւ դարձեալ երկրիս կուգայ, անալստապէս պիտի գայ Այն՝ որ անգամ մը երկրիս վերայ էր, հագարաւոր տարիներճանապարհորդելով, Այն որ գիսաւորին հրամայած է հրահրիլ, եւ Որով մեր բոլոր յաղթանակը 'ի գերեզման պիտի իյնայ: Բնութիւնը համբ է այս ամենակարեւոր կետին վրայ, կամ անստոյգ յոյսը միայն փսփսուք մըն է, բայց հաւատքը բարձր էւ որոշեալ կը խօսի, իժեքըն անգամ կը լսեն, արդ դարձիր՝ եւ դարձեալ մտիր մբութեան մեջ. հաւատքը կամուրջ մը կը հաստատէ մահուան տարտարօսին վրայ, վերցընելու այն տհաճութիւնը, ուրկէ կոյր բնութիւնը ջի կրնար խոյս տալ, եւ կ'առաջնորդէ խորհուրդը քաղցրութեամբ մէկ աւելի հեռու. եզր մը. մահուան երկիւղալից լեռները հաւատքը կը վերցընէ, հաւատքն է որ սատակիջը կենագութիւն կընէ, եւ կ'ազատէ անմեղ գերեզմանը ամեն աղմկալից վիճակներէն:

Ինչն. ջի հաւատալ, Լորէնցիօ, դատողութիւնը կը հրամայէ, ամենաարբագան դատողութիւնը. գինքը միշտ նուիրական ճանջցիր՝ եւ ասանկով քու

բոցիդ մեջ ոսոխի ջի պիտի կարօտիս. սրբազնագոյն դատողութիւն, ամենուն ծագումը եւ հոգին, արժանի ես դու գովաբանութեան քե այս երկրիս վրայ, քե վերին աշխարհի մեջ. իմ սիրտս քուկդ ե, անոր ամենէն ներքին խոռոչներուն մեջ դու յաւիտեան բնակե, երկութեն այ սիրելի ես դու, միքե ես օրհնեալ Խաչը դրոշմեալ բարեբաղդութեամբ, կրող բնութեան վրայ խորհուրդս դեռ ջի ծնած կը վերցընեմ, իմ ծննդեանս կոյր կեղծաւորեալ բարեպաշտութիւնը հրահրուելով տեսական նախանձով, ոջ, դատողութիւնը զիս մկրտեց երբ ջափահաս եղայ, կշուելով ճշմարիտն ու կեղծը իւր անվրիպելի կշիռին մեջ, իմ սիրտս գլխուս հաստացեալը եղաւ, եւ ասանկով իմ ճակատագիրս եղածը որոշեց. «մեկ առաջարկութեամբ մը միայն իմ հաստոքս շինուած է». հետամտեալ դատողութիւնը հաստոք է, եւ անհետամուտ կը մնայ երբ ապացոյցը կը հրաւիրե, եւ այն ատենը այ ան դատողութիւն ջե, եւ այսպէս մեր ապացոյցը կամ մեր հաստոքը ճշմարիտ է. երբ դատողութիւնը կը ստե, եւ երկինք գայն անիրաւ կը դատեմենք այս սկզբունքը կը մերժենք մի, ինչ է ուրեմըն հայհոյութիւնը:

Ինչպէս որ կը սիրեմք արդարեւ իրաւամբ, հաստոքը, նոյնպէս այ դատողութեան նկատումն

պետք է շնորհենք, սիրելի աղջկանը նման մայրն  
 ալ կը յարգուի, դատողութիւնը արմատն է, եւ  
 հաւատքը անոր սիրուն ծաղիկը, վաղանցիկ ծա-  
 ղիկը պիտի մեռնի, բայց դատողութիւնը կ'ապրի,  
 երկնից մեջ իւր հօրը նման անմահ է այն, երբ  
 հաւատքը առաքինութիւնն է, դատողութիւնն է  
 գայն այնպէս ընողը. Քրիստոնէութիւնը մի անի-  
 րաւեր, դատողութիւնը քեզի մի սեպհականեր. դա-  
 տողութիւնը մեր մեծ Տիրոջը սիրելի է, դատո-  
 ղութիւնն է որ Անոր բարկութիւնը կ'իջեցընէ, դա-  
 տողութեան ձայնին հնազանդութիւնն է որ իւր  
 պսակը կը փառասորէ. Անիկայ կորսուած դա-  
 տողութեան կէանք տայու համար բուն իրենը վար-  
 քափեց, հաւատա, եւ մարդուս դատողութիւնը նը-  
 կատէ, հաւատա, եւ Աստուծոյ հանութիւնը ճա-  
 շակէ, հաւատա՛ եւ արիաբար նայի գերեզմանին  
 վրայ, դատողութեան վերքովը միայն կրնայ բու-  
 հաւատքդ մեռնիլ, որ մեռնելով տասնապատիկ  
 սոսկում կուտայ մահուան, եւ իւր կրկին մահա-  
 ցու խայրոցը կը խօքէ բոյնին մեջ. ուսիր արդ  
 ինչ պատիւ. ինչ բարձր երգք յաղթութեան կը շնոր-  
 հուի ամեն անոնց, որոնք մեր դէղրափը մէկ կողմ  
 կ'առնեն. սա դատողութեան է մարդկանց ժպիրն  
 բարեկամները, որոնց մահկանացու սերը ամեն ու-  
 թախութիւն կը խոցեն, եւ մահուան գարնուրելի եր-

կիւղը սրտերնուն վրայ կը ձգեն, դատողութեան այս զարդարուն գաւկները կը պաշտուին, եւ միանգամայն կ'արհամարհուին, դատողութեան մեռնելով անոնք հին միապետներուն նման կը գովաբանուին, ինչ վարմունք կրնայ անոնց այտերուն վրայ հպարտ դափնի հաստատել. քանի որ ճշմարտութեան սերը իրենց բանակին մէջ կրկին կը հնչուի, անոնք հպարտութեան վարագոյրը միջօրեական ճառագայթից դեմ կը քաշեն, անոնք իրենց կարճ դատողութիւնը փիլիսոփայական խաբէութեան վրայ կը հաստատեն, որ կը կոչուի փաստ, եւ հրճուելով իրենց բուրգին կ'աղաղակեն. « Ահա Արեգակը » եւ հնդիկներու պէս զայն կը պաշտեն, բայց երբեք բարոյականութեան վրայ կը խօսին մի, ո՞ր Դու արիւնահոսդ Սեր մարդկային ցեղին համար նոր բարոյական ստեղծող, մեծ բարոյականութիւնը քու վրադ սեր ունենայն է, երբ անոնք Սոկրատի ջափ իմաստուն ըլլային (անոնք չի պիտի ոչ այ նուաճէին այն գերագոյն նորոգութեանը) Սոկրատի ջափ անշուշտ ներկայ յիմարութեան սահմանը պիտի մերժէին :

Քրիստոնէութիւնը նախապատիւ մարդկութիւնն է, եւ կայ արդեօք մեկը որ օրհնեալ Խաչը իւր անպատիւ այտերուն վրայէն իբրեւ արատ մեկդի ընէ. երբ հրեշտակները կը զարհուրին՝ ան այ



այս տեսիլէն է, անոնք կը բողոսն բշտաւը, իրենց հսկողութենէն դադարելով վշտով կամ գարմացմամբ հարուածուելով, ո՞վ կրնայ պատմել:

Ո՞ մտքի գերիներ, ո՞ Աշխարհի քաղաքացիներ, (վասն զի այսպէս Քրիստոնէութեան դրօշակները կը ծածանին) գիտէք մի որչափ իմաստութիւն է ձեր ընտրութիւնը, եւ որչափ մեծ ձեր շահը, անա էրկրիս գերերջանիկ մարդուն պատկերը:

«Ան իւր ուզածը կը կանչէ, կուգայ ան, ետ կը խրկէ ուրիշ մը կը կանչէ, ան այ կը հասնի սիրով գայն կ'ընդունի, բայց տակաւին կը կանչէ, մինչէն որ մեկը զինքը կանչէ . . . . .  
ան որ իւր կոչման մեջ գանազանութիւն չունի, եւ գայն մքութեան մեջ կը բանտարկէ. մինչէն որ բնութիւնը մեռնի, եւ դատաստանը անոր ազատութիւն տայ, մեկ ազատութիւն մը որ իւր շղթաներէն շատ պակաս ընդունելի է» բայց մարդու երջանկութիւն շնորհէ, երկար երջանկութիւն, իւր կենաց ամեն երջանկութեանը վրայ աւելցուր իւր վերջին ժամը, ան ժամը, որ հեռու կ'երեւնայ շոյտ է իւր հասնելուն մեջ. ան սուրհանդակի նման սրարշաւ. կուգայ: Կկոցը (ոստայնակաց) ճրքան շուտ կը բռի եւ կ'ոստայնակէ քու պատանքդ. ո՞ր է քու անցեալ տարիներուդ սրտութիւնը, ժամանակին անդունդին մեջ նետուած

Են այնչափ հեռու քեզմէ՝ որպէս թէ բնաւ քուկղ  
 չէին, ձեռքի մեջ գտնուած օրը, բռնունի մը նման  
 արձակուելու կ'աշխատի. երբ կ'արձակուի հազիւ  
 կրնանք խորհիլ թէ զայն ունեինք, այն շուտ է. ան-  
 դադար կը բռնի: Մահը հասնելու վրայ է՝ որչափ որ  
 սրնբաց, նոյնչափ ալ մեծ քայլերով. ամեն բան յա-  
 իտենականութիւն է, բայց որոն է յաւիտենակա-  
 նութիւնը, ո՞վ պիտի հոն յաղթանակէ յաւիտենական  
 երջանկութեան մկրտարանին մեջ լուսացուելով,  
 յաւիտեան ջերմանալով Աստուածութեան մեջ, ո՞վ  
 Լորենցիօ ո՞վ, — քու խիղճդ բող պատասխանէ: Ո՞ն  
 ճգէ զայն որ խօսի. ան օր մը առանց քու ճգե-  
 լուդ յարատեւ պիտի խօսի, Լորենցիօ հիմա լուհ  
 անոր՝ քանի որ անոր խրատները օգտակար են է-  
 տրոփները մեզմ. մեծ հրամանով երկնային օրեն-  
 քը լուհ. ճշմարտութիւնը կ'աւանդուի մարդուս վեր-  
 ջին ժամուն հետ, մէկ անկէդծ ժամ մըն է ան է-  
 հաւատարիմ անոնց որք իրեն կ'ապաւինին, ճշ-  
 մարտութիւնը Աստուածութեան ամենէն մեծ դուս-  
 տըրն է, ճշմարտութիւնը անոր խորհրդակիցն էր  
 երբ Աշխարհս ստեղծեց, է. ոչ անկից պակաս.  
 երբ ան պիտի դատէ իւր ստեղծած Աշխարհը, եր-  
 կայն լուսութեան մեջ թէ է. խիստ ծանր կը ննջէ,  
 սոսկումներէ տանջուելով, է. սնոտի երեւոյթնե-  
 րով նեղուելով, երբ երկնից որոշեալ ժամը զայն

կը կանչէ, իւր հոգւոց անդունդին միջագաւիթէն,  
անոր նման անոնք Նտնաին տակը պիտի ծածկէն  
իրէնց խաբէութիւնը, այս Աստուածունիին դուրս  
պիտի ելլէ որոտումով եւ կրակով. պիտի ապա-  
ցուցանէ բարձր ճայնով. եւ զարհուրելի ցաւ տա-  
լով. Խաւար սատանաները ես կը թողում, եւ կըրկ-  
նակի խայթոցները. պայծառ ճշմարտութեան ղը-  
ժընդակ ճօճումը ալ դժոխք է, ճիշդ որոշուած. ո՛ր  
խուլք ճշմարտութեան, թէ եւ դպրոցաց մէջ չէր  
ուսած, կարդացէք այս եկեղեցական երեսը, եւ  
ապաւինեցէք անոր իբր մարգարէի մը եւ քահա-  
նայի մը. «մարդիկ կրնան յիմար ապրիլ, բայց յի-  
մար մեռնիլ անոնք չեն կրնար»:





75











